ԱՇՈՒՂ
ՅԱՐԹՈՒՆ ՕՂԼԻ

Նկարիչ Գ. Ա.

1948 Երևան.

կարեց յայտնի նկարիչ
ՐԳԱՐ Ղարաբէգեան).

Գիրքը դարձի է

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

891.99
Ե-79

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԱՇՈՒՂ ՅԱՐԹՈՒՆ ՕՂԼԻ

Ա 27405

ՓՇՐԱՆՔՆԵՐ
ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

1946
ՏՊԱՐԱՆ «ՄՈԴԵՐՆ», ԹԵՀՐԱՆ.

Այս գրքի հրատարակութիւնը սիրով յանձն առեց Աշուղ Յարութեան օղու տոհմից գրասէր պ. ԿԱՐՕ ԱՇՈՒՂԵԱՆԸ, որին հրապարակով յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնները։

Ա. ԵՐԵՄԵԱՆ

ԱՇՈՒՂ ՅԱՐԹՈՒՆ ՕՂԼԻ

(ՆՐԱ ԾՆՆԴԵԱՆ 185-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

1760—1840

I

ԱՇՈՒՂԸ

Իրանահայ աշուղների մէջ ամենատաղանդաւորն է Յարթուն օղլին, որ իր ինքնատիպ ստեղծագործութիւններով մի ուրոյն էջ է գրաւում հայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ։

Նա մէկն է իր ժամանակի այն լաւագոյն աշուղներից, որ մտաւորապէս աւելի բարձր կանգնած լինելով իրեն շրջապատող հասարակութիւնից, իր չօնգուրի լարերով և ինքնուրոյն երգերով կարողացել է ուշագրաւ դեր կատարել իր ապրած միջավայրում և յարգանք ու համակրանք վայելել։ Չնայած այդ հանգամանքին, նա անծանօթ է մնացել հայ բանահիւսութեան և բանասիրական աշխարհին։ Նրան ճանաչել են միայն իր շրջապատում և հարևան գաւառներում։ Դրանից դուրս, հայութեան միւս շրջաններին, նա մնացել է անյայտ։ Նոյն վիճակին են ենթարկւել և նրա երգերը։ Նրա մահից ութսուն մէկ երկար ու ձիգ տարիներ յետոյ միայն այդ երգերն արժանացել են տպագրութեան, իսկ նրանցից և ոչ մէկն երգչի կենդանութեան օրով լոյս չի տեսել։

Նոյն ճակատագիրն են ունեցել հայ միջնադարեան երգիչներն ու տաղերգուները — Գրիգորիս Աղթամարցի, Մկրտիչ Նաղաշ, Նահապետ Քուչակ, Ղազար Սեբաստացի, Նաղաշ Յովնաթան և ուրիշներ։ Նրանց երգերն էլ ձիգ տարիներ մնացել են անյայտութեան խաւարի մէջ, փոշիների ներքոյ և իրենց ապրած շրջանում չեն հրատարակւել։

Յարթուն օղլու անյայտ մնացած երգերն առաջին անգամ լույս ընծայեցինք 1921 թվին, Նոր-Զուղայում, «Աշուղ Յարթուն օղլի», Ա. փշրանքներ աշուղական գրականության մասին խորագիրը կրող մի փոքրիկ տետրակով։ Այդ թվականից նա անցավ աշուղական գրականության պատմության մեջ։ Նա կենդանացավ ժողովրդի հոգում և էլ չի մոռացվի։

Այդ ժամանակվանից անցել են ուղիղ քսան և հինգ տարիներ, որի ընթացքում աշուղի մասին ձեռք բերինք կենսագրական նորանոր նյութեր և փաստական նոր տվյալներ, որոնք ավելի հարստացան, երբ 1921 և 1945 թվականներին Սպահանի Զարմահալ գավառի հայ գիւղացիների ազգագրությունն ու սոցիալական դրությունն ուսումնասիրելու նպատակով շրջեցինք հայաբնակ գիւղերը։

Այսօր, երբ լրանում է աշուղի ծննդեան 185-ամեակը, պարտք ենք համարում նրա կեանքի գլխավոր էջերը և պոէզիայի հիմնական գծերը մի նոր ուսումնասիրությամբ ծանօթացնել հայ բանասիրական աշխարհին։ Նշենք և այն, որ երգչի ստեղծագործությունները իր սիրոյ ու հոգեկան ապրումների, այլ և ժամանակակից կեանքի երգերն են։ Այնտեղ աշուղն արտայայտել է այն, ինչ որ խորապէս զգացել է և ապրել։ Այդ է պատճառը, որ նրա ոտանավորները անկեղծ են, զգայուն և հարազատ, երգեր, որոնք բղխում են ոչ միայն երգչի հոգուց, այլ և իր ժամանակի սիրող երիտասարդության հոգեկան աշխարհից։ Նրանք խօսում են բոլոր սիրող սրտերի հետ և արտայայտում նրանց զգացումները ու յոյզերը, որով ունեն մեծագույն արժէք։ Այդտեղ էլ կայանում է աշուղի լիրիկական երգերի գեղարվեստական արժանիքը։

Այդ երգերով էլ այսօր երգիչն առանձնայատուկ և ուրոյն տեղ է գրավում իրանահայ աշուղների մեջ։ Ութսուն երկար տարիների ընթացքում դեռ հրապարակ չի եկել պարսկահայ մի այլ աշուղ, որ գերազանցէր նրա պոէզիային։ Ահա և նրա ժողովրդական արժէքը։

—Շատ աշուղներ ենք ունեցել, պարոն Արամ,— ասում էին գիւղի ծերունիները,— բայց մինչև օրս էլ Յարթուն օղլու նմանը

չենք ունեցել։ Նրա չօնգուրը շատ անուշ էր, նրա գիրն ուրիշ էր։ Մենք հպարտ ենք նրանով։

Եւ այսօր փաստն այն է, որ աշուղն ապրում է գիւղացիների հոգիներում և ապրեցնում նրանց իր հոգու կրակով։

II

ՄԻՋԱՎԱՅՐԸ

Լուսաբանենք այժմ, թէ Ճարթուն օղլու երգերն ինչպիսի միջավայրում են յօրինուել։

Աշուղը սնուել և մեծացել է գլխաւորապէս Սպահանի Զարմահալ գաւառում։ Դա Իրանա-Հնդկաստանի թեմի հայաշատ և կարևոր գաւառներից մէկն է, ուր այսօր ապրում են մօտաւորապէս 3500 հայ աշխատաւոր գիւղացիներ։ Դրանք բեկորներն են այն մեծ և բռնի գաղթի, որ տեղի ունեցաւ 17-րդ դարում, 1606 թ-ին, Շահ-Աբբասի ձեռքով։ Մօտ երեք ու կէս դար է, որ նրանք կենտրոնացել են Իրանի հողի վրայ և իրենց հալալ աշխատանքով զարկ տուել գաւառի գիւղատնտեսութեանը։ Սակայն, չնայած այդ հանգամանքին, նրանք մնտեսապէս միշտ էլ ապրել և ապրում են ողբերգական պայմաններում։ Եւ դա հասկանալի պատճառով։ Զարմահալն Իրանի այն խուլ, յետ ընկած գաւառներից մէկն է, ուր անփոփոխ ծանրացել է դարերի դժբախտ իրականութիւնը։ Այնտեղ դեռ կալւածատէր ինքնիշխան խաներն ու արքաներն են իշխում իրենց սանձարձակ բռնակալական ճնշումներով, մի գաւառ, ուր ոչ մի հաստատուն օրէնք չկայ, ուր բացակայում է արդարութիւնն ու խիղճը, ուր կեղեքումներն ու հարստահարութիւնները սովորական երևոյթներ են։ Այդ անմխիթար դրութիւնը պիտի բացատրել նրանով, որ գիւղերի հողերը բաժանուած են մեծ ու փոքր կալւածատէրերի միջև*), որոնք իրենց գիւղերում տէր ու տնօրէն են և թէև չեն մասնակցում հողագործական աշխատանքներին, չեն արտադրում,

---

*) Խոշոր գիւղատէրերից մէկն է Մորթեզաղուլի խան Բախտիարցին, որ ունի 120 գիւղ։ Ա. Ե.

բայց փառաւոր ապրում են։ Նոյնիսկ նրանք չեն կազմակերպում գիւղատնտեսական աշխատանքները։ Ամենաշատը շրջում են գիւղերը, տեսնում իրենց կալածները և կապալով տալիս գիւղերի ցանքն ամենաթանկ գնողներին։ Նրանք էլ գիւղացիներից ստանում են բերքի արդիւնքի $^1/_3$ մասը, միաժամանակ շահագործում են և կողոպտում։ Շատ բնական է, որ նման հանգամանքներում գիւղացիները չպիտի կարողանան վայելել իրենց դառն քրտինքի արդիւնքը։ Այդպէս են ապրել նրանք մօտ երեք ու կէս դար։ Եւ մինչև այսօր էլ դեռ հեծում են նոյն միջնադարեան ճորտական կարգերի, կամայական ծանր հարկերի և տնտեսական ճնշող ու քայքայիչ պայմանների մէջ։ Նրանք աշխատում են, աքնում, արտադրում, բայց դարձեալ քաղցած են, կիսամերկ, որովհետև տէրը չեն իրենց իրաւունքին ու աշխատանքին. նրանք ճորտեր, ստրուկ-ռայեաներ են։ Այդպէս են վճռել նրանց ճակատագիրը գիւղական հարիւրաւոր կալածատէրերը, որոնք օրէց օր արիւնաքամ են անում գիւղացիներին։

Բայց պատկերը սրանով չի վերջանում։

Հողի մշակների կեանքը դառնացնում են նաև աւագակային հարստահարութիւնները, որոնք այնքան սովորական երևոյթ են այս դժբախտ գաւառում*)։ Էլ չենք նշում այն կռիւները, որ երբեմն տեղի են ունենում կառավարական իշխանութեան և ապստամբ կալածատէր խաների միջև. պատահում է նաև, որ խաները միմեանց դէմ են գինւում։ Ֆէօդալական այդ ընդհանուր դրութիւնը՝ հողատէրերի կամայականութիւնները, խաների ներքին խռովութիւններն ու ապստամբութիւնները և աւազակային կողոպուտներն անդրադառնում են աշխատաւոր գիւղացիութեան տնտեսութեան վրայ։ Դրութիւնն էլ աւելի է ծանրանում, երբ գիւղերից երիտասարդնե-

*) 1945 թ. Օգոստոսին, երբ Արաղանի «Ուսումնասիրաց» Միութեան կենտր. Վարչութեան յանձնարարութեամբ, կազմում էինք Զարմահալի ազգագրութիւնը, Հաջիարաղ գիւղում ականատես եղանք մի սքանչելի պատկերի։ Զինուած աւազակները գիւղի արօտատեղից, երեկոյեան ժամը 6-ին, տարան գիւղացիների 60 ոչխարներն ու այծերը։ Ա. Ե.

ին տանում են պետութեան համար պարտադիր զինուորական ծառայութեան։ Այս բոլորի վրայ աւելացնենք և այն թանձր խաւարն ու տգիտութիւնը, որ իշխում են բոլոր գիւղերում։ Ամբողջ գաւառում չեն եղել և մինչև օրս էլ դեռ չկան օրինակելի կանոնաւոր դպրոցներ, որոնք նպաստէին գիւղացիների մտաւոր, բարոյական դաստիարակութեանը։ Ֆուլտուրապէս քարացած այդ միջավայրում գիւղացիները մացել են յետամնաց վիճակում, տգէտ ու անուս, թաղուած նախապաշարումների և անշարժութեան մէջ։ Ահա նման խաւար միջավայրի ու շրջապատի մէջ է սնուել ու մեծացել Ցարթուն օղլին։ Այդտեղ էլ յօրինել է նա իր երգերի մեծ մասը։

III

ԿԵԱՆՔԸ

Ցարթուն օղլու աշուղական արժէքը և կատարած դերը լաւ ճանաչելու համար անհրաժեշտ է թերթել նրա կեանքի պատմութեան էջերը։ Անհրաժեշտ է ծանօթանալ նրա կենսագրութեան հիմնական գծերի և հասարակական այն պայմանների հետ, որոնց մէջ նա սնուել է ու զարգացել և ուր կազմակերպուել է նրա աշուղական ձիրքը։

Աշուղի մասին կենսագրական հարուստ նիւթեր, տարաբախտաբար, պակասում են։ Այժմ նրա սերնդից Մամուքա գիւղում ապրում է միայն ծոռը՝ Ցարութիւն Աշուղեանը, որ իր պապի չօնգուրի վրայ նուագում է նրա յօրինած հայերէն և թրքերէն երգերը, բայց երգչի կեանքից ոչինչ չի յիշում, իսկ եղբօրորդին, որ 1919 թուականին արդէն 85 տարեկան մի ծերունի էր, հաղորդեց մեզ կենսագրական մի քանի հարևանցի տեղեկութիւններ, որոնք, սակայն, դարձեալ չեն պարզում երգչի կեանքի գոնէ ընորոշ գծերը։ Նոյնպէս որոշ նիւթեր քաղեցինք գիւղի ծերունիներից։ Այդ տեղեկների մէջ կան և վիպական տարրեր, որոնք առարկայական քիչ արժէք ունեն, սակայն և այնպէս նրանց էլ յիշատակում ենք, ամբողջացնելու համար աշուղի կեանքի պատկերը։ Բանանք այդ էջերը։

Յարթուն օղլին (Յովհաննէս Յարութիւնեանը) ծնուել է Իրանի Սպահան նահանգի Զարմահալ գաւառի Ասադաբադ գիւղում, մօտաւորապէս 1760 թուականին*), մի հասարակ շինականի ընտանիքում, իսկ մեծացել է նոյն գաւառի Ահմադաբադ գիւղում։ Նրա հայրը, որ եղել է հողագործ, քրտնաջան վաստակով հայթհայթել է իր ընտանիքի ապրուստը։ Աշխատասէր մայրը, նման բոլոր հայ գեղջկուհիների, օգնել է իր ամուսնու երկրագործական աշխատանքներին։ Թէ ծնողներն ինչպիսի ազդեցութիւն են ունեցել երգչի հոգեկան աշխարհի վրայ և թէ ընտանիքում ինչպէս է անցել նրա մանկութեան շրջանը և ինչ տեսակ տպաւորութիւններ է կրել նա այդ շրջապատից, դժբախտաբար, տեղեկութիւններ պակասում են։ Այսքանը միայն պարզ երևում է, որ նա իր սոցիալական ծագումով ու դրութեամբ եղել է ժողովրդի չքաւոր դասից և իր պատանեկան օրերի մեծ մասն անց է կացրել աշխատանքի դաշտում։ Նա իր ծնողների հետ գնացել է հանդը և օգնել նրանց վար ու ցանքի մէջ։ Գիւղական աշխատանքների ժամանակ նա համարեա միշտ եղել է բնութեան ծոցում, ուր անվերջ դիտել է կապուտակ երկինքը, արևի ոսկէ շողերի հետ համբուրուող արծաթ ջրերը, լողացող ամպերը, որոտը, կայծակը, վերջալոյսի նուրբ երանգները, աստղազարդ կամարում սահող լուսինը, դիտել է գոյն-գոյն ծաղիկներով զարդարուն կանաչ սարերը, լսել է կարկաչահոս աղբիւրների և քաղցրախօս թռչունների հաւերգը։ Բնութեան այդ գեղեցիկ նկարները խոր տպաւորութիւն են թողել նրա մատաղ հոգու վրայ։ Այդ ազդեցութեան արձագանքը նկատելի է նրա որոշ երգերի մէջ։ Յատկապէս նրա սիրային և այլաբանական երգերն այդ միջավայրի ազդեցութեան դրոշմն են կրում։ Նա իր եարի գովասանքն անելիս՝ յաճախ օգտուել է բնութեան պատկերներից, իսկ նրա դէմքը նկարել է այսպիսի գոյներով.

---

*) Երգիչ Տէր-Կարապետ Օհանեանի «Դավթար»-ում արձանագրուած աշուղի մահուան 1840 թիւը սրբագրում է նրա ծննդեան նախկին 1789 թուականը։
Ա. Ե.

«Վարթ երեսդ բաղը ա էլել,
Թամամված լոյսնիակի պէս».

Կամ հետևեալ երկտողը, ուր այնքան գեղեցիկ պատկերով է գծել իր եարի դիմագիծը.

«Աչքդ զուլալ, ունքդ կամար,
Լոյս երեսդ շամս ու դամար».

Իր սիրուհու գեղեցկութիւնը գծել է նաև բնութեան երփներանգ ծաղիկներով։ Ահա մի պատկեր.

«Թշերդ կարմիր վարդ...
Պոնչկնիդ բալասան ծաղիկ...
Զնաղներդ սառն անոշ աղբիւր,
Ծոցիդ մէջն ա չայիր չիման...»։

Կամ՝

«Սրտիս մէջն շիրին ջան իր,
Սուսան ու սմբուլ, ուէհան իր»։

Թէև Յարթուն օղլու ծնողների մասին հարուստ տեղեկութիւններ պակասում են, բայց երևում է, որ նրանք եղել են ուսումնասէր և գրասէր մարդիկ։ Իրենց զաւակին յանձնում են գիւղի քահանայի դաստիարակութեանը, որ ուսում ստանայ։

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ամբողջ գաւառում, ինչպէս այսօրւայ շատ խաւար գիւղերում, չկային դպրոցներ և կրթական գործը ղեկավարում էին խալիֆայական վարպետները։ Իւրաքանչիւր գիւղ ունէր իր տիրացու «գիտնական» գրագիրը կամ քահանան, որի մօտ ուսանում էին գիւղի պատանիները։ Հին, սխոլաստիկ մանկավարժութեան շրջանն էր դա, ուր սովորում էին գեղջուկ պատանիները։ Ահա նման միջավայրումն էլ աշուղը սնուում է և զարգանում։ Նրա առաջին ուսուցիչը՝ վարպետ Տէր-Յովհաննէսը, գիւղում աչքի է ընկնում իր գրագիտութեամբ և մեծ ազդեցութիւն է ունենում իր մոնթի վրայ։ Ժամանակի պահանջի համաձայն՝ նա դառնում է քահանայի հրու և հաւատարիմ աշակերտը, որպէսզի նրանից մտաւոր լոյս ստանայ։ Բայց ինչ կրթութիւն է ստանում նա իր ուսուցչի մօտ։ Քահանան նրա ձեռքը տալիս է

կարդալու Նարեկ, Աւետարան, Սաղմոս, աղօթագրքեր, եկեղեցական շարականներ։ Զարգանում է նա այդ կրօնական գրքերի ընթերցանութեամբ և կազմակերպւում նրանց ազդեցութեան ներքոյ։ Քահանայ ուսուցիչը, իբրև հոգևորական, դաստիարակում է իր սանին կրօնական ուղղութեամբ։ Այդ ազդեցութիւնը նկատւում է այսօր նրա կրօնական և բարոյական երգերի մէջ։ Սակայն, Տէր-Յովհաննէսի մօտ Յարթունը շատ երկար չի մնում. մի քանի տարուց յետոյ վերջանում է նրա ուսման շրջանը։ Այդ դպրոցից նա դուրս է գալիս մտաւոր շատ աղքատիկ պաշարով։ Այնուհետև նրա համար սկսում է ուսման մի նոր շրջան։ Դա աշուղական դպրոցն էր։ Այդ ժամանակաշրջանում Իրանը բաւական հարուստ էր աշուղներով, որոնք շրջում էին գաւառից գաւառ, գիւղից գիւղ, ժողովրդի մէջ տարածում իրենց ստեղծագործութիւնները և նրա մէջ վառ պահում աշուղական երգն ու արուեստը։ Այդ աշուղներից յայտնի էին Ամիր օղլի (1740 – 1826 թ.), Ղուլ Յովհաննէս (1740 – 1834 թ.) և ուրիշներ։ Նրանք այցելում են նաև Զարմահալ գաւառը և իրենց չօնգուրի լարերով ուրախացնում գիւղացիներին, փայլ տալով նրանց հանդէսներին ու խնջոյքներին։ Պատանի Յարթունը լայն չափով օգտւում է այդ գեղեցիկ պատեհութիւնից, որ մեծ դեր է կատարում նրա աշուղական կեանքի կազմակերպութեան գործում։ Նա աշուղների մօտ գնալով՝ ուշադրութիւն է դարձնում իւրաքանչիւր երգչի երգ ու նւագին և շնորհիւ իր ընդունակութեան՝ շուտով սովորում է աշուղութեան արուեստը։ Նա միաժամանակ անգիր է անում աշուղների երգերը։ Ծնողներն իրենց զաւակի առաջադիմութիւնը տեսնելով՝ յանձնում են նրան այդ շրջանի իրանահայ յայտնի աշուղ Ղուլ Յովհաննէսի խնամքին, որ փայլում էր իր չօնգուրով և պօէզիայով։ Նա մեծապէս ազդում է իր աշակերտի հոգու վրայ և նրա աշուղական արուեստի զարգացման գործում դնում իր դրոշմը։ Յարթունը նրա մօտ աշակերտում է մի քանի տարի, ապա իր ճարտար գրչով գերազանցում է նրան։ Սակայն, երգիչը Ղուլ Յովհաննէսի դպրոցով չի բաւականանում։ Աշուղական միջավայրը զարթեցնում է նրա հոգում ուսման մէջ խորանալու մեծ սէրը. նա

ձգտում է էլ աւելի կատարելագործել, աւելի բարձրանալ։ Այդ ձգտումը նրան դարձնում է թափառական։ Եւ նա կտրելով անգին տարածութիւններ, Նոր-Ջուղայից անցնում է Մ. Էջմիածին։ Դա մի դժուար և ծանր ճանապարհորդութիւն էր, որ կատարում է նա, տոգորուած ուսման անհուն տենչով։ Էջմիածինը, հայ ժողովրդի կրօնական զգացումների ու ապրումների այդ օջախը, ժամանակին յայտնի էր իր դպրոցով՝ ուր դիմում էին բազմաթիւ գաւառներից և գիւղերից հարիւրաւոր ուսումնածարաւ պատանիներ։ Դրանցից մէկն էր Յարթուն օղլին։ Թէ այնտեղ նա ինչքան ժամանակ է մընում և ինչպիսի կրթութիւն է ստանում, տարաբախտաբար, տեղեկութիւններ պակասում են։ Միայն իր երգերի ներքին բովանդակութիւնից, արտայայտած մտքերից ու հայեացքներից կարելի է հետեցնել, որ նա ժամանակի ոգու համապատասխան ուսում է ստանում։ Յատկապէս ծանօթանում է եկեղեցական պատմութեան և հայկական մատենագրութեան հետ։ «Օրհնութիւն հարսանեաց» երգի մէջ նա յիշատակում է թագաւորների — Կոստանդիանոսի, Տրդատի և հայ գրական-եկեղեցական մշակներից Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի, Մեծն Ներսէսի, Գրիգոր Նարեկացու, Օհան Որոտնեցու, Տաթեւացու անունները։ Այդ հանգամանքն էլ վկայում է, որ նա ուսումնասիրել է հայ գրականութեան պատմութիւնը։ Էջմիածնից նա այցելում է Վան, Վարագ և Աղթամար, ծանօթանում բնութեան գեղեցիկ տեսարանների հետ և ստանում ամենաքաղցր ու անմոռանալի տպաւորութիւններ։

Յարթուն օղլու կեանքում նշանակալից դեր է կատարում նաև Մ. Կարապետը, որ գտնւում է Տարօնում (Մշում) և հիմնել է դեռ նախաքրիստոնէական շրջանում գոյութիւն ունեցող մեհեանների տեղ։ Դա այն սրբավայրն է, որ ժողովրդական և աշուղական երգերում մեծ տեղ է բռնում։ Ահա թէ նրա մասին ինչ է գրում իր «Դավթար»-ում տաղանդաւոր աշուղ Սայեաթ-Նովան.

«Ես մրդրէսու վուրթի Արուիթնս պատուց ինչօրի եարսուն տարին, գլուխ դրի ամէնան խաղին, ամա սուրբ Կարապետի կարդութէնով սովրէցայ քամանչէն ու չօնգուրն ու ամբուրէն»։

Նոյնպէս Թիֆլիսեցի աշուղ Եաղուբ օղլին իր մի ոտանաւորի մէջ գովում է Ս. Կարապետին այսպէս.

«Ցոյս հաւատով խնդրողին կը տայ մուրատ իւր տանն,
Ամէն խորհուրդ կատարող՝ նա Մշու Սուլթանն,
Սրբոց միջին երևելի, որ չիկայ բարերարն»։

Հայ հաւատացեալ և ջերմեռանդ ժողովուրդը դարեր շարունակ զանազան քաղաքներից ու գիւղերից ուխտի է գնացել «Ս. Կարապետին», մոմեր վառել, ժատաղ կարել և բարձրացրել է կրօնական այդ սրբավայրի նշանակութիւնը։ Աւանդութիւնն ասում է, թէ ով որ հաւատով է ապաւինում սրբին, հասնում է իր մուրազին։ Ջերմ հաւատով դիմում է սրբին նաև Ցարթուն օղլին, որպէսզի աշուղական շնորհք ստանայ։ Նա գիշերը, գիւղացիների պատմելով, երազ է տեսնում։ Մի ջահել մարդ, իբր թէ Ս. Կարապետը, նրան մի բեռ եփած կորեկ է տալիս, որ տանի սարի գագաթը։ Աշուղը շալակում է կորեկը և բարձրանում սարի ծայրը։ Այդ յաջող վերելքը նշան է համարում, որ ինքը Ս. Կարապետից ստացել է աշուղական շնորհքը։ Այնուհետև նա վերադառնում է հայրենի գիւղը, ուր ժողովուրդը գիմաւորում է նրան և մեծ պատուով ընդունում իր սիրելի աշուղին։ Նա իր հայրենակիցներին, իբրև նուէր, սաղափէ խաչեր է բերում հայկական սրբավայրերից։ Դրանից յետոյ սկսում է նրա աշուղական գործունէութիւնը։ Նա ձեռք առնելով չօնգուրը, շրջում է գիւղից գիւղ, երգեր է յօրինում և մրցում գիւղական աշուղների հետ։ Շուտով է տարածւում նրա երգի ու նուագի համբաւը։ Նա աչքի է ընկնում իր աննման ձիրքով. անպատրաստից երգեր է հիւսում և զարմանք պատճառում ժողովրդին։ Իբրև աշուղ՝ նա շրջում է բազմաթիւ քաղաքներ և դէրվիշի նման թափառական կեանք վարում, ինչպէս ինքն է յիշատակում իր յօրինած «Մատանու երգի» մէջ.

«Ես Ցարթուն օղլին ամ, չասես յուրիշ ամ,
Թամամ աշխարհ ման ամ գալիս, դարվիշ ամ»։

Երգում է նա գլխաւորապէս իր անհատական ապրումներն ու յոյզերը։ Երգում է հասարակութեան կենցաղային որոշ գծերն

ու պակասութիւնները, միաժամանակ բարոյախօսում է, խրատում և այդ գծով ժողովրդին կրթում ու դաստիարակում։

IV

ԱՐՏԱՔԻՆԸ ԵՒ ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԾԵՐԸ

Մերունի գիւղացիները Ցարթուն օղլուն նկարագրում են բարձրահասակ, յաղթանդամ, սպիտակ պարթև մօրուքով, լայն թիկունքով և ուժեղ բազուկներով։ Ահա և նրա տարազը — քոլգէ գը-դակը գլխին, արխալուղով, թումբանով և կապայով, մէջքին երկար գօտի, ոտքերին կիլիվէ և չօնգուրը միշտ աբայի տակ։ Անպաճոյճ այս աշուղը, հակառակ իր ծերութեան, ունենում է քաղցր և դուրեկան ձայն, իսկ բնաւորութեամբ լինում է զգայուն, ջղային և դիւրագրգիռ։ Նրա դիւրաբորբոք բնաւորութիւնը բնորոշող փաստերից գիւղացիները գծում են մի այսպիսի պատկեր։ Մի գեղեցիկ առաւօտ նա Զարմահալ գաւառի Լիվասեան գիւղից ճանապարհւում է դէպի Մամուքա գիւղը։ Ճանապարհին տեսնում է մի խումբ գիւղացիներ, որոնք մի արտի եզրը նստած, երգում են իր յօրինած երգերը, բայց աղաւաղած ձևով։ Նա սաստիկ զայրացած ցած է գալիս իշուկի վրայից և սկսում է ոչնչացնել նրանց նոր ջրած արտը։ Երբ հարցնում են պատճառը, նա բարկացած պատասխանում է. «Դուք ինչու էք օչնչացնում իմ խաղերը, թէ սօվրում էք, խօ լաւ սօվրէք»։ Գիւղացիները մի կերպ հանգստացնում են նրան և ճանապարհ դնում։ Իբրև տաքարիւն մարդ՝ նա նոյնիսկ ծեծում է իր կնոջը։

V

ՄԱՀԸ

1840 թուականին խամրում է աշուղի կեանքը*)։ Հետաքրքրական է նրա մահուան պարագան։ Վրթանէս քահն. Մանսուրեանի ասելով՝ երգիչը նախազգում է իր մահուան օրը։ Վերջին գի-

*) Երգիչ Ցէր-Կարապետ Օհանեանն իր «Դավթար»-ում գրում է, թէ աշուղը մահացել է 1840 թուականին։ Ա. Ե.

չերը նա իր հարազատներին, ազգական-բարեկամներին հրաւիրում է իր տունը և մինչև կէս գիշեր չօնգուր ածում ու երգում։ Ապա բոլորին օրհնում, համբուրում և արտասուալից աչքերով տալիս է վերջին հրաժեշտը, ասելով. «Գնացէք բոլորդ, մնաք բարով, բայց առաւօտն ինձ մեռած կը տեսնէք»։ Լուսադէմին նա աւանդում է իր հոգին։

Զարմանալ գաւառի Մամուքա գիւղի հարաւ-արևելեան կողմում փուած է հայոց հին հանգստարանը, որին կից բազմել են գիւղի այգիները, իսկ հարաւային կողմը զարդարում են գեղեցիկ ծառաստանները, որոնց փէշից հոսում է մի առուակ։ Ահա այդ գերեզմանատանն է հանգչում իրանահայ աշուղական գրականութեան լիրիկ երգիչը։ Հողակոյտի վրայ դրուած է կլոր և անտաշ մի փոքրիկ քար, որ ոչ արձանագրութիւն ունի և ոչ էլ քանդակ։ Այդպէս են մեր աշուղներից շատերի դամբարանները։ Նոյն դժբախտ վիճակին է ենթարկուած Ցարթուն օղլու գերեզմանաքարը։ Գիւղի ծերունիներն օտարական ամէն մի այցելուին առանձին հպարտութեամբ են ցոյց տալիս այդ քարը, որ, ասես, լուռ վկայում է, թէ իր ներքոյ է հանգչում տաղանդաւոր այն երգիչը, որն իր քնարական երգերով զարկ է տուել իրանահայ աշուղական գրականութեանը։ Այդ քարի վրայ քանդակենք 18-րդ դարի հանճարեղ աշուղ Սայաթ-Նովային նուիրուած հետևեալ անպաճոյճ տողերը.

«Ղուրթ է միզանից հեռացաւ,
Ձինք մոռանայ յիշատակը.
Մեջլիսներուն շատ պակսեցաւ՝
Քաղցր բլբուլն ու սոխակը»։

Ահա այն ամէնը, ինչ որ գոյութիւն ունի Ցարթուն օղլու կեանքի հիմնական գծերի մասին։ Բայց նրա կեանքի պատկերը լրացնելու համար արձանագրենք նաև նրա կրած ազդեցութիւնների պատմութիւնը։

VI

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս իւրաքանչիւր աշուղ, նոյնպէս և Ցարթուն օղլին,

ենթարկվում է զանազան ազդեցութիւնների։ Ինչպես Իրանի մի խաւար անկիւնում, նա իր բնածին ընդունակութեան շնորհիւ, դառնում է իր ժամանակի աշուղներից մէկը։ Ճիշտ է, Զարմահալի միջավայրը և շրջապատը նրան շատ բան չեն տալիս, բայց նրա աշուղական ձիրքը զարգանում է իրանահայ աշուղների ազդեցութեան տակ. յաճախ գաւառ են գալիս մի շարք աշուղներ և երգում ու նւագում։ Նրանց չօնգուրի ու սազերի լարերից ներշնչւում է Ցարթունը և որոշ ազդեցութիւններ կրում։ Իրանահայ աշուղներից նրա վրայ ազդում են նախ Ղուլ Էգազի, Ղուլ Արզունու, Բաղէր օղլու աշուղական մոտիւները։ Նոյնպէս իր աշուղական գործունէութեամբ և երգիծական ձիրքով նրա վրայ ներգործում է աշուղ Ամիր օղլին։ Բայց ոչ մի աշուղի ազդեցութիւնն այնքան զօրեղ չի լինում երգչի վրայ, ինչպէս իր ուսուցիչ՝ Ղուլ Յովհաննէսի, որ իր աշուղական երգ ու չօնգուրով և արուեստով ամենախոր ու անջնջելի դրոշմ է դնում նրա հոգու վրայ։ Այդ ազդեցութիւնն աշուղի որոշ բանաստեղծութիւնների վրայ նկատելի է ակներև կերպով։

Հայ աշուղական գրականութիւնից բացի, երգիչն ազդւում է նաև իրանական բանաստեղծութիւնից։ Երևում է, որ նա ծանօթ է լինում արևելքի մեծ քնարերգակներից Հաֆզին, Ֆիրդուսուն, Սաադիին և ներշնչւում է նրանց մոտիւներից։ Յատկապէս ազդւում է Ֆիրդուսու «Շահնամէ»-ից, որ խոր հետք է թողնում աշուղի պօէզիայի վրայ։ Նա իր յօրինած «Լոյսնիակի պէս փայլում ա» խորագրով սիրային երգի մէջ յիշատակում է Շահնամէի դիւցազները՝ Ռոստամն ու Զալը։

Թէ արդեօք աշուղն ուրիշ ազդեցութիւններ և ազդեցութիւններ կրում է իր կատարած ճանապարհորդութիւնից, արդեօք գեղեցիկ Վանը, Վարագը, Աղթամարը կրթական տեսակէտից նրա հոգու վրայ դնում են իրենց խոր դրոշմը, դժուարանում ենք դրական կարծիք արտայայտել, քանի որ այդ մասին նրա երգերի մէջ ոչ մի յիշատակութիւն չկայ և մեր ձեռքում էլ չունենք ուրիշ աղբիւրներ, որով բաւականանում ենք այսքանով։

Ընդգծենք միայն մի հանգամանք, որ չնայած այդ բոլոր

ազդեցութիւններին, որոնք անխուսափելի են իւրաքանչիւր աշուղի համար, Ցարթուն օղլին այնուամենայնիւ ունի իր ինքնուրոյն երգերը, իր սեփական մոտիւները, իր արտայայտութեան ինքնատիպ ձևերը, որոնք նշում են նրա աշուղական ուրոյն դիմագիծը, նրա ինքնատիպ արուեստն ու դպրոցը։

VII

ԱՇՈՒՂԻ «ԴԱՎԹԱՐԸ»

Ցարթուն օղլին թողել է մի «Դավթար», որի մէջ նա ամ-



Աշուղ Ցարթուն օղլու ձեռագիրը.

փոփել է իր երգերը։ Դա կաշեկազմ և անզարդ մի տետրակ է, որը ներկայումս գտնուում է Մամուքա գիւղում, աշուղի հարազատներից՝ Ցարութիւն Աշուղեանի մօտ։ Մեծութիւնն է 21×17 սանտիմետր։ Բաղկացած է 60 թերթից կամ 120 էջից, որոնցից 8-ը դատարկ են։ Իւրաքանչիւր երեսն ունի 24—32 տող։ Հանգամանքը

շատ անմխիթար է. շատ գործածելուց և ձեռքից ձեռք անցնելուց՝ թերթերը մաշել են, դեղնել և կեղտոտել. շատ թերթեր էլ սկզբից, միջից և վերջից պակասում են, իսկ ամբողջ «Դավթարը» մէջտեղից, 6 սանտիմետր խորութեամբ, պատուած է։ Երգերը գրուած են միասին, բաւական պարզ և սահուն բոլորագրով։ Տետրում կան նաև տգեղ և անճաշակ ձեռագրով գրուած երգեր, որոնք յետոյ են արտագրուել։ Պարունակում է ընդամենը 100 երգ, որից 35-ը հայերէն է, իսկ 65-ը՝ Թրքերէն։ Սկզբում գրուած են հայերէն երգերը, յետոյ գալիս են Թրքերէն, և ապա նորից հայերէն երգերը, որոնց դասաւորելով՝ բաժանեցինք մի քանի տեսակների՝ սիրային, դարիբի, կրօնական, խրատական, երգիծական և այլն։ Ամէն երգի վերջում, ըստ ընդունուած սովորութեան, յիշատակուած է աշուղի անունը։ Սակայն «Դավթար»-ում նշանակուած չեն երգերի յօրինման թուականները և ոչ էլ տեղը։ Բացի այդ՝ երգերի մէջ բազմաթիւ են ուղղագրական և այլ սխալները, օրինակ՝ բարով—բարով, հէկէկալ—հեկեկալ, վարթ—վարդ և այլն։ Այդ սխալները հրատարակում ենք անփոփոխ, այնպէս, ինչպէս որ գրուած են տետրում։

VIII

ԵՐԳԵՐԻ ՅՕՐԻՆԱՄԸՆԹԸ

Ցարթուն օղլու պօէզիան վերլուծելիս նկատի պիտի ունենալ մի կարևոր հանգամանք, որ նա իր երգերը յօրինել է այն պատմաշրջանում, երբ Զարմահալում տիրում էր թանձր խաւարն ու տգիտութիւնը, երբ ամբողջ գաւառում գոյութիւն ունէին միայն խալիֆայական դպրոցներ, որտեղ իշխում էր սխոլաստիկ ուղղութիւնը և մեծ էր Աւետարանի, Սաղմոսի, Ցայսմաւուրքի և շարականների ազդեցութիւնը։ Սակայն, երգչի ոտանաւորների յօրինուածքն ու ոճը նշում են և այն, որ նա ունենալով բանաստեղծական բնածին, հարուստ տաղանդ, ոչ միայն հանդիսացել է իր ժամանակի և շրջանի կուլտուրական աշուղը, այլ և իր երգերը կերտել է որոշ արուեստով։

Այդ պօէզիայում հէնց սկզբից նկատւում է մի էական

№ 27405
2581 2-5780

յատկութիւն, որ նրա ոտանաւորները հիւսուած են ժողովրդական երգերի պարզութեամբ ու յստակութեամբ և իրենց ամբողջութեամբ վայելուչ են ու գրաւիչ։

Աշուղի ստեղծագործութիւններն ունեն մի ուրիշ յատկանիշ, ինչպէս յատուկ է հայ աշուղական երգին. դա գեղարուեստական պատկերաւորութիւնն է։ Այդ երգերը, իր ժամանակի համեմատ, ոչ միայն կերտուած են բաւական հմտութեամբ, այլ և պատկերաւոր են. յատկապէս քնարական ոտանաւորների նկարչական գծագրութիւնները հարուստ են և գունագեղ։ Աշուղն իր սիրած գոյներով ու նկարներով զարդարել է իր հիւսած լիրիկական ոտանաւորների բովանդակութիւնը։ Այդ պատկերներն էլ ցայտուն գաղափար են տալիս նրա պոէզիայի կառուցողական արուեստի ձևի և տեսի մասին։

Բանաստեղծական պատկերաւորութեան, ժողովրդական երգերի պարզութեան և գեղեցիկ ոճական ձևի հետ՝ Ցարթուն օղլու երգերն օժտուած են մի այլ յատկանիշով։ Դա զգացմունքի կատարեալ անկեղծութիւնն է։ Նա խորապէս ապրել է և ստեղծագործել։ Դրանով էլ պիտի բացատրել, որ նրա երգերը գրաւում են ձեզ և համակում երգչի անկեղծ զգացումներով։ Աւելին։ Ամէն անգամ, երբ հնչում են աշուղի լիրիկական ապրումները, երբ նկարւում է նրա հոգեկան աշխարհը, ձեզ թւում է, թէ զգայուն աշուղն իր սիրտն է բանում ձեր առջև և առանձին գրաւչութեամբ պատմում իր խոհերն ու յոյզերը։ Առհասարակ, նրա կերտած լիրիկական պոէզիան գեղեցիկ է, շքեղ և զարդարուն է արևելեան ծաղկուն ոճով, որի նմանը դեռ չի արտադրել ոչ Զարմանալ գաւառը և ոչ էլ իրանահայ նորագոյն աշուղական գրականութիւնը։

Ցարթուն օղլին վարպետ է նաև բնութագրութեան գծով։ Նա, ասես, նկարիչ է իր սիրուհու գծագրութեան արուեստում։ Չի նկարագրում միայն իր եարի արտաքինը, այլ և պատկերում է նրա հոգեկան որոշ բարեմասնութիւնները։

Աշուղի պոէզիայի հիմնական գծերից մէկն էլ բովանդակութեան պահանջած ձևի նրբութիւնն է, որ փայլում է կտրուկ և

սեղմ արտայայտութեամբ. նրա երգերում գեղեցիկ կերպով իրար են ներդաշնակում բովանդակութիւնն ու ձևը։ Աշուղը գիտէ նաև գեղեցիկ մակդիրների գործածութիւնը։ Նշենք և այն, որ թէև կատարեալ երաժշտականութիւն չունեն նրա երգերը, բայց իշխում է ռիթմը։

Աշուղի երգերի մէջ տեսնում էք նաև բնութիւնից առնուած բանաստեղծական գեղեցիկ պատկերներ։ Այդպէս է նրա քնարերգութիւնը, ուր ցոլանում են ոչ միայն երգչի հոգեկան ապրումները, նրա սրտի բաբախումները, անձնական զգացումներն ու խոհերը, այլ և բնութիւնը։

Իր երգերի այս էական յատկանիշներով էլ Ցարթուն օղլին հայ աշուղական պոէզիայի պատմութեան մէջ ունէր իր ուրոյն տեղը։

IX

ԵՐԳԵՐԸ

Այժմ տեսնենք աշուղական այն քնարը, որ երգիչը նուիրել է իր ժողովրդին։ Այդ քնարը բաղկացած է եօթը լարերից — սիրային, զարիբի, կրօնական, խրատական, հարսանեկան, երգիծական, այլաբանական (ալեգորիական), որոնց արժէքը լաւ ըմբռնելու համար՝ պէտք է ծանօթ լինել աշուղական արուեստին, լեզուին և այն գաւառաբարբառին, որով արտայայտել է աշուղը։

Ճիշտ է, Ցարթուն օղլու երգերը գեղարուեստական տեսակէտից չունեն ոչ պարսիկ երեելի բանաստեղծների՝ Հաֆզի, Սաադիի, Նիզամի, Էնվերի, Ռումի և մանաւանդ Օմար Խայամի երգերի հրմայիչ գեղեցկութիւնն ու սիրաղեղութիւնը և ոչ էլ մեր միջնադարեան տաղերգուների՝ Նահապետ Քուչակի, Մկրտիչ Նաղաշի, Յովհաննէս Թլկուրանցու քերթուածների քնարերգութեան բարձր թռիչքները և զգացմունքի ջերմութիւնն ու խորութիւնը, սակայն և այնպէս իրրև ժամանակի լիրիկական ապրումների և քնարական զեղումների անկեղծ արտայայտութիւններ, իրենց ներքին և արտաքին պարզ կառուցուածքով ու ժողովրդական ոգով հետաքրքրական են և արժանի առանձին ուսումնասիրութեան։ Ծանօթանանք իւրաքանչիւր մոտիւի հետ։

1. ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Յարթուն օղլին սիրային երգերով բանում է իր քնարական կեանքի էջերը և գծում իր սիրոյ ամբողջ պատմութիւնը։ Այդ երգերն էլ նշում են, որ նա ամենից առաջ լիրիկ-աշուղ է և ունի իր ուրոյն, առանձնայատուկ երազների, յոյսերի և յոյզերի, իդէալների և զգացումների հարազատ աշխարհը։ Դա սիրոյ աշխարհն է, մաքուր, իդէալական և երազկոտ աշխարհը, ուր նա այլազան գրքերով և գոյներով երգում է իր սիրած եարին, գովում է նրա գեղեցկութիւնը։ Այդ երգերից երևում է, որ նրա սիրած եարն անանման է, չքնաղ, արմատան. չկայ «գեօզալների» մէջ նրա նմանը։ Դա յատկանիշն է աշուղական սիրային երգերի, որոնց մէջ եարերի գեղեցկութիւնը վրձինած է շեշտած գունագեղութեամբ և վառ գծագրութեամբ։ Դրանով էլ բացատրւում է Յարթուն օղլու եարի իդէալականացումը, որ նկարւած է որպէս գեղեցկութեան տիպար։ Ահա թէ ինչու եարը նրա ամբողջ կեանքն է, ամբողջ երջանկութիւնը։ Եւ նա հմակւած սիրոյ վառ զգացումով լարում է իր քնարը, զարկում նրա լարերին և սիրաբուղխ կանչում է իր անանման եարին, որ միասին ապրեն մինչև հարիւր տասը տարի.

«Ծամերդ սբրէշում, ֆէթաթ զառով քաշած,
Գլուխդ պատուական, ոսկէ սանդուղ տաշած.
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Ենդանք իրուր խատուր՝ չուր հարիւր տաս տարի։»

Այնուհետև աշուղն իր եարին էլ աւելի գրաւիչ դարձնելու համար, նրա պատկերը վրձինում է նկարչական գունաւորումներով, երբեմն էլ արուեստի նուրբ ձևերով համեմատում է բնութեան գեղեցիկ պատկերների հետ։

Առհասարակ, նա իրանհայ միւս աշուղների՝ Բազէր օղլու, Ղուլ Յովհաննէսի նման, արևելեան վառ գոյներով, գունագեղ նկարներով ու նմանութիւններով է գծում իր սիրածի պատկերը. գեղեցիկ են նրա շրթունքները, ունքերը՝ հիլալ, աչքերը՝ սև, ականջները՝ զուլալ, թշերը՝ կարմիր վարդ-նոնագոյն, երեսը՝ ճերմակ

ծով, լեզուն՝ բլբուլ, կուրծքը՝ մարմար, մէջքը՝ բարակ, չկայ «հողեղէնում» նրա նմանը.

«Թիկունքդ թախտ ազիզ, ինչ անմման ես դու,
Չը կայ հողեղէնում, հուրի դլման ես դու.
Մէջկդ բարակ, կանաչ՝ սալբը ռօվան ես դու,
Գեօզալների միջում՝ սուլթան ու խան ես դու»։

Եարի անմման գեղեցկութիւնը գերում է աշուղի խելքը, սիրտը կաշկանդում, ձգում է սիրոյ երազի մէջ, և նա սիրոյ զգացմունքի բուռն թափով զեղուն՝ երգեր է հնչեցնում, սիրաբորբոք, խանդավառ երգեր.

«Քաղցր լեզուդ երբ խօսում ա,
Սիրտս էրում ա կրակի պէս...
Աչքերդ սիրտս ա կարատում,
Սրած ալմասէն շուշի պէս։
Ունքներդ խելքս ա տանում,
Թմրացնում ա մախշուշի պէս.
Քրցում ա ինձնէ բիխաբար,
Թուլացնում ա բիյուշի պէս»։

Մի այլ երգով նա օրհնում է այն հօրն ու մօրը, որ ծընել են անմման եարին.

«Քո հօրն ու մօրն ռահմաթ,
Որ ծընգսեցան քեզ պէս նահմաթ»։

Եարի սէրն երգչի հոգու մէջ օրէց օր արծարծւում, հրդեհ է դառնում և նա հնչեցնում է սիրոյ երգն աւելի ուժգին.

«Աչքերդ ինձ խափ ա տալիս,
Սրտիս մէջն ծափ ա տալիս.
Միսս ոսկորքէս թափ ա տալիս՝
Էդ քո խաղալն, նազելի։
Ունքներդ մախշուշ ա բերում,
Կոտրած սիրտս ջուշ ա բերում.
Բիյուշ մարդին յուշ ա բերում՝
Քո բարև տալն, նազելի»։

Բայց երգիչն զգում է, որ եարն օտարացել, մի «վայրենի դուշ» է դառել. զգում է, որ նետով իր «ջիգարին» է տալիս, և նա սրտայոյզ շեշտերով գանգատւում է անգութ եարից.

«Էլ չես մտիկ անում հալիս,
Նետով ջիգարիս աս տալիս.
Ինձնէ երկար ման ես գալիս,
Մին վայրենի դուշ աս էլել»։

Այնուհետև երգիչը թախծոտ սրտով ձեռք է առնում չօնգուրն ու պանդխտութեան գնում, որպէսզի իր վիշտն ամոքի, բայց ի զուր. օտար աշխարհում էլ նա հանգիստ չունի, եարի սէրը տանջում է նրան.

«Քանի քեզնէ հեռացել ամ,
Էլ հալ ու օղվաթն չունեմ.
Սրտովս քեզ կամեցել ամ,
Իրուշի մնաթն չունեմ։

Քեզի նման հայոց ցեղում
Չեմ գտանում գաւառ գեղում.
Չեմ դիմանում դարիք տեղում,
Առանց քեզ թաղաթն չունեմ»։

Եւ նա եարից հեռու, միայնակ, վշտերի մարմաջով համակւած, կարօտագին սիրտն է բանում եարին և խնդրում, որ այլևս մի «ճար» անի.

«Սիրոյդ ձեռնէն ցաւոտել ամ,
Մի տալ դարդ ու սար ինձ, աղջիկ.
Տեսուդ համար կարօտել ամ,
Ծկ դու, արա ճար ինձ, աղջիկ»։

Սակայն, եարը դարձեալ անտարբեր է մնում, չի հասկանում երգչի սիրտը, զգացմունքը և նրան նորանոր տանջանքներ պատճառում.., Բայց աշուղն այլևս չի կարողանում դիմանալ և նա, վերջապէս, կէս յանդիմանութեան և կէս աղաչանքի ձևով դիմում է եարին այսպէս.

«Խօսում ամ, խօսում ամ, դէ չում չես խօսման,
Ախիր չհաթն ինչ ա, ջան, քեզի դուրբան.
Էշխէցդ ամ կրակվում, մագեար չես տեսման,
Տես, մին դարդիս համար բան՝ քեզի դուրբան»։

Վերջապէս եարը խղճում է աշուղին և նրա հետ ամուսնանում։ Երգիչն անհուն երջանկութեան հասած՝ գովում է եարին։ Նա «բարի, պտղաբեր մի ծառ է», որին երգիչը պահում-պահպանում է գուրգուրանքով և նրա համար ամէն ինչ «մատաղ» անում.

«Դու բարի պտղաբեր ծառ իր,
Էդ քո փառ ու բալին մատաղ.
Քեզ երանի, որ ինձ առիր,
Էդ նման աղբալին մատաղ»։

Սիրային այս երգերի մէջ հարազատութեամբ պատկերանում է աշուղի քնքոյշ, ազնիւ սիրան ու նրա անկեղծ ու զգայուն հոգին։ Ահա սիրային մի այլ նմուշ.

«Ունքներդ ինձ կեռացնում ա,
Աչքերիդ չամին դուրբան ամ.
Քաղցր լեզուէդ չեմ կուշանում,
Բերնիդ քեալամին դուրբան ամ»։

Այսպէս՝ մի շարք սիրային երգեր է յօրինել Ցարթուն օղլին, մէկը միւսից աւելի գեղեցիկ, մէկը միւսից աւելի անկեղծ ու գրաւիչ, որոնց մէջ երևան են գալիս նրա բանաստեղծական ձիրքը և արտայայտելու կարողութիւնը։ Այդ երգերը, որոնցով աշուղը փառաբանում է սէրն ու կեանքի գեղեցիկ աշխարհանայեցողութիւնը, ունեն նաև կենսագրական նշանակութիւն։ Ընդգծում են աշուղի քնարական կեանքի և լիրիկական ապրումների պատմութիւնը։ Այդ տեսակէտից էլ արժանի են ուշադրութեան։

2. ՂԱՐԻԲԻ ԵՐԳԵՐ

Բացի սիրային երգերից, Ցարթուն օղլին ունի նաև մի քանի պանդխտութեան երգեր, որոնցից յիշատակութեան արժանի է «Ղարիբ մարդա» խորագրով բանաստեղծութիւնը։ Այդ երգը նա յո-

բինել է, անշուշտ, իր դարիբ կեանքի օրերում։ Օտարութեան մէջ նա տեսել է անտէր, անտիրական դարիբներին և երգել է նրանց վշտոտ կեանքը։ Աշուղը սրտառուչ շեշտով նկարագրում է դարիբի թշուառ դրութիւնը, որ դարիբ-դուրբաթ աշխարհում, «վաթանից թառ ընկած ղշի նման», ոչ մի տեղ մխիթարութիւն չունի, մինչև անգամ՝

«Ղարիբ մարդս՝ եթէ ծաղկած ծառ էլներ,
Մաջլիսներում կանթեղի պէս վառ էլներ,
Գոդիքն թրմաշալ ու կապէն զառ էլներ,
Իրա համար քանդած բաշի նման է»։

Աւելին։ Օտար երկրում դարիբ մարդը մի ծառայ է, որի մօտ եթէ խաղաս, խնդաս, ծիծաղես, էլի նրա համար «ղարդաշի» նման է, որովհետև՝

«Ղարիբ մարդուս՝ սիրտն քանդած աւեր է,
Առէջկումն գետեր, ծովեր, նաւեր է»։

Աշուղը չի վերլուծում պանդխտութեան, սոցիալական այդ չարիքի պատճառները, միայն ընդգծում է, որ դարիբը սիրտն աւեր, խելքը գլխիցը թռած, աչքերը արտասուքով լցուած, ախ քաշելով՝ օրերն է մթնեցնում։

3. ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ցարթուն օղլու երգերի մէջ ուրոյն տեղ են գրաւում նաև կրօնական բանաստեղծութիւնները, որոնք կապուած են իր միջավայրի և շրջանի իրական պայմանների հետ և բղխում են ժամանակի պահանջից։ Այդ երգերի մի մասը պատկերում են աշուղի կրօնական զգացումներով տոգորուած ոգին, վկայում են նրա հոգեկան վիճակի, նրա տրամադրութեան մասին։ Այնտեղ աշուղը, միջնադարեան միստիկ բանաստեղծ՝ Գրիգոր Նարեկացու ջերմեռանդութեամբ և ջերմ հայցուածքներով, աղօթում է Աստծուն և ապաշխարելով իր մեղքն է լալիս.

«Վայ ինձ, վայ իմ գործին, վայ իմ մեղացն,
Ցուսացել ամ չարին, մեղայ քեզ, Աստուած.
Զունեմ մին զղջալի արտասուս լացն,
Մոռացել ամ բարին, մեղայ քեզ, Աստուած»։

Այսպէս՝ աշուղն իրեն շատ մեղաւոր է համարում, որով կորցրել է իր սրտի հանգիստը, հոգեկան հաւասարակշռութիւնը։ Զարհուրելով իր այդ վիճակից՝ նա իր սիրտը բաց է անում Քրիստոսի առաջ և արտասուալից թողութիւն հայցում.

«Լոյս Քրիստոս, քեզ ունեմ յոյս,
Եւ Դու ողորմաս ինձի, Տէր.
Զար անիրաւ մեղուցելուս,
Դու թողութիւն տաս ինձի, Տէր։

Թողութիւն տաս իմ մեղացն,
Զղջում արտասուս և լացն.
Շնորհես անմահութեան հացն,
Դու տաս քո սուրբ մասն ինձի, Տէր»։

Այս ոտանաւորը ձեզ չի յիշեցնում Մեսրոպ Մաշտոցին վերագրւած «Ողորմեայի» շարականները կամ սաղմոսի էջերը։ Ա-հա մի նմուշ.

«Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ,
Զի քեզ միայն ոչ մեղայ.
Առաւել լուա՛ զիս
Ի տղմոյ յանցանաց.
Ազբիւր բժշկութեան,
Եւ ողորմեա՛»։

Մի այլ տեղում աշուղն ողբում է Քրիստոսի գերեզմանի վրայ, իսկ մի ուրիշ տեղում նա երգի նիւթ է ընտրում Յովհաննէս Մկրտչին։ Այս տիպի երգերն որքան էլ զուրկ լինեն գեղարւեստական կառուցւածքից, ինչքան էլ ընդհանուր շաբլօնական գծեր ունենան, էապէս հետաքրքիր են իրենց առանձնայատկութիւններով։ Բացի գրանցից՝ Յարթուն օղլին թողել է 127 տնից բաղկացած գրաբարախառն մի ոտանաւոր, որ կրում է «Տաղ արարչագործութեան աշխարհի կամ համառօտ պատմութիւն Աստուածաշունչ սուրբ գրոց» վերնագիրը, որով նա մեզ տալիս է Աստուածաշնչի համառօտ պատմութիւնը, սկսելով աշխարհի ստեղծագործութիւնից։

Այդ կրօնական երգի մէջ իշխողը գաղափարն է, որի հիմքն է կազմում քրիստոնէական դաւանանքը։ Երգը գրած է Ս. Գրքի ազդեցութեան տակ՝ ու նրա նմանութեամբ։ Թէ բանաստեղծական պատկերները, թէ արտայայտութեան եղանակներն ընդհանրապէս կրում են Ս. Գրքի բանաստեղծութեան դրոշմը։ Այդ ոտանաւորից էլ երևում է, որ Յարթուն օղլին իւրացրել է քրիստոնեայ գրականութիւնը, ունեցել է լաւ ծանօթութիւն Աստուածաշնչի, որից նա նիւթեր է վերցրել և մի ընդարձակ երգ հիւսել։ Այնտեղ աշուղին գրաղեցնողը գլխաւորապէս Ս. Գրքի բովանդակութիւնն է, ինչպէս և հաւատքի վերաբերեալ այս կամ այն խնդիրը։ Այդ երգն էլ իր նիւթով, ձևով մի փայլուն արտայայտութիւնն է մեր նախնիքների կրօնական զգացումների, որոնց նպատակն է՝ սովորեցնել գիւղացիներին Աստուածաշնչի պատմութիւնը, քրիստոնէութեան հիմունքները տարածել ժողովրդի մէջ, զօրացնել բարեպաշտութիւնը և զարկ տալ նրա կրօնական զգացումներին։

Նկատենք և այն, որ աշուղը Ս. Գրքի էութիւնը լուսաբանելիս պարզ իրողութիւններին ու իրերին տուել է խորհրդաւոր, սիմբոլիկ նշանակութիւն, որոնք կառուցուած են միջնադարեան սխոլաստիկ մեկնութեան վրայ։ Երգիչն իր նիւթը մշակել է մեքենայաբար. չի կարողացել մեկնաբանների վրձինած նկարների շրջանակից դուրս գալ և իր համար արտայայտութեան նոր, կենդանի և գեղեցիկ ձևեր ստեղծել։ Այնտեղ զգացմունքի ջերմութեան փոխարէն իշխում է ցաւաք ու սառն դատողութիւնը, իսկ գծած պատկերներն անբնական են։ Այդ երևոյթներով էլ պիտի բացատրել, որ աշուղի կրօնական այդ տաղն իսկական բանաստեղծական ներշնչման արդիւնք չէ, այլ յօրինուած է ուսուցչական նպատակով, որով ոտանաւորն առանձին գրական արժէք չունի։

4. ԽՐԱՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Յարթուն օղլին, որպէս իր կոչման բարձրութեան վրայ կանգնած մի աշուղ, խորապէս գիտակցել է, որ ամէն մի երգչի հասարակական կոչումը պիտի լինի պայքարել ոչ միայն խաւարի և

բռնութեան դէմ, այլև լոյսի և ազատութեան համար։ Նա ըմբռնել է նաև այն, որ աւելի կարևորը գիւղացիների դաստիարակութիւնն է, նրանց բարոյական կրթութիւնը։ Հասկացել է, որ ժողովրդին բարոյապէս դաստիարակելու, նրանց հոգիներն ազնուացնելու լաւագոյն միջոցն իր չօնգուրի լարերն են, իր երգերը։ Եւ նա յօրինել է բարոյական խրատներ բովանդակող ոտանաւորներ։ Այդ երգերում տեսնում էք բարոյախօս աշուղը, նրա բարոյախօսական սկզբունքները։ Այնտեղ նա խօսում է բարիք գործելու, լաւին ձգտելու և հոգեկան ազնուութեան մասին։ Ահա թէ ինչու նրան խոր ցաւ են պատճառում և տանջում իր ժամանակի ու շրջապատի «չար», «ստախօս», «նամարդ» մարդկանց արարքները։

Նա շրջել է գաւառից գաւառ, շփուել է հասարակութեան տարբեր խաւերի հետ, շատ խաների ու մեծամեծների խնջոյքներին իր չօնգուրի լարերով, իր երգերով փայլ է տուել, և վերջում եկել է այն եզրակացութեան, որ կեանքում արժէքաւորը, ճիշտը ոչ հարստութիւնն է, ոչ «զառ կապէն», ոչ էլ խանութիւնը, այլ հոգու ազնուութիւնը, խոնարհութիւնը, պարկեշտութիւնը, համեստ վարք ու բարքը և անուշ խօսքը, իսկ երգչի համար ամենամեծ հարստութիւնն իր չօնգուրը, իր երգերն են, որոնցով նա միշտ էլ հնչեցրել է ճշմարտութեան ու սիրոյ խօսքը, որովհետև խորապէս գիտակցել է, որ ճշմարիտ խօսքն ու անկեղծ սէրն աշխարհում ամենաթանգ հարստութիւնն են։ Այդ հասկացողութեամբ էլ նա իր խրատական երգերով խորհուրդ է տալիս «ազամորդուն», որ ինչ ասպարիզում էլ լինի, միշտ ուղիղ սրտով գործի և յիշի Աստծուն։ Նոյնպէս խրատում է՝ մաքով զօրեղ լինել, սրտով՝ ուրախ-պայծառ, խօսքով՝ ընտիր, լեզուով՝ համեղ, ինչպէս մի հեղ գառ։ Երգիչն ասում է, որ մարդ պիտի «յամէն մաղլիսում կանթեղի նման շողշողայ»։ Հարկաւոր է նոյնպէս, որ մարդ, որտեղ էլ որ լինի, խոնարհ կենայ, ժառծի և իր բերանը «քաղցրիկ բանայ» ու «իմանայ խօսկի քեանն», որպէսզի ամէն մարդու «խօշը» գայ։ Արատում է նաև երբէք սուտ չխօսել, որովհետև սուտ խօսքը, կեղծիքը պախարակելի են և շուտով մարդուն «գետին կուտան»։ Մի խօսքով՝ պէտք է

«մարդս հէքիմ ընի ուր դարդին, որպէսզի մուհթաջ չմնայ նամարդին»։

Ցարթուն օղլու խրատական երգերն առաջնորդում են նրան փիլիսոփայական խորհրդածութիւնների աշխարհը։ Եւ նա խոսում է աշխարհիս ունայնութեան, անցաւոր կեանքի մասին։ Ապա հոգեկան խոր յուզումով գծում է մարդկային միտքն անվերջ տանջող մահուան մռայլ պատկերը, յիշեցնում է, թէ այս աշխարհում բոլոր ապրողների «հոգին մարմնից մի օր պէտք է բաժանուի», ուստի խորհուրդ է տալիս բոլորին՝ միշտ բարի գործել, աղքատներին օգնել և Աստծուն աղօթել։

5. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

Ցարթուն օղլու երգերի մէջ կան նաև մի քանի հարսանեկան երգեր, որոնցից յայտնի են «Թնդրում եմ պարոններէն», «Օրհնութիւն հարսանեաց» և «Հրաժեշտ հարսի» վերնագրերով քերթուածները։ Առաջին երգի մէջ աղուղն օրհնում է հարս ու փեսի կեանքը և նրանց տուն ու տեղ. երկրորդով փառաբանում է հարսանեկան հանդէսը, իսկ երրորդի մէջ նորահարսը հրաժեշտ է տալիս հայրական տանը և իր սիրելիներին։ Այդ երգերը ոչ միայն արտայայտում են ժամանակի ժողովրդի հոգեկան զգացումներն ու յոյզերը, այլև ունեն կենցաղագրական արժէք։

6. ԵՐԳԻԾԱԿԱՆ

Ցարթուն օղլու պոէզիայի պատկերը գծելիս նշենք նաև նրա յօրինած երգիծական մի քանի ոտանաւորները, որոնք թէև տեղ-տեղ անպաճոյճ են, բայց ցոյց են տալիս գեղջկական սրամտութիւն։ Այդ երգերով աղուղը հասարակական կեանքի բացասական երևոյթներն ու դէմքերն է հեգնում ու խարազանում կամ այլաբանօրէն ծաղրում է ու քննադատում։ Ահա դրանցից «Է՛յ պարոններ» խորագրով ոտանաւորը, որի մէջ նա կատակելով գանգատւում է իր ուլի մասին.

«Է՛յ պարոններ, մին ուլ ունի, գեառոտ էր,
Մին պառկն քոռ էր, մինն կաթ չունէր.
Ջանն էլ քաչալ, հէնց գիտէի գառոտ էր,
Ոտն խո չօլախ էր, ձեռն էլ քեսաթ չունէր»։

Սա չի՞ յիշեցնում ձեզ 19-րդ դարի աշուղ, 1840 թուի Ա-կոռիի կործանումն ողբացող, Ազբար Ադամի երգը, ուր նա ծաղրօրէն գանգատւում է իր այծից.

«Փոզ եմ ուել, տուն չի գալիս չալ էծը,
Խօսեցնում եմ, հէչ չի խօսում լալ էծը»։

Ուրիշ յետոյ՝ Ցարթուն օղլին երգիծաբանութեան նիւթ է դարձնում իր աշակերտ՝ Ալլահվէրդի աշուղին։ Բայց դա պատահական մի երևոյթ չէր։ Հայ աշուղներն ունեն իրենց որոշ կանոնները վարպետի (ուստայի), փոխ-վարպետի (խալֆայի) և աշակերտի վերաբերեալ։ Այնպէս սկսնակ երգիչ աշուղական արուեստը սովորելու համար չորս, հինգ տարի աշակերտում է վարպետ աշուղի մօտ։ Նրա հետ էլ գնում է հարսանիք, հանդէս, նստում կողքին և նւագում վարպետի հրամանով՝ գլխաւորապէս նրա գրած երգերը։ Աշուղական կանոնի համաձայն՝ աշակերտն իր յօրինած երգերը նախ ցոյց է տալիս վարպետին, իրաւունք ստանում և ապա հանդիսում նւագում ու երգում։ Ահա այդ օրէնքի դէմ մեղանչում է աշուղ Ալլահվէրդին։ Նա Ցարթուն օղլուց գաղտնի մի ոտանաւոր է շարադրում և համարձակւում է հարսանիքում նրա ներկայութեամբ երգել՝ առանց նախապէս նրանից արտօնութիւն ստանալու։ Դրա վրայ Ցարթուն օղլին ձեռք է առնում չօնգուրը և անպատասխան երգում է այսպէս.

«Զարմացել ամ էս աշխարէն,
Թէ ինչպէս աշխար ա էլել.
Քուլուղն չէ վախման քարէն,
Խառ մօրէն գօվնար ա էլել։

Էդ թողէք, ասեմ յիրուշն,
Վարթին չէ հավանում փուշն.
Աներևոյթ բայիղուշն,
Բլբուլին համքար ա էլել»։

7. ՄԻԽՍ ԵՐԳԵՐԸ

Այրարատեան: Ցարթուն օղու միւս երգերից ուշադրութեան արժանի են երեք այլաբանութիւնները. դրանք տաղաչափական տրամախօսութիւն են «Հոգու և մարմնի», «Երկնքի և գետնի», «Համամի ու Ջաղացի», որոնք մէջընդմէջ ընդդիմախօսում են միմեանց հետ. ամէն մէկն ընդգծում է իր բնորոշ յատկութիւնները, իսկ վերջում դրանցից մէկը յաղթող է հանդիսանում։ Այդ ոտանաւորները ևս, իրենց ներքին էական գծերով, կրում են նոյն դրոշմը, որ ունի հայ միջնադարեան պօէզիան։ Ինչպէս ժամանակի ոգին պահանջում էր, աշուղը, հաւատարիմ մնալով միջնադարեան բանաստեղծութեան էութեանը, աշխարհիկ նիւթերը երգել է քրիստոնէական հայեացքով ու Ս. Գրքի ազդեցութեամբ։

Մասանու երգը: Ցարթուն օղու պօէզիայի մէջ գտնում ենք նաև կենցաղային-ազգագրական մոտիւներ, որոնցից յայտնի է «Մասանու երգը», որ աշուղը յօրինել է կատարած մի դէպքի անմիջական ազդեցութեան ներքոյ։ Գեղեցիկ է այդ երգի պատկերը։ Դա կենցաղական մի սիրուն նկար է, որի շարժառիթը հանդիսանում է գիւղական մի չքաւոր գեղջկուհի, իսկ դէպքը տեղի է ունենում Սպահանի Փէրիա գաւառի Հազարջրիր գիւղում, ուր աշուղը հարսանիք է հրաւիրուում նուագելու։ Մինչև կէս գիշեր նա իր աշուղական երգն ու չօնգուրը հնչեցնելուց յետոյ՝ մի սենեակում առանձնանում է քնելու։ Կէս ժամ անց մի գեղջուկ աղջիկ կամաց բանում է դուռը և մտնում սենեակը։ Երդիչն իրեն քնած է ձևացնում, որպէսզի հասկանայ գեղջկուհու մտադրութիւնը։ Աղջիկն աշուղի մատից հանում է Յուլէյման խանի նուիրած ֆիրուզէ թանկագին կանաչ ակով մատանին և դուրս գնում։ Աշուղը ոչինչ չի խօսում, բայց հետևեալ օրը, կեր ու խումի ժամանակ, երբ հանդիսականները խնդրում են աշուղին մի բան երգել, նա առնում է չօնգուրը և անպատրաստից երգում.

«Աղջիկ, եկ դու քո Աստուածն միտդ բեր,
Նալաթ տուր սատանին, բեր իմ մատանին.
Ափսոս ես, մի ընի սատանի ընկեր,
Նալաթ տուր սատանին, բեր իմ մատանին»։

8. ԹՐՔԵՐԷՆ ԵՐԳԵՐԸ

Թրքերէն լեզուով երգեր յօրինելու սովորութիւնը, որ արդիւնք է ժամանակակից կեանքի արտաքին և ներքին պայմանների, մեր աշուղական գրականութեան մէջ մի նոր երևոյթ չէ։ Հայ միջնադարեան աշուղների մէջ կան մի քանի երգիչներ, որոնք իրենց զգացումներն ու հայեացքներն երգել են Թրքերէն լեզուով և իրենց ստեղծագործութիւններով ազդել Թուրք ժողովրդի մտքի ու սրտի վրայ։ Այդ աշուղներից յայտնի են Քէշիշ օղլի (1830—1861) և Ալլահվէրդի։ Նոյնպէս տաղանդաւոր Սայեաթ-Նովան իր աշուղութիւնն սկսել է Թրքերէն խաղեր յօրինելով և յետագայում միայն հայերէն է գրել ընդգծելով. «Հիսի գուզել դէ հայէվար ասիա»։ Թրքերէն լեզուով երգեր հիւսել են նաև Մկրտիչ Նաղաշ, Կոստանդին Երզնկացի, Յովհաննէս Թլկուրանցի, Գրիգորիս Աղթամարցի, Առաքել Բաղիշեցի և ուրիշներ։

Յարթուն օղլին ևս յօրինել է 65 Թրքերէն և 3 պարսկերէն երգեր, որոնց բովանդակութիւնից երևում է, որ նա եղել է բեղմնաւոր ու լուսամիտ բանաստեղծ-աշուղ, քաջ ծանօթ դաշտի Թրքերէն ու պարսկերէն լեզուներին և բանաստեղծական արուեստին։ Այդ երևոյթով էլ պիտի բացատրել, որ նա, հայերէն երգերի հաւասար յաջողութեամբ, արևելեան երկու տարբեր լեզուներով ստանաւորներ է գրել և երաժշտութեան վերաբերեալ։ Բայց դա ունի իր շարժառիթը։ Յետամնաց և ագիտութեան աշխարհում խարխափող Թուրք և լոռ նահապետական ցեղերը զուրկ էին աշուղական երգ ու նուագից։ Անհրաժեշտ էր նրանց մէջ ևս տարածել գուսանական պօէզիան ու երաժշտութիւնը և բարձրացնել նրանց մտաւոր մակարդակը։ Յարթուն օղլին խորապէս գիտակցել է իր հասարակական վեհ կոչումը։ Եւ ահա չօնգուրն ուսից կախած՝ շրջել է նա այնպիսի խուլ, յետամնաց վայրեր, ուր ապրող ժողովուրդները զարգացած անգամ չունէին աշուղական նուագի, երաժշտութեան, բանաստեղծութեան և արուեստի մասին։ Նրա երգերն առաջինն են հանդիսացել, որ մուտք են գործել նահապետական ու վրանարնակ այդ ցեղերի մէջ, որոնք սիրել են աշուղի երգերը, անգիր արել և հա-

մակլել նրանց մէջ արտայայտած գաղափարներով։ Այդ երգերով էլ երգիչը ձգտել է արտայայտել կողք-կողքի ապրող տարբեր ժողովուրդների զգացումներն ու հոգեկան ապրումները, զարկ է տալ նրանց բանաստեղծական գրականութեանը, միաժամանակ հանդիսացել է հայ, դաշդէի թուրք, լոռ և պարսիկ ազգերի բարեկամութեան ու եղբայրութեան համար ամենաառաջին և լաւագոյն պայքարող աշուղներից մէկը։ Ահա թէ ինչու նրա երգերը կազմում են խորհրդանիշը տարբեր ժողովուրդների եղբայրութեան։ Այդ հանգամանքն էլ նշում է նրա պոէզիայի միջազգային բնոյթը։

Աշուղի թրքերէն յօրինած երգերից յատուկ ուշադրութեան արժանի են մանաւանդ քնարական մոտիւները, որոնք իրենց պատկերաւոր հիւսուածքով, անկեղծ զգացմունքով և ժողովրդական ոճի պարզութեամբ առանձնայատուկ տեղ են գրաւում թուրք աշուղական գրականութեան պատմութեան մէջ և էլ աւելի բարձրացնում երգչի հասարակական դիմագիծը։

Ընդգծենք նաև աշուղի ձեռագիր տեսքի 40-րդ էջում գրուած թրքերէն ոտանաւորը, որի բովանդակութիւնն ուշագրաւ է նրանով, որ ամենագլխաւոր հաւատի աղբիւրն է կենսագրութեան համար, որով երգիչն որոշ տեղեկութիւններ է տալիս իր մասին։ Դա «Վասն կռնկների հատար, որ Դասվիլուց դասիս ողարկեցի» խորագրով տաղն է, որն առանձնապէս հետաքրքիր է նրանով, որ ոչ թէ սոսկ ինքնակենսագրութիւն է, այլև ճոխ պատկերաւորութեամբ, անմիջական, կենդանի արտայայտութեամբ և ցայտուն ու իրական կեանքի գծերով յօրինուած իսկական գրական գործ է, որը վկայում է աշուղի մտաւոր կարողութիւնը։ Իր ձևով էլ այդ ոտանաւորն աչքի է ընկնում։ Դա հարաւային Իրանի որոշ շրջանը պատկերող աշխարհագրական մի գեղեցիկ քարտէզ է, միաժամանակ մի կարևոր պատմական փաստաթուղթ Իրանահայութեան հնագոյն շրջանի զինուորագրութեան մի էջը լուսաբանող և մի կարևոր վաւերագիր աշուղի զինուորական ծառայութեան պատմութիւնն արձանագրող։ Այդ տաղում աշուղը պարզ նշում է, որ իրեն Զարմանալ գաւառի Անմաղաբադ գիւղից զինուոր են տարել հեռաւոր Դասվիլ

գիւղաքաղաքը։ Դա Անդիմէշկից մէկ ու կէս ֆարսախ հեռու ընկած Խուզիստանի կենտրոնական քաղաքներից մէկն է, ուր աշուղը կատարել է իր զինուորական պարտականութիւնը։ Այդ շրջանումն էլ նա հոգեպէս տանջել է իր հարազատների կարօտով։ Ահա թէ ինչու նա իր երգում բանում է իր զգայուն սիրտը և նկարում իր ընտանիքի, իր հարազատների և ծննդավայրի կարօտից տանջված հոգին։ Դրանով էլ պիտի բացատրել, որ ոտանաւորի բոլոր տներն էլ լի են երգչի հոգեկան ապրումներով, նրա ցաւագին խոհերով ու մտորումներով։ Աշուղին առանձնապէս յուզում և խորապէս տանջում է մանաւանդ այն միտքը, որ զինուորութեան համար իր օջախից բաժանուելիս չի կարողացել իր կնոջ ու զաւակների ապրուստի համար գոնէ մի որոշ գումար տրամադրել։ Երգիչը վշտալի սրտով պատմում է իր կեանքի քնարական այդ էջը։ Այդ տողերում էլ խօսում է ոչ միայն բանաստեղծ-աշուղը, այլև իր ընտանիքի սրտցաւ, լաւագոյն հայրը։ Ցուցիչ են մանաւանդ այն տողերը, երբ աշուղը Մանամառայից վերադարձող կռունկների հետ Դաավիլից կարօտակէզ սրտով բարև է ուղարկում Զարմանալի Անմոռաբաղ գիւղում բնակւող «նազլու եարին» և բոլոր հարազատներին։ Զերմանին բարևում է Գեսափլա գաւառի Քեոթ գիւղում գտնւող սիրելի քրոջը։ Սրտագին բարև է ուղարկում նաև Նոր-Զուղայում ապրող սպիտակամօրուս ծերունի եղբօրը՝ Շահվալադին։

Թէ աշուղը ինչ թւականին է գնում զինուորական ծառայութեան, քանի՞ ամիս է ծառայում Իրանին և ե՞րբ է վերադառնում իր հայրենի գիւղը, տեղեկութիւններ պակասում են։ Սակայն, էականն այդ չէ, այլ երգի բովանդակութիւնը, կառուցւածքը և ձևը, որոնց մասին ընորոշ գաղափար տալու համար ամբողջութեամբ առաջ ենք բերում թրքերէն երգերի բաժնում։

Աշուղի թրքերէն երգերի պատկերը լրիւ գծելու համար յիշենք նաև «Վասն վարդկային ծննդեան, կենացն մանկութեան, երիտասարդութեան, միջահասակի, ծերութեան, մինչի հասեալ վանի» խորագրով 128 տողից բաղկացած ոտանաւորը, որով նա համառօտ խորհրդածութիւններ է անում մարդու կեանքի վրայ, մանկութիւ-

նից մինչև խորին ծերութիւնը։

X

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ

Աշուղն ապրել է և ստեղծագործել ֆէօդալական գերիշխանութեան դարաշրջանում։ Այդ ժամանակ Զարմանալում, ինչպէս այժմ ամբողջ Իրանում, տեսնում ենք զարգացած աւատականութիւնը, որի հիմքը կազմում են բնական տնտեսութիւնը և խոշոր հողատիրութիւնը։ Ցարթուն օղլին լինելով հողագործի զաւակ, իր մանկութիւնն ու պատանեկութիւնն անց է կացրել ֆէօդալական-խանական կարգերում, նա զգացել ու տեսել է ֆէօդալական կապանքներում կաշկանդած հողագործների ծանր վիճակը։ Ճիշտ է, երգչի պօէզիայում չէք տեսնում խաների, հողատէրերի և իրենց հպատակ գիւղացիների յարաբերութիւնը պարզող ընորոշ նկարներ, չէք տեսնում գիւղերի հասարակական կեանքում տիրող սոցիալական անհաւասարութեան, տնտեսական անարդարութեան պատկերը գծող էջեր, բայց չնայած դրան, նրա գրականութեան ամբողջութիւնը, իբրև ժամանակի պատմական յիշատակարան, իր մէջ պահում է որոշ տեսակներ, որոնք գծում են իշխող դասերի նկարը։ Այնտեղ հանդէս է գալիս ամենից առաջ ֆէօդալական միջավայրի և հասարակութեան գլխաւոր մէկ դասը — կալւածատէր խաներն իրենց լիրիկական ապրումներով։ Ահա մի նմուշ.

«Հասրաթ ունեն խան ու փաշայ,
Որ քեզանէ տանեն նազայ».

Զարմանալ գաւառում իշխող դասերն են նաև հոգևորականները՝ իրենց մտաւոր աղքատութեամբ ու յետադիմական քարոզներով և քէֆխուդանները՝ իրենց ստրկական հնազանդութեամբ։ Այդ դասերի ցայտուն պատկերը, սակայն, չի գծած աշուղի երգերում։ Նա վրձինել է միայն մի նկար։ Դա ժամանակի Տ. Թադէոս Բէկնազարեանն է, որ իբրև Իրանա-Հնդկաստանի թեմի հոգևորականութեան բարձրագոյն ներկայացուցիչ, կարևոր դեր է խաղացել Նոր-Ջուղայի հայութեան կուլտուրական-տնտեսական կեանքում։

Աշուղի մի երգում տեսնում էք նրա ճոխ սեղանի պատկերը.

«Ցամենայն բարին էլ գոված,
Ֆֆտայ, տոլմայ կամ խորոված,
Հաւն անոշ եղով բոված,
Բոթլէրն մէյլխանի վերայ»։

XI

ԻԲՐԵԻ ԽԱՆԵՐԻ ԱՇՈՒՂ

Ցարթուն օղլու թրքերէն պոէզիայի մէջ մենք գտնում ենք վկայութիւններ այն մասին, որ նա իր երգերը հնչեցրել է ոչ միայն գիւղական խրճիթներում, հասարակական հանդէսներում, այլև խանական խնջոյքների, հանդէսների, հարսանիքների և կերուխումների ժամանակ։ Նա իր աշուղական չօնգուրով առանձին փայլ է տուել խանական ապարանքներում կազմակերպված ուրախութեան ժողովներին։ Խանների համար նա երգել է ու պատմել գլխաւորապէս իր յօրինած թրքերէն երգերը և աշուղական նուագով ներգործել է նրանց հոգեկան աշխարհի, զգացումների վրայ, իսկ Սուլէյման խանից նէր է ստացել թանկագին ֆիրուզով զարդարուն մի արծաթէ մատանի։ Այդ մասին վկայում է նա իր մի բանաստեղծութեան մէջ։

Բայց ընդգծենք մի կարևոր հանգամանք, որ նա միշտ էլ մնացել է իր աշուղական կոչման բարձրութեան վրայ և երբէք չի հանդիսացել խանական երգիչ։ Եթէ պարզ կամ ալլեգորիկ կերպով չի հեգնել ու խարազանել խանների, կալւածատէրերի թերութիւնները, ապա չի էլ քծնել շահագործողների առաջ, երբէք չի դրատել ու գովաբանել նրանց «առաքինութիւնները»։ Երբէք չի ծաղկեցրել և մեծացրել նրանց ուրիշ աշուղների նման, որոնք յաճախ իշխողների պատուէրով երգեր են հիւսել և հանդիսացել վերին տիրող դասի արտայայտիչը։

XII

ԼԵԶՈՒՆ ԵՒ ՈՃԸ

Ցարթուն օղլին ապրել և գրել է այն դարաշրջանում, երբ մեզանում իշխում էր գրաբարը։ Չնայած այդ հանգամանքին, նրա

լեզուն հին գրական հայերէնը չէ։ Աշուղը մէկն է այն պայծառ դէմքերից, որ խորապէս ըմբռնել է ժամանակի ոգին ու պահանջները և գիտակցել է, թէ պիտի գրել ժողովրդին հասկանալի լեզուով։ Բրբանով էլ պիտի բացատրել, որ նրա լեզուն ունի ժողովրդական ոգի։ Ինչպէս թրքերէն և պարսկերէն բառերն ու արտայայտութիւնները տեղ-տեղ իշխում են նրա պօէզիայում, բայց և այնպէս այդ լեզուն կրում է իր մէջ Զարմանալի գեղջուկ ժողովրդի խօսակցութեան կնիքը*), մասամբ էլ Ղուղանայ բարբառի գեղեցկութիւնը։ Առնասարակ, նրա երգերը կառուցած են ռամիկ ու արևելեան լեզուով։

XIII

ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ ԱՐՒԵՍՏԸ

Ցարթուն օղլու պօէզիան հիմնականում պատկերում է իր ժամանակի աշուղական տաղաչափական արուեստի ուրոյն ձևերը, որոնք իրենց էութեամբ կրում են արաբական, իրանական, թրքական կանոնների ու չափերի դրոշմը։ Նշենք և այն, որ աշուղն իր ձեռագիր դավթարում, թրքերէն երգերի վրայ, գրել է իր սիրած աշուղական տաղաչափութեան որոշ ձևերը՝ իրենց անուններով։ Ահա դրանց պատկերը.

1. *Մուխամմազ*։ Աշուղական այս տաղաչափութեամբ յօրինուած են երգչի որոշ երգերը, որոնց հիմնական չափն է 5—5—5։

---

*) Զարմանալի գիւղացիները խօսում են մէկ բարբառ, որ շատ նման է Արարատեան (Երևանի) բարբառին։ Չնայած գաւառի հայաբնակ գիւղերը պատկանում են Նոր-Զուղայի թեմին, բայց իրենց բարբառի քերականական կազմութեամբ միանգամայն ինքնուրոյն են։ Բաւական է նշել, որ Զարմանալի բարբառում գոյութիւն չունի Նոր-Զուղայի բարբառի գլխաւոր յատկանիշը կազմող *ման* ձևը, գոլման *ա*, տալման *ա*։ Իր ձայնական դիրքով ևս տարբեր է։ Զարմանալի գիւղացիները Նոր-Զուղայի, Վանայ և Մշոյ բարբառների նման հ ձայնն երբէք չեն վերածում *խ*-ի, չեն ասում *խաց*—հաց։ Շատ բնորոշ է միայն մի հանգամանք, որ գաւառի գեղջկուհիներն ունեն իւրայատուկ բառեր, որ տղամարդիկ չեն գործածում։ Առանձնապէս յիշենք *ը* տառը, որի փոխարէն կանայք և աղջիկները մինչև այսօր անարատ պահում են եւ գործածում *յ*, ինչպէս՝ հայս—հարս։ Ա. Ե.

Ունեն 5-7 կամ աւելի տուն։ Ամէն մի տունը բաղկացած է 4, 5 և երբեմն 6 տողից։ Տողերն ունեն 14 (4—3—4—3) կամ 15 (3—4—4—4) կամ 16 (4—4—4—4) վանկ։

2. Թաջիկ (բեմնիկ): Աշուղի այս տաղաչափութեամբ հիւսած ոտանաւորի տողավերջում յանգաւոր բառերը միատեսակ են, բայց ունեն տարբեր իմաստներ։

3. Ղոշմա: Երգչի այս ձևով յօրինած իւրաքանչիւր երգն ունի 5 տուն և ամէն մի տունը բաղկացած է 4 տողից, իսկ տողը՝ 11 վանկից (4-4-3)։

4. Դաստա: Այս տաղաչափութեամբ կառուցուած են աշուղի նկարագրական, այլաբանական երկարաշունչ ոտանաւորները, որոնց տունների 4-րդ տողերը վերջանում են առաջին տան յանգով։

5. Բայեաթի: Աշուղի յօրինած այս ոտանաւորներն ունեն տաղաչափական ամենակարճ ձևը։ Էական յատկանիշն եօթվանկեան տողերն են (4-3)*)։

6. Եղազարա: Աշուղական գրականութեան մէջ այս ձևը կոչւում է նաև ղոշմա-բայեաթի, որի պատկերը տեսնում ենք Ցարթուն օղլու ձեռագիր դավթարում, ուր իշխում է նախ 3 տողերից բաղկացած ղոշման, ապա 4 տողերից կազմւած բայեաթին, որ իր տարբեր յանգաւորումով ընկնում է ղոշմայի մէջ։

7. Ալիքշամա (այրբենական): Միջնադարեան հայ պոէզիայից աշուղական գրականութեան անցած այս ձևի մի էջը տեսնում ենք նաև Ցարթուն օղլու երգերի մէջ։ Բնորոշ գիծն այն է, որ ոտանաւորի բոլոր տողերը հիւսւած են այբուբենի հերթական գրերով և իրենց անուններով։

8. Գեարափյու: Զարմանալի ծերունիները և իրանահայ նորագոյն աշուղները վկայում են, որ աշուղական գրականութեան մէջ այս ձևի ոտանաւոր յօրինելու պատիւը պատկանում է Ցարթուն

*) Բանասէր Դարբինեանը կարծում է, թէ բայեաթի կոչւած ոտանաւորի ձևն աշուղականից անցել է ժողովրդականին: Դա սխալ տեսակէտ է։ Պիտի ընդունել հակառակը, որովհետև աշուղներն է, որ հետեւելով ժողովրդական բայեաթու յանգաւորման դեղեցիկ ձևին, գրել են իրենց սիրուն քառեակները: Ա.Ե.

օղլուն։ Թէ որքան ճիշտ է նրանց հաւաստիացումը, դժուարանում ենք կարծիք յայտնել։

Աշուղական տաղաչափութեան այս ձևերից բացի, Յարթուն օղլին իր դավթարում յիշատակել է նաև այլ անուններ, ինչպէս՝ բունիաթլամա, նասիեաթ, օղիւլամա (խրատական, բարոյագիտական), գիւզալլամա (սիրահարական), ջավսաթլամա (կենսագրական)։ Այդ անունները տաղաչափական ձևեր չեն, այլ բնորոշում են աշուղի երգերի էութիւնը, ներքին բովանդակութիւնը, բնոյթը։

XIV

ԱՇՈՒՂԻ ՅՕՐԻՆԱԾ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հայ երաժշտական կուլտուրայի պատմութեան մէջ ուրոյն տեղ են գրաւում աշուղական եղանակները, որոնցից շատերն երաժշտական խոշոր արժէք են ներկայացնում և պատիւ բերում աշուղական դպրոցի վարպետներին։ Դրանցից առանձին յիշատակութեան արժանի են՝ Պաղտասար դպիր (18-րդ դար), Սայեաթ-Նովա, Նաղաշ Յովնաթան, Ջիվանի, Գրիգոր Տալեան (Շերամ) և ուրիշներ, որոնց յօրինած բազմաթիւ եղանակները կազմում են հայ երաժշտական արուեստի գեղեցիկ էջերը։ Այդ եղանակներից շատերն այսօր շրջում են ժողովրդի շրթների վրայ, իսկ շատ սիրուն եղանակներ էլ մոռացուել են և ընդմիշտ կորել, որովհետև ժամանակին չեն ձայնագրուել։

Յարթուն օղլին ևս յօրինել է մի շարք գեղեցիկ եղանակներ, որոնց յարմարեցրել է իր երգերին։ Այդ եղանակների համար նա օգտագործել է գլխաւորապէս արևելեան երաժշտութիւնը, որ իր էութեամբ կապուած է իրանական և թիւրքական կլասիկ երաժշտութեան տարբերիցիաների հետ։ Դրանց մեծ մասը վաղուց մոռացուել են, որովհետև չեն ձայնագրուել։ Պահպանուել են միայն որոշ եղանակներ, ինչպէս՝ դիվանի, գասան, զոշմ, ղազել, մուխամմազ, սեմայի և այլն, որոնք այսօր երգւում են թէ Սպահանի հայաբնակ գաւառների գիւղերում և թէ Նոր-Ջուղայում։ Այդ եղանակների ձայնագրութիւնն ու հրատարակութիւնը հայ երաժշտագիտութեան հերթական խնդիրներից մէկն է։

XV

ԱՇՈՒՂԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԴԵՐԸ

Իրանահայ աշուղական գրականութեան քնարերգակ երգիչն է Յարթուն օղլին, որ 18-րդ դարի և 19-րդ դարի առաջին կիսում Զարմահալում տիրող թանձր խաւարում փայլում է որպէս մի լուսատու փարոս։ Նա ամբողջ դաւառի բանաստեղծական գրականութեան մէջ ամենաառաջին. պայծառ աշուղն է, որ իր քնարով ու պօէզիայով կարողացել է իր ապրած միջավայրի տարբեր ժողովուրդների և հասարակական տարբեր խաւերի անվերապահ սէրն ու համակրանքը գրաւել։ Նրա մահից անցել են 106 երկար տարիներ և մինչև օրս էլ Զարմահալ գաւառն իր միջից չի տուել նման տաղանդաւոր բանաստեղծ աշուղ։ Այդ տեսակէտից նա եզակի երևոյթ է։

Սակայն, ինչումն է կայանում երգչի կուլտուրական նշանակութիւնը։ — Ամենից առաջ նրանում, որ նա իր յօրինած բազմաթիւ երգերով ռահվիրա է հանդիսացել ոչ միայն Սպահանի Զարմահալ, այլ և Փէրիա, Բուրվարի, Քեամարա, Գեափլա, Քեազազ, Մալայիր գաւառներում տգիտութեան մէջ խարխափող հայ գիւղացիների լուսաւորութեան համար։ Նա պայքարել է ժամանակի յետամնացութեան դէմ և ամէն կերպ ձգտել է լուսաւորել թանձր խաւարում ապրող հողի աշխատաւորների մտաւոր աշխարհը։

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Զարմահալում և միւս գաւառներում չկային կրթական օջախներ և շատ սակաւ էին ժողովրդի լուսաւորութեան վեհ գործին նուիրուած գրական մշակները։ Յարթուն օղլին հանդիսացել է առաջին և լաւագոյն դրօշակակիրներից մէկը, որ իր աշուղական երգերով բարձրացրել է գիւղացիների մտաւոր մակարդակը և իր չօնգուրի լարերով ազդել նրանց սրտերի ու հոգիների վրայ։ Երգել է նա կուսական գեղեցկութիւնն ու սէրը՝ վրձինի պէս-պէս գոյներով և արտայայտիչ հանդիսացել իր ժամանակի երիտասարդութեան զգացումներին ու հոգեկան ապրումներին։ Յօրինել է նաև խրատական ոտանաւորներ և իր բարոյական հայեացքներով կրթել ու դաստիարակել է ժողովրդին, իսկ իր այլա-

բանական, երգիծական քերթուածներով պատկերացրել է հայ հասարակական կեանքի ցաւոտ ու մռայլ կողմերը։

Նոյնպէս նա մէկն է ամենառաջին աշուղներից, որ հանդէս է եկել թէ հասարակական հանդէսներում ու խնջոյքներում, թէ ռամիկի գիւղական խրճիթներում և իր երգ ու նուագով 60 երկար ու ձիգ տարիներ հայ գիւղացիների սրտերում վառ է պահել աշուղական արուեստի ու գրականութեան սէրը, իսկ գուսանական երաժշտութեան գունագեղ ելևէջներով ազնուացրել է նրանց հոգիները, երևոյթներ, որոնք, ըստ ինքեան, իր ժամանակի համար նշանակալից և առաջադիմական աշխատանքներ են։ Այդտեղ էլ կայանում է աշուղի կուլտուրական դերը։

Սակայն, մի հանգամանք աւելի բարձրացնում է երգչի գրական դիմագիծը։ Նա ապրել և ստեղծագործել է այն պատմաշրջանում, երբ Զարմանալում և Սպահանի միւս գաւառներում իշխում էր սխօլաստիկ ոգին և ուղղութիւնը, իսկ գրականութիւնը մի քանի տասնեակ հոգևորականների ու տիրացուների սեփականութիւն էր, որոնք ճանաչում էին միայն մի գրական լեզու, այն է՝ գրաբառը։ Ցարթուն օղլին Զարմանալ գաւառում առաջին աշուղն է, որ խորապէս գիտակցել է, թէ գրականութիւնը միայն ընտրեալների համար չէ, այլ ամբողջ ժողովրդի, որ գիւղացիները գրաբառը չեն հասկանում և նրանց հետ պէտք է խօսել հասկանալի լեզուով։ Այդ առողջ գիտակցութեամբ էլ նա իր երգերը յօրինել է աշխարհիկ, ժողովրդական լեզուով։ Դա ինքնին կուլտուրական մի վեհ աշխատանք է, որն ընդգծում է աշուղի հասարակական դերը։

Ցարթուն օղլու աշուղական գործունէութեան բովանդակութիւնն արժէքաւորւում է մի այլ ընորոշ գծով։ Դա վրանաբնակ թափառական զաշղէի խաշնարած թուրք և լօռ ժողովուրդների զարգացման գծով կատարած դերն է։ Երգիչն իր չօնգուրի լարերի վրայ հնչեցրած թրքերէն երգերով ոչ միայն ազդել է այդ ցեղերի հոգեկան աշխարհի և զգացումների վրայ, այլև որոշ յեղաշրջում է առաջացրել նրանց կեանքի ու մտայնութեան մէջ։

Ցարթուն օղլու կուլտուրական ծառայութիւնների պատ-

մութիւնն արձանագրելիս նշենք և այն, որ նա իր երգերով սկիզբ է դրել և դարկ տուել ժամանակի դաշղէի թուրք և լոռ ժողովուրդների աշուղական քնարական պօէզիային և բանաստեղծական գրականութեանը, իսկ իր յօրինած եղանակներով այդ ցեղերի աշուղական երաժշտութիւնը դրել է որոշ բարձրութեան վրայ։

Մի հանգամանք ևս պարզ է, որ Ցարթուն օղլին իր գործունէութեան ընթացքում ոչ միայն միշտ եղել է աշուղական արուեստի դիրքերում, այլև իր երգերի մոտիւներով ազդել է իրանահայ մի շարք աշուղների վրայ։ Նրա անմիջական ազդեցութեան ներքոյ կազմակերպել է աշուղ Ալլահվերդին։ Այդ հանգամանքն են ընդգծում նրանց երգերի մոտիւները։ Ցարթուն օղլու քնարից ներշնչել է նաև երգիչ Տէր-Կարապետ Օհանեանը։ Նա իր «Դաւթար»-ում աշուղի մասին գրել է այսպէս. «1840 թիւն Յարթուն օղլի Յովանէսեան զօրացաւ, որ էր յոյժ ընտիր բանաստեղծ աշղղ*)։ Ցարթուն օղլուց որոշապէս ազդել են նաև աշուղ Միսկին Ստեփան, երգիչ Մարտիրոս Մանուկեան, Միսկին Մատթէոս և ուրիշներ, որոնք ոչ միայն օգտուել են աշուղի պօէզիայից, այլև նրա երգերը տարածել են ժողովրդի լայն խաւերում։ Ահա թէ ինչպէս այդ երգերը, իր ժամանակին, մեծ արժէք են ստացել Սպահանի Զարմանալ, Փէրիա, Քեազազ, Քեամարա և Գեավլա գաւառների գիւղացիների լուսաւորութեան համար։

Այդ երգերն էլ ժամանակին դարձել են գիւղացիների սեփականութիւնը և բերնից բերան թռչելով՝ ժողովրդականացրել են աշուղի անունը։ Նա առանձին յարգանք ու պատիւ է վայելել իր ժամանակակիցներից։ Նրան սիրել ու պատուել են իր համագիւղացիները։ Սիրել է նրան Նոր-Զուղայի թեմի ժամանակակից Թադէոս առաջնորդը և յաճախ նրան ճաշի է հրաւիրել։ «Ծաղ ի վերայ սեղանոյ» երգը յօրինել է նա նման մի հրաւէրի առիթով։ Նրան սիրել ու յարգել են պարսիկ խաները։ Նա իր չօնգուրի լարերով առանձին փայլ է տուել նրանց խնջոյքներին և վարձատրուել է առատ

*) Եթէ աշուղը մահացել է 1840-ին, նրա ծննդեան թիւը պիտի ընդունել մօտաւորապէս 1760։ Ա. Ն.

նէէրներով։ Յատկապէս արժանացել է Սուլէյման խանի առանձին ուշադրութեանը և նրանից նէէր է ստացել մի «ֆիրուզ» մատանի։

Մինչև այսօր էլ դեռ Յարթուն օղլին վայելում է մեծ համբաւ ու ժողովրդականութիւն այն աստիճան, որ նրա յիշատակն ու երգերը դեռ ապրում են հարաւային Իրանի գաւառական աշուղների և գիւղացիների շրթերի վրայ։ Մինչև օրս էլ դեռ Զարմահալ գաւառի հայ գիւղացիները 4-5 ամիս տևող ցրտաշունչ ձմեռուայ երկար գիշերները նստած հիւրընկալ պարզ խրճիթներում, նահապետական քուրսիների շուրջ, երգում են նրա երգերը և առանձին հիացմունքով յիշում իրենց սիրելի աշուղին ասելով. «Օղորմի հոգո՛ւդ, Յարթուն օղլի՛»։ Նշենք և այն, որ քիչ թէ շատ զարգացած գիւղացիներն իրենց ընտանեկան «դավթար»-ներում արտագրել են աշուղի երգերից շատերը և անգիր են ասում, իսկ նորագոյն հայ աշուղներն իրենց չօնգուրի լարերի վրայ հնչեցնում են այդ երգերը գաւառական հարսանիքներում, խնջոյքներում ու հանդէսներում։ Ահա թէ ինչու աշուղի պօէզիան մի գեղեցիկ բանաստեղծական արձան է իր ժամանակի համար և թանկագին մի յիշատակարան Զարմահալի հայ գրականութեան։

Եզրափակելով Յարթուն օղլու կուլտուրական գերի նշանակութիւնը, ընդգծենք, որ նա իր աշուղական բեղմնաւոր, արդիւնաւէտ գործունէութեամբ և իր պօէզիայի էական առանձնայատկութիւններով անպայման ուրոյն արժէք է ներկայացնում և ունի իրայատուկ տեղը հայ ու թուրք աշուղական գրականութեան պատմութեան մէջ։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Նոր-Զուղա
24 Մայիս 1946

ԱՇՈՒՂ ՅԱՐԹՈՒՆ ՕՂԼՈՒ ԵՐԳԵՐԸ

Ա.
ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

1. ԾԱՄԵՐԴ ԱԲՐԷՇՈՒՄ

Ծամերդ աբրէշում ֆթաթ գառով քաշած,
Գլուխդ պատուական, ոսկէ սանդուղ տաշած.
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Խնդանք իրուր խատուր՝ չուր հարիւր տաս տարի[1]։

Վարթ ճակատէդ գլոր, վիթում քրտունքներդ,
Էդ դուդրաթի քաշած սև հիլալ ունքներդ,
Սուսեր թերթեանիդ, սև աչի բունքներդ,
Էն մէհմարին փառք տամ՝ գցեց հիմունքներդ։
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Խնդանք իրուր խատուր՝ չուր հարիւր տաս տարի։

Անկոչանիդ զուլալ, դուդրաթի զանգի պէս,
Թշերդ կարմիր վարթ, նռնան ըռանգի պէս,
Երեսդ ծով ճարմակ, քինթրդ նռանգի պէս,
Սուրաթիդ խալ դաճաց, դուժաշ ֆառանգի պէս։
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Խնդանք իրուր խատուր՝ չուր հարիւր տաս տարի։

---

1) Յարթուն օղլին ինքը ընիկ Ասդարադցի (Զարմանալցի) էր, բայց ինչպէս այս երգերից երևում է, իր լեզվին Նոր-Ջուղայի բարբառ ևս խառնել է։ Ա. Ե.

Զնաղներդ սառն, ինչ անոշ աղբիւր է.
Բխում է մաղանէն, անմահական ջուր է.
Պրընչկնիդ վարթնաղուք, կեռքնիդ տիր սուր է.
Լեզուդ ճարտար՝ բլբուլ, նաֆասդ անոշ բուր է.
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Ինդանք իրուր խտուր՝ չուր հարիւր տաս տարի։

Բոխաղդ սուրբին, թամամ մինաքարած,
Վգիդ ա եարաշուր՝ ակ մարգարիդ շարած,
Սինէդ ճարմակ մարմար, դուդրաթի սաֆ արած,
Ծրծերդ նուռն հասած, եարիդ ընծայ տարած։
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Ինդանք իրուր խտուր՝ չուր հարիւր տաս տարի։

Ցուսերդ թախտէվան, սարփուշդ զառ ազիզ,
Թևերդ նոր նովչայ, դրախտի ծառ ազիզ,
Ձեռներդ դիփ արծաթ, մատունքդ ճառ ազիզ,
Եղընկներդ սաֆ նազուք, ինչ վարթի փառ ազիզ։
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Ինդանք իրուր խտուր՝ չուր հարիւր տաս տարի։

Թիկունքդ թախտ ազիզ, ինչ աննման ես դու,
Զրկայ հողեղէնում, հուրի ղլման ես դու.
Մէջկդ բարակ կանանչ՝ սալբրո

Էդ փափուկ անդամիդ ա ճարմակ ֆանուսի պէս
Մթին տեղ շող կաայ կրակէն լոյսի պէս,
Ծընկներդ չարխ քաշած, ոսկէ նաղուսի պէս,
Ղալամիդ շիմս արծաթ, ստրդ ֆիրուզի պէս։
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Խնդանք իրուր խատուր՝ չուր հարիւր տաս տարի։

Դու չես գալիս, ինձ տար, մին օր քս տունն ընեմ.
Խնդիրքս կատարիր, քեզնէ մամուն ընեմ.
Մին խաթիրջամի տուր, ծոցումդ քուն ընեմ.
Զուր ճի ճանապարիդ վերէն զարթուն ընեմ։
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Խնդանք իրուր խատուր՝ չուր հարիւր տաս տարի։

Յարթուն օղլուս սիրած սիրելի եարն ես դու.
Ռէչան սուսամբարով, ծաղկունքով սարն ես դու.
Գատուելի, պաղարեր, յարգոյ նուրարն ես դու,
Վերջն բոլոր աշխարքիս բարաբարն ես դու։
Իմ եար, արի, արի բարով, հազար բարի,
Խնդանք իրուր խատուր՝ չուր հարիւր տաս տարի։

2. ԵԱՐԻՍ ՃԱՄԲԻՆ ԸՆԹՐԶԱՐ Ի [1])

Եարիս ճամբին ընթրզար ի, դայ ինձի ղօնաղ ա պիտի.
Ճանապարիդ զառ փայանդաղ, ռուշան չրաղ ա պիտի.
Գարնան եղանակ լի ծաղկօք, ժամանակն էնչաղ ա պիտի.
Տեղդ լալայ, վարթ, հասսաման, լի ծաղկունքով բաղ ա պիտի.
Խալու խալու գեօզալներով յառէջկումդ խաղ ա պիտի.
Թամամ հուրի փարիքներուն՝ քեզի ընդունց տղա պիտի.
Օվ հուքումաթդդ չըտանի, էնդուր մեծ նասաղ պիտի։

---

1) Յարթուն օղլին երկրորդ ամուսնութեան ժամանակ եօթանասուն տարեկան սպիտակամօրուս մի ծերունի է լինում. նա պակաղրութիւնից յետոյ շտապում է տուն, չանգուրը դնում կրծքին եւ յիշեալ երգը նուագելով՝ հանդիսականներին ընդառաջ է գալիս իսկ այդ օրը մինչեւ էլն դիշեր «դամ» է տալիս։

Գակասութիւն չըկայ քեզնում, խաթմ ես Աստուծոյ ղուդրաթով։
Ազգից նաչիմ ես շատ իստակ, Հալալ զադայ, ասլ ու զաթով։
Մանուկ վախտդ մեծացել աս, իստակ մաքուր, քաղցր կաթով։
Օգուտ ես առի մայրիցդ, ադաբ արքան մարիֆաթով.
Չըկայ գեօղալների միջում տէնց դեղեցիկ խալ ու խաթով,
Քեզի նազ ու ղամզ ա պիտի, առնօղդ բազում դէվլաթով,
Որ շինէ եազուտ դմռուտով, թաչ ու թօմար ջըղա պիտի։

Վարթ երեսդ բադր ա էլել՝ թամամված լոյանիակի պէս.
Ղօշայ խալերդ վառվում ա, ինչ պայծառ արուսակի պէս։
Գոընչինդ բալասան ծաղիկ, կեռքնիդ ալմաս ակի պէս.
Քաղցր լեզուդ երբ խօսում ա, սիրտս էրում ա կրակի պէս։
Ծոցէդ անոշ հոտ ա գալիս, հիլ և դարչին միխակի պէս.
Կռնէս բռնէր, հիմմաթ արա, դօսա սիրելի քօմակի պէս.
Միասին գնանք մատանենք, ոսկէթուփ օթաղ ա պիտի։

Էշխդ ջանիս ծակծակում ա, դառն չորացած փշի պէս.
Աչքերդ սիրտս ա կտրատում՝ սրած ալմասէն շուշի պէս.
Ունքներդ խելքս ա տանում, թմրացնում ա մախշուշի պէս։
Քըցում ա ինձնէ բիխաբար, թուլացնում ա բիյուշի պէս.
Թառ ես գցել վաթանիցդ, վայրենի դարիբ դուշի պէս.
Օտարացել աս ինձանէ, չես մօտ գալիս իրուշի պէս.
Եթէ կամենաս իր դառնաս, սիրոյ չաղ մուշտաղ ա պիտի։

Բոլորվել են ողջ միասին, գան թամաշայ հուրի փարին.
Ղուլլուդիդ կանգնեն դարավաշ, խդմաթ անեն քեզպէս եարին։
Երբ եկին տեսին ջամալդ, դարցին իրուր, վասդ արին.
Շատ պատուելի նազ ու նամադ, քեզ լաեղ ա ամէն բարին։
Խնդիրքս այս է Աստծանէ, վատ չըտեսնես բոլոր տարին.
Ցարթուն օղլուս հետ միասին՝ գէշտ անենք վերայ աշխարին։
Օվ որ մեզի վատ կամենայ, սրտին դուգուն դաղ ա պիտի։

3. ԻՆՉ ԺԱՄԱՆԱԿ ՈՐ ԻՆՁԻ ԳԱՄ

Ինչ ժամանակ որ ինձի գաս՝
Էն օրէն գալուդ դուրբան ամ.
Զրուց տալով սիրտս բանաս.
Քաղցր խօսալուդ դուրբան ամ.
Քո հօրն և մօրն ուհմաթ՝
Որ ծընդսեցան քեզ պէս նահմաթ.
Մին ժամանակ քաշիր զահմաթ,
Մօտս գալուդ դուրբան ամ.
Մօտս մնաս, սիրտս բանաս,
Իմ աղաչանքն ըստանաս.
Ծածուկ խորհուրդս հասկանաս.
Բան յիմանալուդ դուրբան ամ.
Ցիմանաս աշխար ման գալով,
Քեզ ամ սիրել բարի հալով.
Ե՛կ, մտիր ծոցս խնդալով.
Խօշ ծիծաղալուդ դուրբան ամ.
Ծիծաղալով ինձ կպցնեմ,
Երեսս երեսիդ դնեմ,
Կակուղ սինիդ վերէն քնեմ,
Տաս օրօրալուդ դուրբան ամ.
Օրօր ածես լուսացանեմ,
Իմ սրտիս հաւատն հանեմ,
Հասրաթս հետս չըտանեմ.
Մաթլաբս տալուդ դուրբան ամ.
Ե՛կ, Ցարթուն օղլուս դուլթսաղիր.
Թէ մեռնեմ՝ ծոցումդ գաղիր,
Ջուխտ ծծիդ արանքին թաղիր.
Լաս, հէկէկալուդ դուրբան ամ [1]).

1) Դավթարում այս ոտանաւորի տակը գրուած է. «Վայ ինձ», ըստ երևոյթին երգիչը մեղայի է գալիս։

4. ԼՈՅՍՆԻԱԿԻ ՊԷՍ

Լոյսնիակի պէս փայլում ա
Էդ քո ջամալն նազելի,
Օ՛վ քեզի հետ վայելում ա,
Ուրախ ա հալն, նազելի։

Աչքերդ ինձ խափ ա տալիս,
Սրտիս մէջն ծափ ա տալիս.
Միսս ոսկոռքէս թափ ա տալիս՝
Էդ քո խաղալն, նազելի։

Ունքներդ մախշուշ ա բերում,
Կոտրած սիրտս ջուշ ա բերում.
Բիյուշ մարդին յուշ ա բերում՝
Քո բարև տալն, նազելի։

Նստոտել ան սառաֆանին,
Որ խալերիդ գինն յիմանին՝
Ձեն տալիս քոլն Իրանին,
Էդ քո մին խալն, նազելի։

Հասրաթ ունեն խան ու փաշայ,
Որ քեզանէ տանեն նաշայ,
Սաղ ընէր՝ կըգէր թամաշայ,
Ռոստամ ու Զալն [1]), նազելի։

Ցարթուն օղլիս աշխար ման գամ՝
Ձեմ գտանել քեզ պէս համդամ,
Ես խօ քեզանէ հա միշտ կամ,
Շնորհակալն, նազելի։

---

*) Պարսից նշանաւոր դիւցազուններն են, որոնց քաջագործութիւնները գովարանում է Ֆիրդուսին իր Շահնամէումն։

5. ՓՈԽՈՏԵԼ ԱՍ ՆՇԱՆՆԵՐԴ

Փոխոտել աս նշաններդ,
Այլակերպ յիրուշ աս էլել.
Թարգել աս սիրոյ բաներդ.
Դու տիր անըզգուշ աս էլել.

Իմ աչքին սուլթան ու խան իր,
Սրտիս մէջն շիրին ջան իր,
Սուսան ու սմբուլ, ոչխան իր՝
Զորացել աս, փուշ աս էլել.

Էլ չես մտիկ անում հալիս,
Նեռով ջիգարիս աս տալիս.
Ինձնէ երկար ման ես գալիս.
Մին վայրենի դուշ աս էլել.

Ընչի՞ չես ականում ետն,
Ջիգարիս տալիս ամ նետն,
Խառնում աս լեզու խետն,
Դառնիջի հետ ջուշ աս էլել.

Ցարթուն օղլուս ձեռնէդ չհանես,
Որ ախիրն կըփոշիմանես.
Խաբար եմ՝ գլուխ կընգանես.
Ըլդայ դու մախշուշ աս էլել.

6. ՔԱՆԻ ՔԵԶՆԷ ՀԵՌԱՑԵԼ ԱՄ

Քանի քեզնէ հեռացել ամ,
Էլ հալ ու օղվաթն չունեմ.
Սրտովս քեզ կամեցել ամ,
Իրուշի ինկաթն չունեմ։

Քեզի նման հայոց ցեղում,
Չեմ գտանում գաւառ գեղում,
Չեմ դիմանում դարիր տեղում.
Առանց քեզ թաղաթն չունեմ։

Բլբուլ լեզուդ զառ դաֆասով՝
Կարօտում ամ շատ հաւասով.
Ինդիրք ունեմ ըլթմասով.
Բարկանալ հայրաթն չունեմ։

Ծոցիդ մէջն ա չայիր չիման,
Իմ սիրտն գցել աս գուման,
Հար մին պաչդ հապար թուման.
Ի՞նչ անեմ, դօվլաթն չունեմ։

Ցարթուն օղլիս թէ ձեռ վեռնեմ,
Վախման ամ դարդիցդ մեռնեմ.
Թէ գնամ իրուշ եար բռնեմ,
Էնպէս հարամ դաթն չունեմ [1])։

---

1) Երգից յետոյ գրւած է դավթարում. «Մեղայ, վայ ինձ»։

7. ՍԻՐՈՒԴ ՁԵՌՆԷՆ ՑԱՒՈՏԵԼ ԱՄ

Սիրուդ ձեռնէն ցաւոտել ամ,
Մի՛ տալ դարդ ու սար ինձ, աղչիկ.
Տեսուդ համար կարօտել ամ,
Ե՛կ դու, արա՛ ճար ինձ, աղչիկ։
Դու փաշայ ես՝ նստած թախտի,
Ե՛կ, ռանմ արա ինձպէս բախտի.
Երեք ամիս աշնան վախտի,
Կանչիր, ղօնաղ տար ինձ, աղչիկ։
Դու նման ես ղօնչայ վարթի,
Հոտով կըզարդարես մարդի,
Կացիր քո ըզբար ու շարթի.
Պէտք ա լինես եար ինձ, աղչիկ։
Եար, քո սիրտդ գցիր խնամ,
Մի թողնուր դիս կարօտ մնամ,
Խուրս ընես դէրն որ դնամ,
Չի պատանի չար ինձ, աղչիկ։
Աչքդ զուլալ, ունքդ կամար,
Լոյս երեսդ շամս ու դամար,
Քո սէրն ծանդր ա իմ համար,
Քան զԱլվանդայ սար ինձ, աղչիկ։
Կեռքնիդ անդին քարինջի,
Կոկօմ ծծերդ նարինջի,
Նրանց համար եմ զարինջի,
Ե՛կ դու փիշքեաշ արա՛ ինձ, աղչիկ։
Ցարթուն Օղլիս դառն հալի,
Տեսուդ համար ակնկալի,
Դու որպէս ծառ քաղցր պտղալի՝
Տուր մի անոշ բար ինձ, աղչիկ*)։

---

*)Երգից յետոյ երգիչը կանչում է. «Վայ ինձ»։

8. ԽՕՍՈՒՄ ԱՄ, ԽՕՍՈՒՄ ԱՄ

Խօսում ամ, խօսում ամ, դէ չում չես՝ խօսման,
Ախէր չհաթն ինչ ա, ջան, քեզի դուրբան.
Էշխիցդ ամ կրակվում, մագեար չէս տեսման,
Տես, մին դարգիս համար բան՝ քեզի դուրբան։

Ծոցիդ անոշ հոտէն ողջ աթարիքն
Կապեցին դուքանին բոլոր տարիքն,
Սալահ տեսին թամամ հուրի փարիքն՝
Վեր կենան, թամաշայ գան, քեզի դուրբան։

Բոլորվեցին ողջ միասին գնացին,
Բոյ սուրաթդ տեսին, հէյրան մնացին,
Ձեռ ձեռ դրին, իրուր դուլուզում կացին՝
Ցառէջկումդ զաթարսան, քեզի դուրբան։

Քեզ հաքցրին կարմիր կանաչ ռախտըն,
Բերին զարդարեցին զառնըգան թախտն,
Նստացարին վերէն կրկին էն վախտն,
Ասին՝ դու ես ողջիս խան, քեզի դուրբան։

Հօսն ու ջամալիցդ շատ բիղարար ին,
Քեզ խաներին սարվար՝ քալանթար արին,
Եկին Ցարթուն օղլուս սալահ արարին՝
Որ էվլլահ գրեն տան, քեզի դուրբան։

9. ԱՐԻ ԳԻԼԲԱՐ

Արի գիլբար, մին բան ասեմ՝ ընդունիր,
Ասված սիրես՝ չանես բիդամաղ ինձի.
Ես գիտակ ի՝ որ խառուրս սէր ունիր,
Ինդրում ամ մին օր գաս ղոնաղ ինձի։

Չես խաբար՝ որքան է տխուր իմ հալն,
Աչքս չի գայ թամամ աշխարհիս մալն.
Ես տկարացել ամ, սաթամ քո գալն՝
Արել աս Ջամալիդ դու մուշտաղ ինձի։

Ուզում ամ որ գաս ինձ, ես ասեմ բարով.
Քանի սաղ ենք՝ խաղանք խնդանք իրարով,
Բալէհ տանք և առնենք շարթ ու իղրարով,
Որ էլ չանես էշխիդ դու դուխսաղ ինձի։

Նստենք իրուր խառուր սոհբաթ ու դամով,
Ասենք ու ծիծաղանք լաւ չամ ու խամով,
Բարև տանք և առնենք շատ քաղցր ու համով՝
Գիմանամ, որ դու դոսա ես էնչաղ ինձի։

Ցարթուն օղլիս ասաց, խնդրից իր սէրն,
Որ շնորհես, քաղէ բաղչիդ նոնէրն՝
Շատ լէվ ա պարգևել բարերար Տէրն՝
Քեզի պէս ծաղկունքով թաղայ բաղ ինձի։

10. ԱՐԻ, ԷՑ ԻՄ ՍՐՏՈՎ ՍԻՐԱԾ

Արի, էյ իմ սրտով սիրած, պատուելի դիլբար,
Խնդրում ամ, որ մին օր զօնաղ դաս ինձի համար,
Նստենք ոսկէթուփ ուռուսում իրուր բարաբար,
Նազուք ձեռնօվդ ածես գինին՝ թաս ինձի համար։

Թմենք անոշ գինին, անենք քէֆ ու ծիծաղն,
Այնուհետ մին խնդիրք ունեմ քեզնէ էնչաղն,
Որ ռուսխաթ տաս՝ ձեռս մեկնեմ մին դաբ ծոցիդ բաղն,
Քաղեմ մին ջուխտ թազայ զօնչայ՝ տաս ինձի համար։

Ծոցիդ միջի թազայ ծծերն նման ա նռնի,
Էրնէգ կտամ էն ջանէլին՝ ձեռնօվ կը բռնի,
Մին ձեռն ծոցումդ կըլնի՝ զլուխդ ուր կռնի,
Թէ էդպէս մին լաւ բան ըլնի, բաս ինձի համար։

Բաս ինչ կըլնի, թէ էդպէս մին բան ըլնի բարի,
Խաղանք, խնդանք իրուր խատուր, հարիւր տան տարի։
Ես զուլ կըլնեմ քեզի նման ընկեր հաւքարի,
Դու նստած խան թախտի վերայ, կաս ինձի համար։

Վըկայ չինենք մեր միջումն Աւետարանն,
Խնդանք իրուր խատուր, մինչ մեր վերջի վախճանն,
Երբ որ Ցարթուն օղլուս տանիս դաբ գերեզմանն՝
Աղի աղի արտասունքով՝ լաս ինձի համար։

11. ՈՒՆՔՆԵՐԴ ԻՆՁ ԿԵՌԱՑՆՈՒՄ Ա

Ունքներդ ինձ կեռացնում ա,
Աչքերիդ ջամին ղուրբան ամ.
Զարցած սիրտս թոռացնում ա,
Երեսիդ նամին ղուրբան ամ։

Մին դամ որ քեզ չեմ տեսնում,
Ի սրտէ հոգէց ամ հանում,
Քաղցը լեզուէդ չեմ կուշտանում,
Բերնիդ քեալամին ղուրբան ամ։

Էդ քո քեալամ ու գոֆտարն,
Նա է իմ դարդերիս ճարն,
Քաղցը է քան ըզթէ շաքարն.
Գորնչկնուդ համին ղուրբան ամ։

Գիշեր ցերէկ դու աս միտս,
Արազի ման կըդաս հետս,
Եփ խնդաս, ընկնես խատիս՝
Հէնց էն դամին ղուրբան ամ։

Քանի որ ինձ կըճանաչես։
Անուշանոտ վարթ կանանչես,
Երբ որ Յարթուն օղլի կանչես՝
Ձէնիդ մուկամին ղուրբան ամ։

12. ԱՍԻ. ԴԻԼԲԱՐ, ԳԱՆԳԱՏ ՈՒՆԵՄ

Ասի. Դիլբար, գանգատ ունեմ քեզանէ.
Ասաց. Թէ ըսկըսիր, ասա, ինչ անեմ.
Ասի. Չուամար օտարացար ինձանէ.
Ասաց. Ժամանակն նաս ա, ինչ անեմ։

Ասի. Ծարաւել ամ, ջիգարս չոր է.
Ասաց. Աղբիւրներն լի սառնը ջուր է.
Ասի. Զընաղներդ գինու ազբիւր է.
Ասաց. Աչքերս էլ թաս ա, ինչ անեմ։

Ասի. Պըռընչկընիդ լաւ բաբ ու թաբ է.
Ասաց. Դառ չես խաբար, նաբաթի հաբ է.
Ասի. Եանղաղներդ քողցը քեաբաբ է.
Ասաց. Թէ օրն ուրբաթ պաս ա, ինչ անեմ։

Ասի. Չուամար դու հեռացար իմ մօտէն.
Ասաց. Չեմ կուշտացել քո անոշ հոտէն.
Ասի. Մին օր գոնաղ կտնչիր քո օդէն.
Ասաց՝ Թէ դըրկեցս փիս ա, ինչ անեմ։

Ասի. Եար, քո ձեռնէն ախ ու վայ ունեմ.
Ասաց. Դարդիդ ընկեր ես էլ թայ ունեմ.
Ասի. Յարթուն օղլիս քեզնից փայ ունեմ.
Ասաց. Սըրտով քեզի հասայ, ինչ անեմ։

ԱՍԻ ԴԻԼԲԱՐ


Զափաւոր.
f
p
դանդաղ.
Ան...սի...դիլ...բար... գան.գարս...նեմ...քե...ա...նէ...
ա...ապ...թէ...ու... կը...սիր...ա...սա...ինչ...ա... նեմ...
ա... սի... ...ղու...մար... ...ս...գա.բա...գար... ...ին...ջա...նէ...
ա... ապ...ժա.մա...նա...կն...նաս... ...ա...
ինչ... ...ա... ...նեմ:
ինչ... ...ա... ...նեմ:

13. ԱՍԻ. ԴԻԼԲԱՐ, ԱՐԻ ԳՆԱՆՔ

Ասի. դիլբար, արի գնանք թամաշայ՝
Վարթ ու լալայ ծաղկած բաղչայ բաղերն,
Տես ինչպէս աշխարէս կըտանենք նաշայ,
Ածենք սազ և կանչենք անոշ խաղերն։

Ծոցումդ պահել աս միխակն, հիլն,
Չես տալիս իմ ձեռն, հէնց ամ, դոր շիլն,
Մի թողնիր դու քո բլբուլի աթիլն,
Վարթիդ վերէն նստի սև սև զաղերն։

Վարթ երեսիդ վերէն պայծառ նշան է,
Խալերդ եաղութ, զմռութ, լալ ու մարջան է,
Ցուշ ու միտքս քաշեց տարաւ ինձանէ,
Կամար տըված կէս ունքներիդ թաղերն։

Չեմ կուշտանում ես քո էդ անոշ սիրէն,
Ինչ անեմ վախման ամ ունքիդ նետերէն,
Շատ ժամանակ է կայ իմ սինի վերէն,
Թանա, թօնամաթ, եար քո դրած դաղերն։

Էդ չափ որ քեզ ասի՝ թէ ասեմ քարին,
Մընիլամ կըլնէր՝ որ ես դնի իմ եարին.
Զուրեփ նստի քեզպէս դօստի գուդարին.
Ցարթուն օղլուս նման խեղճ և ֆաղիրն։

14. ԴՈՒ ԲԱՐԻ

Դու բարի պտղաբեր ծառ իր,
Էդ քո փառ ու բալին մատաղ.
Քեզ երանի, որ ինձ առիր,
Էդ նման աղբալին մատաղ։

Երբոր դու ուրախանում աս,
Սրտիս դուրարն բանում աս.
Ծիծաղալով ականում աս,
Աչքերիդ զուլալին մատաղ։

Աչքդ զուլալ, ունքդ կամար,
Լոյս երեսդ շամս ու դամար,
Զոյգ միասին կապած կամար,
Սև հիլալ ունքներիդ մատաղ։

Թաղ ունքներդ աս բարաբարել,
Իմ յուշ ու միտկն աս տարել,
Զոր կողմիցդ կախ աս արել՝
Էդ ծամերիդ կալին մատաղ։

Մանկութենէդ ունես ուսում,
Չես ընդանել դամ ու դուսում.
Սրտիս համեմատ ես խօսում,
Էդ քո բարի հալին մատաղ։

Ես չի խաբար էդպէս եար իր,
Դու աշխարքիս բարաբար իր,
Անչարայ դարդիս դեղ արիր,
Էդ նման քեամալին մատաղ։

Ցարթուն օղլիս հօսնիդ մայիլ,
Ես քեզանէ կլնեմ դայիլ,
Ինչի որ Տէրն ա ընծաել,
Քեզ նման գեօզալին մատաղ։

15. ԵՍ ՈՒՄԻԴ ՉՈՒՆԻ

Ես ումիդ չունի քեզանից,
Որ ինձնէ բեզար ըլնէիր,
Խաթիրջամ ի յամէն բանից,
Որ դարդերիս ճար ըլնէիր։

Իմ դարդիս ճար կարող էիր,
Անգին ջօվհաիր փող էիր,
Դոր իր ուզում ինձ թողէիր,
Դու իրուշին եար ըլնէիր։

Ես եմ քո ջօվհաիր հուլդ,
Գցիր սինիդ, կապիր կուլդ,
Դու դոր իր թողում բլբուլդ՝
Ակռաւին համքար ըլնէիր։

Զեմ կուշացել ջամալիցդ,
Իլահ էդ բարի հալիցդ,
Զի աւատում քեամալիցդ՝
Էդքան անկատար ըլնէիր։

Ցարթուն Օղուս խօսկն ըստացիր,
Քո իղարի վերէն կացիր,
Դօստ և դուշմանդ յիմացիր.
Զի պէտք ա յիմար ըլնէիր*)։

---

*) Այս երգը դավթարում չկայ։

16. ՔԵԶ ՍԻՐԵԼ ԱՄ

Աղջիկ վախտդ քեզ սիրել ամ
Ես չեմ անում հաշա՝ բլբուլ.
Հաւանութեամբդ տիրել ամ,
Աչքերդ թամաշա՝ բլբուլ։

Ես մին բլբուլ, դու ես թուրթի
Եկ միասին մտնենք դուրթի.
Ծոցիդ միջի անուշ հոտի
Լէռ կըտանենք նաշա՝ բլբուլ։

Ես ալմազ ամ, դու ես դաշի
Ամենան ակնեզէն տաշի.
Կոնէտ բռնի քովանց քաշի,
Տանենք մի գուշա՝ բլբուլ։

Յարթուն Օղլուս մարիֆաթը
Հէյրան ելա խալ ու խաթին.
Աչքս Ճաց վառ սուրաթին,
Կարմիր, ճերմակ թուշ ա՝ բլբուլ*)։

*) Դավթարում այս ոտանաւորի տակ գրւած է՝ «Մեղայ, մեղայ»։

Բ.
ՂԱՐԻԲԻ ԵՐԳԵՐ

1. ՂԱՐԻԲ ՄԱՐԴՍ

Ղարիբ մարդս՝ դարիբ դուրբաթ աշխարհի
Վաթանից թառ ընկած դրի նման է,
Տակն դուի փռես, առաջն բարի,
Դոր բլբուլն թռնէր՝ փշի նման է։

Ղարիբ մարդս՝ եթէ ծաղկած ծառ էլներ,
Մաշկիներում կանթեղի պէս վառ էլներ,
Գոդիքն թրմաշալ ու կապէն զառ էլներ,
Իրա համար քանդած բաշի նման է։

Ղարիբ մարդս՝ եթէ որդւոյ տեղ սիրես,
Ախբէն մին խոսքով իւր սիրտն կերես,
Եթէ մօրդ ու մուսամբա առաջն բերես,
Իրա համար հարամ լաշի նման է։

Ղարիբ մարդս՝ նստած այնաք օթախին,
Դոր նօքեարն խթմաթ անէր իւր աղին,
Իւր առաջն խաղալ, խնդալ ու ծիծաղել,
Իրա համար մի զարդաշի նման է։

Ղարիբ մարդուս՝ սիրտն քանդած աւեր է,
Առէջկումն գետեր, ծովեր, նաւեր է,
Յարթուն Օղլին մէջլիսներում դալեր է,
Իրա համար դոր մի քաշի նման է։

Գ.
ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1. ՎԱՄՆ ՄԵՂԱՑ ԳԱՂԱՏԱՆՔ

Լոյս Քրիստոս, քեզ ունեմ յոյս, տաս ինձ զղջմանն մին տեսնեմ,
Քեզ բարեխօս ունեմ սուրբ կոյս, քո օգնականն մին տեսնեմ.
Օգնես չարից յամենայն ժամ, ապաշխարեմ իմ մեղքն լամ.
Արժան անես յոյսով երթամ, լոյս գերեզմանն մին տեսնեմ։

Համբուրեմ լոյս գերեզմանդ, մեղքս թափես էն սուրբ տանդ.
Գամ արժան հաղորդութեանդ, էտ բարի բանն մին տեսնեմ.
Բանն քո քաղցր է և բարի, բարի հրեշտակ առաքես զիս.
Բաղցրութեամբ աւանդեմ հոգիս, էն սուրբ վախճանն մին տեսնեմ։

Վախճանքս տաս հէնց էն վախտին, էլ չըգտնեմ 'ի մէջ յախտին,
Արժան անես լոյս դրախտին, Եդեմականն մին տեսնեմ.
Եդեմական լոյս դրախտու

, վայելում տաս մինչ վախտուition.
Նստես քառակերպ թախտուition, քո գալստեանն մին տեսնեմ։

Քո գալստեան օրն 'ի բարէն, յարևելեան կողն աշխարէն.
Ցոյս ունեմ լոյս կենարարէն, սուրբ խաչ նշանն մին տեսնեմ.
Էն սուրբ խաչի փայլման շողն, երանելի է տեսնողն.
Փչել տաս Գաբրիէլեան փողն, անեղ դոչմանն մին տեսնեմ։

Դոչման օրն չունեմ թաղաթ, երկինք, գետինք, տունք և բաղաթ,
Գալարին որպէս մաքաղաթ, քո էդ հրամանն մին տեսնեմ.
Հրաման կանես ողջ ննջեցեալ սարսափելով առ ոտդ գալ,
Կդատես ուղիղ անսխալ, սուրբ դատաստանն մին տեսնեմ։

Սուրբ կդատես չարն 'ի բարէն, կբաժանես այծն ոչխարէն.
Փափակ ունեմ էն գաթարէն, յայակողմեանն մին տեսնեմ.
Ցայակողմեան դաս արդարոց, ձախակողմն 'ի ձեռն չարոց.
Տէր, դիս արժան անես բարոց, կեանք յաւիտեանն մին տեսնեմ։

Ցարթուն օղլուս հասրաթ չանես, իմ չար խորուրդն խափանես.
Ինձ քեզ ժառանգ արժան անես, արքայութեանն մին տեսնեմ։

3. ՎԱՍՆ ՄԵՂԱՑ ՊԱՂԱՏԱՆՔ

Լոյս Քրիստոս, քեզ ունեմ լոյս, և դու ողորմաս ինձի, Տէր.
Զար անիրաւ մեղուցելուս, դու թողութիւն տաս ինձի, Տէր.
Թողութիւն տաս իմ մեղացն, զղջում արտասուս և լացն.
Շնորհես անմահութեան հացն, դու տաս Քո սուրբ մասն ինձի, Տէր։

Քո սուրբ մասին ակնկալ եմ, տկար վեր ընկած անկեալ եմ.
Ես չար գործով մեղուցեալ եմ. էլի դու խղճաս ինձի, Տէր.
Դու խղճաս ինձ, ես տկար եմ, որպէս մոլորեալ ոչխար եմ.
Դու հովիւ քաջ, ես անճար եմ, փութացիր էհաս ինձի, Տէր։

Փութացիր էհաս ինձ խակոյն, դարձոյ զիս Տէր 'ի Քո սուրբ աուն,
Որպէս հայր անառակ որդոյն, խնդալով դու դաս ինձի, Տէր.
Գաս հանես զիս իմ մեղացէն, տաս ինձ մաքսաւորի լացէն.
Հառաչանոք և աղբաձէն, աղաչեմ նաեաս ինձի, Տէր։

Նաեա՛ սիրտ իմ, տուր աղբերեաց, արտասուս ականց իմոց լաց.
Զուրն որ պոռնկին լուաց, էնտով լվանաս ինձի, Տէր.
Լաց արտասուս՝ տաս իմ աչքին, հաճոյ լինեմ քո յառաջին.
Որպէս աւազակն 'ի խաչին, աղաղակեմ ցաւս ինձի, Տէր։

Ցաւս հոգոյ իմոյ փրկեա՛ զիս, 'ի յախտից մեղաց արկեա՛ զիս.
Առ 'ի եդեմ աղարկեա զիս, անդ թցեմ պահեաս ինձի, Տէր.
Պահեա զիս Տէր 'ի յատեան Քո, մինչև 'ի օր գալստեան Քո,
Նստեա՛ ահեղ դատաստան քո, շնորհես Քո սուրբ դաս ինձի, Տէր։

Դասս արդարոց բազմեալ թուիմ, երանաւէտ ձայնդ լուիմ.
Պարզ երես պատասխան տուիմ, խնդալով օրհնեաս ինձի, Տէր.
Օրհնեա զիս տէր օրն վերջի, պահեա զիս Տէր 'ի Քո միջի.
Արժանացոյ լոյս հանդերձի, փառոք պսակիս ինձի, Տէր։

Փառոք պսակ երկնաէն լոյս, Քեզ աղաչեմ Տէր իմ Յիսուս.
Արժան անես Յարթուն օղլուս, Քո սուրբ առաքաստ ինձի, Տէր։

3. ՁՂՋՈՒՄՆ ՎԱՅՆ ՄԵՂԱՑ

Վայ ինձ, վայ իմ գործին, վայ իմ մեղացն,
Ցուսացել եմ չարին, մեղայ քեզ Աստուած.
Զունեմ մին զղջալի արտասուս լացն,
Մոռացել եմ բարին, մեղայ քեզ Աստուած.

Զանգ և տախտակ տվին, ժամադուռ չեկի,
Ո՛չ իմ մեղքն լացի, ո՛չ մեղայ եկի.
Ականջ չեդի Աւետարան, Նարեկի,
Վայ իմ ետի դարին, մեղայ քեզ Աստուած.

Քո սուրբ պատուիրանն ես չըպահեցի,
Իմ հոգոյս զրկեցի, մարմնուս չահեցի.
Լոյսն Թողի գաբի մըթին նաեցի,
Անկա մէջ խաւարին, մեղայ քեզ Աստուած.

Քո սուրբ արգար ճանապարէն հեռացայ,
Միթէ մարմնով սաղ եմ, հոգիս մեռած ա.
Զարին հետևելով բարին մոռացայ,
Վայ էս իմ քէրդարին, մեղայ քեզ Աստուած.

Աչքս արատ հայեց, միտս չար խորհեց,
Կամքս հաճոյացաւ, ձեռս գուլի փորեց.
Ոտս ուղիղ ճանապարէդ մոլորեց,
Առ ի չարեաց ճարին, մեղայ քեզ Աստուած.

Քո տուած սուրբ հոգին ապականեցի,
Ո՛չ մեղայ եկի, ո՛չ խոստովանեցի.
Զարագործութիւնովս ինձ ըսպանեցի,
Վայ ինձ պէս տկարին, մեղայ քեզ Աստուած.

Գիտութեամբ եմ գործել մահածոյ մեխկերս,
Որպէս թագուցանեմ, Դու ես ծածկատես.
Քո աված սուրբ հոգոյն մահապարտ եմ ես.
Վայ ինձ պէս ընքարին, մեղայ քեզ Աստուած։

Քո սուրբ մարմին և արենէն ծոյլ կացայ,
Լոյս գրաթան թողի, գժոխն ըստացայ.
Ցարթուն օղլիս լալով, ողբով յուսացայ,
Քեզ պէս Բարերարին, մեղայ քեզ Աստուած։

4. ՏԱՂ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՄ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՒԱԾԱՇՈՒՆՉ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Հայր և Որդւոյն և սուրբ Հոգւոյն
Էականին հաւատացէք.
Երեք անձն է և մի Աստուած,
Մի բնութիւնին հաւատացէք։

Անսահման անիմանալի
Որդւոյն ծնեալ անքննելի,
Հոգւոյն բղխումն անպատմելի,
Անբաժանին հաւատացէք։

Անբաժանելի յերրորդւոյն,
Հայրն փառաւորէր յորդւոյն,
Հոգին սուրբ շրջէր վերայ ջրոյն.
Էլ միայնին հաւատացէք։

Միայն մի Աստուած է, մի կամք,
Մի թագաւոր է, մի սահմանք.
Անմահ է արարիչ և կեանք,
Տէր կենդանին հաւատացէք։

Կենդանի վերթևեան չորսին,
Սուրբ աթոռն բազմեալ յուսին.
Եօթնապատիկ եօթն լուսին,
Եօթնարփեանին հաւատացէք։

Եօթնարփեան լոյսին լոյս անցոյց,
Անտեսանելի է անցոյց.
Զոք կողմն աթոռն շուրջ կացոյց,
Օթևանին հաւատացէք։

Օթևան աթոռ անպատում,
Էլ յաւելի միտքս չէ դատում.
Անհասանելի է անհատնում,
Դուք էսքանին հաւատացէք։

Էսքան չէ, անհասանելի է.
Անթիւ է, անյայտանելի է.
Տէրն ինքն գիտելի է,
Իւր անուանին հաւատացէք։

Անունս ասաց կայացնեմ,
Մտածեց որ մին բան գոյացնեմ.
Երկինք երկիր հաստատացնեմ,
Որ տեսանին հաւատացէք։

Տեսաւ երկիր ամերևոյթ,
Եւ երկիր անպատրաստ և
ուրթ.
Անգոյ խաւար էր և աննիւթ,
Բնաբանին հաւատացէք։

Բանիւ հրամայեաց մութ և լոյս,
Բաժանեցան յայսկոյս, յայնկոյս.
Զուրն հանդարտեաց որտեղ էր
փոս,
Էգ հրամանին հաւատացէք։

Հրամայեաց երկինք և երկիր,
Ստեղծ ամէնն իւր տեղն եդիր.
Երկինք, աստղեր, երկիր, բոյսեր,
Զարդ արժանին հաւատացէք։

Արժան տեսաւ լոյս ցերեկոյն,
Մութ գիշեր և երեկոյն.
Զօրն գործել, գիշերն 'ի քուն,
Մուտ լուսանին հաւատացէք։

Լուսինք ստեղծեց երկու ձև,
Մին լուսնիակ, միւսն արև.
Տուեց զօր գիշերին պարգև,
Լոյս նշանին հաւատացէք։

Նշան տուեց զօր գիշերին,
Ստեղծեալ էր հրեշտակներին.
Դասք անմարմինք զօրքն վերին,
Փառաբանին հաւատացէք։

Փառաբանին սուրբ հրամանին,
Ասաց ստեղծեմ շունչ կենդանին,
Թռչունք, անասունք, գազանանին,
Ամենայնին հաւատացէք։

Ամենայն գետին սողունքներ,
Եւ կամ ջրային գեռունքներ,
Պատրաստեաց իւրէնց ուտմունք-
ներ,
Որ գոհանին հաւատացէք։

Գոհացնող էր. բարի բաշխող,
Շաղուէց կրակ, ջուր, քամի, հող,
Իւր կերպին ասաց ստեղծեմ մի
իշխող.
Կերպարանին հաւատացէք։

Իւր կերպին ստեղծէց մարդոյն,
Հոգին կենդան տուէց մարմնոյն.
Կանչեց. Ադամ է քո անուն,
Բառ բերանին հաւատացէք։

Բերէց կենդանիքն 'ի շնչէ
Ասաց ով Ադամ ճանաչէ,
Ողջի անուններն կանչէ,
Սաղ հայվանին հաւատացէք։

Սաղ ունէին իւրէնց նման,
Ադամ չտեսաւ իւր նման.
Տրտմեց սիրտն ընկաւ դուման,
Օգնականին հաւատացէք։

Օգնական ոք իւր նման չունէր,
Աստուած ասաց տրտմես ընդէր.
Ասաց ես եմ միայնակ, Տէր,
Թմրութիւնին հաւատացէք։

Թարեցոյց զԱդամ, որ էր հողէն,
զԵւայն քաշեց ձախակողմէն.
Ասաց սա քեզ տամ քո ճոթէն.
Մեր մեծ նաննին հաւատացէք։

Նա Տէրն ասաց դուք տիրեցէք,
Բաղցրութեամբ իրար սիրեցէք.
Ամէք, բազմէք, երկիր լցէք,
Ասաց քեանին հաւատացէք։

Ասաց շինեմ Եդեմական
Դրախտ ցանկալի և պատուական.
Տամ Ադամայ տեղ բնական,
Լաւ պղանին հաւատացէք։

Լաւէ Աստուած ով Ադամ, տես,
Այս ամենայն բարին կուտես.
Բայց էս մէկ պտուղն չուտես,
Տունկ բուսանին հաւատացէք։

Բուսաւ սատանէն մէջ օձին,
Վասն բարւոյ չար խորհեցին.
Էն պաք պտուղն բերեցին,
Որ դէմ անին հաւատացէք։

Բերին, դէմ արին Եւային,
Ասին կեր, հասիր քո փային.
Կլինես նման Աստուածային,
Ասաք քեանին հաւատացէք։

Ասաք սատանի հաւատացան,
Կերան երկուքն էլ մերկացան.
Լոյս դրախտէն արտաքսեցան,
Փոշիմանին հաւատացէք։

Փոշիմանին նստան լացան.
Աստուած կանչեց, ձէնն իմացան
Թզենու միջին թագ կացան,
Կարկտանին հաւատացէք։

Կարկտան Բզոյ տերևին,
Որ մարմինքներն չերևին.
Ադամ ասաց կնոջն Եւին.
Վայ մեր ջանին հաւատացէք։

Վայեց Աստուած, Ադամ, ուր ես.
Լուսեղէն փառքից տկլոր ես.
Քեզ ով ասաց պաքդ կերես,
Չար պղանին հաւատացէք։

Չար պտուղն վեռէց թափեց,
Քո ստեղծած կինն ինձ կապեց.
Կինն ասաց օձն ինձ խաբեց,
Չար գազանին հաւատացէք։

Գազանին ասաց ուտմունքդ ըլնի հող,
Ճանապարհդ երթաս փորսող.
Այսուհետ ով քեզի տեսնող,
Ցան սպանին հաւատացէք։

Տամ քեզ Ադամ գործ տիրեսցես,
Չարչարանօք հաց կերիցես.
Եւա ցաւօք ծնանիցես.
Քո խիզանին հաւատացէք։

Քո խիզանի ջանին բունի
Բիւրեցբիւր փուշ տատասկանի.
Մինչ 'ի ժամանակն հասանի,
Էլ մեռանին հաւատացէք։

Ելաւ Ադամ, տեղէն գնաց,
Դրախտի յանդիմանն Ծնաց.
Աստուած դրախտի դուռն կապեաց,
Զմերձենին հաւատացէք։

Մերձեցաւ Ադամ իւր կնկան,
Երկուքն էլ իրար հետ ցանկան.
Ծնանուեցան, աշխարհք ընկան,
Որ լցանին հաւատացէք։

Լցուեցաւ երկիր մարդով աշխարհ
Արին, կերան լաւ ցանք ու վար.
Բայց բարի չէր նրանց արար,
Որ շատանին հաւատացէք։

Շատացաւ իւրեանց մեղքերն,
Բարկացաւ որ պատիժ տայ Տէրն.
Կանչեց Նոյին տայ պատուէրն,
Զև տապանին հաւատացէք։

Զև տապանն էր Աստուածացոյց,
Մեր Նոյ նահապետայ ուսոյց.
Փայտով շինեաց, կպրով պրկոյց.
Վան էնսանին հաւատացէք։

Էնս ու ջէնս ամենայն ազգից,
Կէսն արուից ու կէսն իգից.
Հարամ երկու, հալալ եօթնից,
Լցան տանին հաւատացէք։

Մէջ երկնքէն ջուր հոսեցոյց,
Քառասուն տիւ և գիշեր գոչեցոյց.
Մարդ, անասուն կորնչեցոյց,
Էդ թիֆանին հաւատացէք։

Թիֆան կանգնեց ջուրն կալոյտ,
Յարեալից մինչ յարևմուտ.
Ծածկեաց թամամ սարերի տուտ,
Ողջ սատանին հաւատացէք։

Սատանեցան մարդ, անասունք,
Գազանք, թռչունք, ղեռունք, սողունք.
Աստուած ասաց հիմի թողունք,
Ջուր ցածանին հաւատացէք։

Ջուրն ցածացրոյց առ բարի,
Էլի ողորմած է աշխարհի.
Նոյայ տապանն նստեց սարի,
Երկրաբանին հաւատացէք։

Երկիրն որ ցամաքեցաւ,
Նոյ տապանի դուռն բացաւ.
Աղաւնին դուրս աղարկեցաւ,
Լուսէնք տանին հաւատացէք։

Լուսէնքն տարու, որ ինչ էր,
Կացին մին թև կանանչ էր.
Որ Նոյ տեսնելով ճանաչէր,
Էդ շուշանին հաւատացէք։

Շուշանն տեսաւ գետնաբոյս,
Փառք տուեց Աստուծոյ, առաւ յոյս.
Սողունք, անասունք արաւ դուրս,
Բիլաբանին հաւատացէք։

Բիաբանին արածեցան,
Յերկրէ յերկիր տարածեցան.
Ցեռ խիզանին մտածեցան,
Մատաղ տանին հաւատացէք։

Մատաղն արին, Ցէրն յիշեց,
Ինչպէս համեղ հոտ անուշեց.
Աստուած կեռացաւ, հոտ քաշեց,
Էն սեղանին հաւատացէք։

Սեղանն լցրոյց լի բարի,
Աստուած ասաց լաւ բան չարի.
Էլ չեմ անել, էս մինն արի,
Թողութիւնին հաւատացէք։

Թողեց Նոյ յաւելցան,
Մատաղն կերան, գոհացան.
Ի մէջ երկրի որաեղ կացան,
Նախ իջևանին հաւատացէք։

Նախ իջևանն ընկաւ մաքան,
Էնժամանակինէր որ փախփախման.
Ամառ, ձմեռ, գարուն, աշնան,
Զոք գովրանին հաւատացէք։

Զոք տարին եկաւ մին տարի,
Աստուած լցրուց ամէն բարի.
Հաճութիւն եկաւ աշխարհի,
Բայց Նադան ին հաւատացէք։

Նադան ին չունին մարգարայ,
Ո՛չ մեծ ունէին, ոչ ստարայ.
Մինչի ամաթ եկաւ Թարայ,
Կուռ գուռանին հաւատացէք։

Կոքապաշտին բոթին յուսած,
Էլ քարոզութիւն չին լսած.
Հայր Աբրահամն մաքուն ասաց,
Էն պաշտպանին հաւատացէք։

Պաշտել չեն էն բոթն պղծի,
Այն կ'պաշտեմ, որ ինձ է ստեղծի.
Արարիչ Աստուած կայ մեծի,
Երկնաքանին հաւատացէք։

Երկնաքանն Աստուած հաւատամ,
Աստուած կանչեց Հայր Աբրահամ,
Եկ առ ինձնից քեզ նշան տամ,
Իմ հրամանին հաւատացէք։

Հրամայեաց ես եմ Աստուած քո,
Անուամբ Հոր, Որդւոյ, Հոգւոյ.
Գնա՝ քարոզէ յետ դարձրու,
Ազգականին հաւատացէք։

Ազգին քարոզելով զարթեցրեց,
Մտաւ բոթերն ողջ ջարթեց.
Խրատելով սիրտ հանդարտեց,
Ողջ ունայնին հաւատացէք։

Ունայնին կռապաշտութիւն,
Աստուած տուեց պարկեշտութիւն.
Աշխարհիս տուեց հաշտութիւն,
Էն չօքանին հաւատացէք։

Չօքանն Մովսէս էր լեառնում,
Տեսաւ մորենին էր վառվում.
Աստուածային ձայն բարբառում,
Լոյս փայլմանին հաւատացէք։

Փայլում էր որ Մովսէս տեսած,
Դարձաւ առ մորենին գնաց.
Կանչեաց Մովսէս այդտեղդ կաց,
Սարսեաց ձայնին հաւատացէք։

Սարսափեաց Մովսէս ընկաւ վեր,
Տէրն ասաց Մովսէս կանգնիր վեր.
Ես եմ ստեղծողն Աստուած ձեր,
Իմ հրաշքներին հաւատացէք։

Հրաշք ես տամ ձեռդ փէտին,
Ով Մովսէս վեր գձիր գետին.
Տես ինչ կ'դառնայ Նա կէտին,
Գուք սրանին հաւատացէք։

Սա գձեց փէտն օձ դարձաւ,
Նա փախեաւ կանգնել չկարցաւ.
Էլ Տէրն ասաց բռնեց բարձաւ,
Գաւազանին հաւատացէք։

Գաւազանն առաւ գնաց,
Ահարոնայ արար իմաց.
Փարաւօնի ազգին քարոզեաց,
Ողջ դարձանին հաւատացէք։

Ողջ դարձ չեկան, ով որ եկաւ,
Նա Փարաւօն յեանէն ընկաւ.
Գաւազանով ծովն ծագեաւ,
Որ յանց կանին հաւատացէք։

Իւր ժողովրդին հանցկացրուց,
Փարաւօն ազգին էլ անցուց.
Տարաւ Երուսաղէմ հասուց,
Բնակարանին հաւատացէք։

Բնակեցան սարն Սաղիմայ,
Մովսէս գնաց լեառն Սինայ.
Տէր Աստուած խօսեցաւ 'ի նա,
Մէջ խորանին հաւատացէք։

Մէջ խորանին հրաման արաւ,
Երկիր պագեց և յետ դառաւ.
Ժողովուրդն ին սոված, ծարաւ,
Փարիշանին հաւատացէք։

Փարիշան տարաւ իւր խտուր,
Գաւազանն քարին ետուր.
Բղխեցան տասներկու աղբիւր,
Արբեցանին հաւատացէք։

Արբեցան, կերան, լիացան,
Զուարճացան և հիացան.
Աստուծոյ բանի վերայ կացան,
Թէ ինչ անին հաւատացէք։

Ինչ արին ասին Մովսիսայ,
Գնա մեր Տիրոջն ասա.
Մին բաբի բան մեզի յուսա,
Տասնաբանին հաւատացէք։

Տասն զրոյցը Աստուած գրեց
Տուեց Մովսիսայ վեր բերեց.
Ժողովրդին էլ ուսուցրեց,
Պատուիրանին հաւատացէք։

Պատուիրանն պինդ պահեցին,
Ամենայն Իսրայէլացին.
Քրիստոսայ ճամբին նայեցին,
Քրկչականին հաւատացէք։

Քրկիչն աշխարհի յուսացին,
Ողջ մարգարէքն ասացին.
Գալոց է Տէրն Նազովրեցին,
Զայն նրանին հաւատացէք։

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ձայն հրեշտակի վերստէն գայր,
Ասաց՝ ողջոյն քեզ Տիրամայր.
Մարիամ ասաց՝ ուչ գիտեմ այր,
Կուսութիւնին հաւատացէք։

Կոյս Մարիամ տամ աւետիս,
Հաւատաս դու այս ողջունիս.
Բանն Աստուած է, որ ծնանիս,
Աստուածութիւնին հաւատացէք։

Ասաց ողջունել երրորդոյն,
Դու կ'ծնանես Աստուածորդոյն.
Եղիսաբեթ սուրբ ամլորդոյն,
Տես ընդունին հաւատացէք։

Ընդունեց սուրբ Տիրամայր կոյս,
Ասաց եղիցի ինձ քո լոյս.
Էնտեղ արգանտն ընկաւ Յիսուս,
Ցուութիւնին հաւատացէք։

Ցուութիւնն մին ամսուայ էր,
Մտել էր իւրն հասանէր.
Գնաց մորքոյրին տեսանէր,
Տեսութիւնին հաւատացէք։

Տեսաւ, ողջունեց մորքոյրին,
Սուրբ Յովհաննէս խաղաց փորին.
Երկիր պագեց թագաւորին,
Մաքրութիւնին հաւատացէք։

Մաքրեցաւ արգանտն ընտրեալ,
Ծնանուէց մայրն առաւեալ.
Տարաւ անապատ բնակեալ,
Բնակութիւնին հաւատացէք։

Բնակութիւնն էր 'ի մէջ սարին,
Կ'լսէին ձայն բարբառին.
Կասէին Փրկիչն է աշխարհին,
Տէրութիւնին հաւատացէք։

Տէրն ինն ամիս արգանտն մնաց,
Յովսէփ՝ Կուսին առաւ գնաց.
Բեթղէհէմ այրին ծնանուեաց,
Մանկութինին հաւատացէք։

Մանուկ ծնաւ Էլի Էլի,
Դասք հրեշտակաց Գաբրիէլի.
Ժողովեցան բարբառելի,
Փառք բարձունին հաւատացէք։

Փառք 'ի բարձունն որ ասին,
Հաւատացեալք աստղն տեսին.
Երեք թագաւորք միասին,
Փափագ ունին հաւատացէք։

Փափագ ունին երեք կայսերք
Փրկիչն աշխարհի տեսնել,
Մանուկ երիտասարդ և ծեր.
Տեսութիւնին հաւատացէք։

Տեսին փափագներն առին,
Երկիր պագին ու յետ դառին.
Ի մէջ լուսին Աստուած գառին,
Պատմութիւնին հաւատացէք։

Պատմութիւն արին Յիսուսին,
Որ փայլում էր 'ի մէջ լուսին.
Ամենքն էլ միակերպ տեսին,
Ծննդեանին հաւատացէք։

Ծնողից յետ կոյս Մալով,
Անապական և խնդալով,
Առաւ տաճարն գնալով,
Սողոմոնին հաւատացէք։

Սողոմոն տաճարին փակուած,
Ծերունին այն տեղ բնակուած.
Փրկիչն գնաց արձակեաց,
Արձակմանին հաւատացէք։

Արձակեաց Բանն Աստուած բարի,
Անյայտ մատնեցաւ յաշխարհի.
Մինչի որ երեսուն տարի,
Յայտնութիւնին հաւատացէք։

Յայտնեաց իւրն երկրականին,
Գնաց գետն Յորդանանին.
Չախեաց գլուխն սատանային,
Սուրբ Յովհաննէսին հաւատացէք։

Սուրբ Յովհաննէսն էր մկրտեց.
Աղամային մեղքերն սրբեց.
Մեզի համար նշան կանգնեց,
Աւազանին հաւատացէք։

Աւազանին մկրտեցաւ,
Հոգին աղաւնակերպ իջաւ.
Հայրն Աստուած վերստին գոչաւ,
Էդ իմ Որդւոյն հաւատացէք։

Որդին Աստուած էր յայտնուեց,
Սուրբ առաքեալն ժողովեց՝
Ղազարուն յարութիւն տուեց,
Բազմութիւնին հաւատացէք։

Բազում մեծ հրաշքներ գործեց,
Էն չար սատանին էլ փորձեց.
Մինչի որ մահն մերժեց,
Ասաց մահին հաւատացէք։

Ասաց Քրիստոս առաքելոց,
Դուք մինդ ինձ էք մատնելոց.
Հրէաներուն յայտնելոց,
Պետ Սիմոնին հաւատացէք։

Պետրոս նայեց առ Յովհաննէս,
Ակնարկեցին իրար երես.
Ողջն էլ ասին մի թէ եմ ես,
Վերնատանին հաւատացէք։

Վերնատանն առաքեալք էին,
Քրիստոս կտրեց հացն անեկին.
Բաշխեաց մարմինն հետ բաժակին,
Սուրբ արիւնին հաւատացէք։

Սուրբ արիւնս տամ ձեզ կտակ,
Զայս արարէք ինձ յիշատակ.
Ես պէտք է ընեմ նահատակ,
Մատնութիւնին հաւատացէք։

Մատնեաց Յուդա, էն պիղծ բերան, Սուրբ Հոգւով սրբով լցուեցան,
Եկան, ըմբռնեցին, տարան. Յերկրէ յերկիր առաքեցան.
Ի կայիափայ ապարան, Անուամբն Հօր քարոզեցան,
Զարչարանին հաւատացէք։ Աւետարանին հաւատացէք։

Զարչարանօք արտնջեցին, Աւետարան բանն Փրկչին,
Տէրն Քրիստոս խաչեցին. Յուսանանք Աստուած արարչին.
Տախտակի վրայ դամեցին, Մինչ միւս անգամ յօրն վերջին,
Սուրբ մահուանին հաւատացէք։ Գալստեանին հաւատացէք։

Մանն էր լեղի արբուցին, Գալստեան օրն էլի էլի,
Գեղարդով կողն խոցեցին. Հրաման կ'տայ Գաբրիէլի,
Մեռաւ, տարան ամփոփեցին, Ձայն որոտման սարսափելի,
Գերեզմանին հաւատացէք։ Փող գոչմանին հաւատացէք։

Գերեզմանն մարմին հոգին, Գոչման օրն չունիմ թաղաթ,
Հետ իրա Աստուածութիւնին, Երկինք, գետինք, տունք և բաղաթ,
Ամբարձաւ իջաւ զնդանին, Գալարուին որպէս մագաղաթ.
Էդ հրաւէրին հաւատացէք։ Էն օրուանին հաւատացէք։

Հրաւիրէց, գժոխքն էլ քակտեց, Էն օրն հոգին մարմնովին,
Էն չար սատանին էլ ատեց. Ազգ ու ազինք կ'ժողովին.
Տրտմեալ հոգիքն ազատեց, Կ'սաղանան բոլորովին,
Յարութիւնին հաւատացէք։ Գեթսեմանին հաւատացէք։

Յարեաւ Աստուած յետ երից օր, Սահման ունի բազում զաչն,
Նստաւ ընդ աջակողմն իւր Հօր. Տէրն Քրիստոսայ առաջն.
Սուրբ Հոգին առաքեաց շնորհ, Փայլի կենարար խաչն,
Մեռանանին հաւատացէք։ Լոյս փայլմանին հաւատացէք։

Մեռանանն առաքեալք էին, Լուսինք, արև կ'շոշափուի,
Վերնատանն բազմեալք էին. Աստղունք, յերկիր կ'թոթափուի.
Սուրբ Հոգին իջաւ՝ մաքրուէին, Մեղաւորն կ'սարսափի,
Մաքրութիւնին հաւատացէք։ Տէրութիւնին հաւատացէք։

Տէրն յայտնեց բազմել գոլով,
Դասք հրեշտակաց սպասելով
Սուրբ, սուրբ, սուրբ ես Տէր ասելով,
Դատաստանին հաւատացէք։

Դատաստանին Տէրն անաչառ,
Կ՚ոկուէ մեղաւոր ու արդար.
Կ՚կանգնեսցէ երկու դաթար,
Աջակողմեանին հաւատացէք։

Կասէ աջակողմեան կանգնածներ,
Այն փոքրկանց ողորմածներ.
Եկէք իմ Հայրի օրհնածներ,
Արքայութիւնին հաւատացէք։

Արքայութիւնն ժառանգեցէք,
Լուսեղէն հանդերձ զգեցէք.
Հոգւով, մարմնով կենդան կացէք,
Յաւիտենին հաւատացէք։

Յաւիտենին չի անցկենալ,
Ո՛չ հաւատալ, ո՛չ պարդև տալ.
Ո՛չ ըլթմաս, ո՛չ սուտ խօսալ,
Էն դիւանին հաւատացէք։

Էյ ձախակողմեան կանգնածներ,
Հոգւով մարմնով զզգուածներ.
Կասէ գնացէք անիծուածներ,
Մէջ տանջանքին հաւատացէք։

Տանջանքն մեղաւորաց, չարոց,
Կեանքն յաւիտեան է արդարոց.
Արդարք լուսին, չարք խաւարոց.
Գոծում չունին հաւատացէք։

Զըմ արժան ես Յարթիւն օղլոյս,
Շատ մեղապարտ Յարթիւն օղլոյս,
Խօսքն լսող Յարթիւն օղլոյս,
Ձեր ոտաց հող Յարթիւն օղլոյս,
Շարադրանին հաւատացէք*)։

---

*) Այս ոտանաւորը չկայ իսկական դաւթարում, ընդօրինակել ենք պր. Գէորգ Զօհրաբեանի ձեռատեսարից։

Դ.
ԽՐԱՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1. ՎԱՍՆ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Ադամորդուս միտկն զօրեղ, սիրտն ուրախ պայծառ ա պիտի,
Խօսկն ընտիր, լեզուն հաւեղ, յինքն խելօք գառ ա պիտի.
Խելօք նստի յամէն դասում, շատոնք կանգնին ուր ըսպասում,
Շօհլայ տայ յամէն մաջլիսում, կանթեղի պէս վառ ա պիտի.
Կանթեղի նման շողշողայ, տեսնօղն սարսափի, դողայ.
Եթէ որ ածող կանչող ա, նա քաղցր բառբառ ա պիտի.
Քաղցրիկ բանայ ուր բերանն, իմանայ էն խօսկի քեանն,
Տայ մուգառ պատասխանն, զրըցին պատճառ ա պիտի.
Անպատճառ զրուցն սուտ ա, կատարում չունի նայմուդ ա,
Շուտով մարդի գետին կուտա, յետոյ հէքիմ ջառահ պիտի.
Մարդս հէքիմ ընի ուր գարդին, մուհթաջ չրմնայ նամարդին,
Ափսոս գայ երեսի փարդին, ուրն թաղլիթ առ ա պիտի.
Թաղլիթ արա, ջանդ.պահիր նոր, թող հաստ կտաւն ընի քո շոր,
Ցարթիւն օղլի քեզի ինչ որ, ասես կապէս գառ ա պիտի,

2. ԱԴԱՄՈՐԴԻ

Ադամորդի, ինչ բան որ դու ըսկսես՝
Ուղիղ սրտով քո Աստուածն եադ արա,
Աստուած քո ումիդին, հա միշտ էս կասես,
Էլ մի վախել, եա դատ ըլնի, եա դարայ։

Չար և բարի մարդիս համար կապած է,
Աստուած մեծ է, ուր դարգանն կապած է,
Ինչ խեղճ տեսնես չար մարդի ձեռ կապած է,
Թաղալլահ ար դու էն մարդին եադ արա։

Օվ որ չար ճամբիցն մտկով կալնէնայ՝
Եդեմական դրախտումն անհատ կալնէնայ.
Չարագործութիւնն եաղին կալնէնայ,
Դժոխումն եա մէհնաթ ա, եա դարայ։

Մեր Աստուծոյ ճանապարէն օվ էլաւ,
Նա որսացաւ, չար ոտանքնով էլաւ.
Մարդ չի խաբար Աստուծոյ մօտ օվ է լաւ,
Նա խեղճ ըլնի, եա բիշարայ, եա դարայ։

Ցարթիւն օղլիս եա չարութիւնն վառ ճարի
Էլ յոյս ունեմ էն լոյսեղէն վառ ճարի,
Օվ կամենայ այս խօսքերս վառ ճառի
Նրան համար եա գօվհար ա, եա դարայ։

Յ. ՄԱՐԴՍ ՊԷՏՔ Ա

Մարդս պէտք ա խոնարհ կենայ,
Եթէ ֆահմ ու հուշ ունենայ,
Մտածի, մին բան հասկանայ,
Համ էլ իրենից ջուշ ունենայ։

Ջուշ անի, հարգից չսառի,
Դոր կանթեղ մաշկիսում վառի,
Քաղցրաձայն ուղիղ բառբառի՝
Լեզուն քաղցր, անոշ ունենայ։

Անոշ կենայ, սիրուն բարթի,
Որ խօշն գայ ամէն մարդի,
Օրինակ մին ղօնչայ վարդի՝
Ոչ թէ ձեռին փուշ ունենայ։

Փուշն օրինակ է սատանի,
Որ նաղաստ ա մարդի ջանի,
Կը խաբի, ճամբից կը հանի,
Մարդ պէտք ա թաշֆիշ ունենայ։

Թաշֆիշ անի հէնց էն վախտի,
Որ չարն իրան չյախթի.
Տեղ ունենայ մէջ դրախտի,
Աղօթքին ղգոյշ ունենայ։

Յարթիւն օղլին եմ մեղաւոր,
Ոչինչ տեղից չունեմ շնորհ,
Եթէ լինեմ արժանաւոր,
Պէտք ա խուզա փուշ ունենամ։

Ե.
ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

1. ԽՆԴՐՈՒՄ ԱՄ ՊԱՐՈՆՆԵՐԷՆ

Խնդրում ամ պարոններէն,
Ասէք՝ շնորհաւոր ըլնէնայ,
Փեսայի և հարսի վերայ
Աստուծոյ շնորհ ըլնէնայ։

Սուրբ Կարապետայ օրհնութիւնն,
Ուրէնց տայ աջողութիւնն.
Օրհնեալ լինի տեղ ու տունն,
Ուրախ թագաւոր ըլնէնայ։

Ուրախ խաղալէն, խնդալէն,
Շաբաշ կանչելէն, ծափ տալէն,
Ուրախ վաելի մամալէն,
Օխտն տղի հէր ըլնէնայ։

Մէջտ իրուր ոիրով ըլնէնան,
Շալլահ մին բախտավ ծերանան,
Մինչի հարիւր տարի ճնան,
Էս հին հազար, նոր ըլնէնայ։

Թագորահէր, աչքդ լոյսի,
Կարմիրն կապես միուսի,
Ցարթիւն օղլի Յովանէսի՝
Խնդրէք լաւ շնորհ ըլնէնայ։

Զ. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՐՍԱՆԵԱՑ

Արարիչ աստուածութիւնն,
Թագաւորի արևն օրհնէ.
Երեք անձ և մի բնութիւնն,
Նոր թագուհու կեանքն օրհնէ։

Բարձր աստիճան Մարեամ կոյսն,
Որ պարագրեաց անճառ լոյսն.
Փրկիչն աշխարհի Յիսուսն,
Բազմականաց արևն օրհնէ։

Գաբրիել հրեշտակապետն,
Որ ունէր հրեղէն նետն.
Միքայել ինքը դաս հետն,
Այս տուն-օթևանն օրհնէ։

Դասք ան մարմնոց սրբարէնքն,
Էն խաչածև քերովբէքն.
Եւ վեցթևեան սերովբէքն,
Թագաւորի կեանքն օրհնէ։

Երանելի Եղիայ Ենովք,
Համբարձման լուսեղէն կառովք.
Զայնիւ երգէր նոյն բարբառովք,
Նոր թագուհու կեանքն օրհնէ.

Զոր ստեղծ Աստուած Ադամ ձեռօք,
Զարդարեց լուսեղէն փառօք.
Նոյ նահապետ ձայն բարբառօք,
Այս խաչ եղբօր կեանքն օրհնէ։

Էն հայր Արրամայ կուրքն կողոպ,
Սահակ որդին և սուրբն Յակովբ.
Համբերող երանելի Յովբ,
Հրաւիրելոց արևն օրհնէ։

Ըսկիզբն Մովսէս մարգարէն,
Հրաման առաւ Բարերարէն.
Պատգամ բերեց Սինա սարէն,
Թագաւորի արևն օրհնէ։

Թագաւոր բարի սրբարէն,
Տէր Մելիքսէթ Անարոն.
Մախկեալ գաւազան բուրվառովն,
Նոր թագուհու կեանքն օրհնէ։

Ժողով մարգարէից դասին,
Որ Քրիստոսայ գալուստն ասին.
Քսան և չորքն էլ միասին,
Քահանայից կարգն օրհնէ։

Ի Զաքարիայ այնմ յետն,
Մեծածնունդ Եղիսապետն.
Սուրբ Յովհաննէս Կարապետն,
Ձեր ամենի կեանքն օրհնէ։

Լուսաթաթախ Ստեփաննոսն,
Առաջին սուրբ մարտիրոսն.
Մեր ստեղծող Քրիստոսն,
Թագաւորի կեանքն օրհնէ։

Աշն երևման կենարարն,
Որ Քրիստոսայ չարչարանն.
Մելգոն, Գասպար, Բաղդասարն,
Նոր թագուհու կեանքն օրհնէ։

Տերունի սուրբ Սիմէոնն,
Որ բնակեալ էր այն սուրբ տանն.
Զորս գլուխ աւետարանն,
Բազմականաց կեանքն օրհնէ։

Կաթուղիկէ Պետրոս, Պօղոս,
Թովմաս, Անդրէաս, Բարթուղմէոս,
Օհան, Շմաւոն, Թադէոս,
Այս տան օթևանն օրհնէ։

Հայրապետաց սրբոց դասուն,
Տան ուրն և երեսուն.
Այն սուրբ կուսանքն քառասուն,
Թագաւորի կեանքն օրհնէ։

Զեր բարեպաշտ Աբգարիոս,
Մեր թագաւոր Կոստանդիանոս.
Սուրբ Տրդատ և Տիմէթէոս,
Նոր թագուհու արևն օրհնէ։

Ղամբարափայլ վառեալ լուսոյն,
Երեք մանկունքն քառասուն.
Աշակերտէք եօթանասուն,
Զեր ամենի կեանքն օրհնէ։

Ճշնաւոր հայր Անտոն Պօղոս,
Պօղոս, Մակարա Ոնուփրիոս.
Աբբայ, Մարկոս, Սրապի Նեղոս,
Զամիաթի արևն օրհնէ։

Մեսրովբ, Գրիգոր Նարեկացին,
Ներսէս, Օհան Որոտնեցին,
Սահակ, Մովսէս Տաթևացին,
Թագաւորի կեանքն օրհնէ։

Ցամենայն հայոց սրբազան,
Լուսաւորչա տեղն իշման.
Երուսաղէմ լոյս գերեզման,
Նոր թագուհու կեանքն օրհնէ։

Նոյն իշման տեղի սուրբ տունն,
Սուրբ մեռոնայ օրհնութիւնն.
Աւազան մկրտութիւնն,
Քահանայից կեանքն օրհնէ։

Շատ մեղապարտ Ցարթուն օղլու,
Դու ողորմաս տէր իմ Յիսուս.
Խնդրեմ աղաչանքն առնուս,
Զեր ամենու կեանքն օրհնէ։

3. ՀՐԱԺԵՇՏ ՀԱՐՍԻ

Եկայք առ իս հայր և մայր իմ,
Բան մի ասեմ քոյր, եղբայր իմ,
Եկեալ է սիրելի այր իմ,
Մնաք բարեաւ, ես գնացի։

Հայր, ինձ հասուցեալ ես հասակ,
Մատիր, օրհնեայ իմ սուրբ պըսակ,
Ունիս վերէս դու շատ վաստակ,
Հալալ արա, ես գնացի։

Մայր իմ, կըրեալ ես, վասն իմ աշխատ,
Տիւ և գիշեր անքուն և շատ,
Եթէ տեսեալ ես ինձնէ վատ՝
Դու յիս ներեա՝, ես գնացի։

Մի լալ մայր իմ, մի հեկեկալ,
Բազում փեսայիս է եկեալ,
Հրաման Տեառն է, ոչ կարեմ կեալ,
Դու համբերեա՝ ես գնացի։

Արի՛ մայր իմ, դալար աղբիւր,
Մատիր առ իս ինձ օրհնանք տուր,
Հալալ արա կաթ քո մաքուր,
Որ ես կերեա և գնացի։

Մայր, ինձ ծընար յոյժ դիպն ցաւոք,
Գահպանեցիր կալեալ թևոք.
Այժմըս մնաք դուք բարեօք,
Ի ձէնչ յարեա, ես գնացի։

Արի տեսնեմ, Նազելի քոյր,
Տացուք միմեանց բարի համբիւր.
Ընդէ՞ր լինիս վասն իմ տրխուր,
Արի պարեա՛, ես գնացի։

Խընդրեմ 'ի ձէնջ իմ ազգականք,
Յոյժ սիրելիք և պատուականք,
Սրբոյ 'ի սիրտ տուք ինձ օրհնանք,
Այսմ օրեա, ես գնացի։

Խընդրեմ 'ի քէն ազնիւ եղբայր,
Եկ և գնայ, մի մոռանայր,
Զքնչ հրամանն հայր մեր և մայր,
Դու կատարեա՛ ես գնացի։

Յուժ Նազելի հարս մեր սիրոյ,
Ուրախ խնդաս ընդ առն քո.
Դուք վաելեք տուն հօր իմոյ,
Հաբիւր տարեայ, ես գնացի։

Քեզ աղաչեմ Տէր իմ արքայ,
Զարն 'ի միջոյ մերմէ հերքեա՛.
Յարիւն օղլուս ասէք երգեայ
Երգն նորա, ես գնացի։

Զ.
ԵՐԳԻՆԱԿԱՆ

1. ԵՐԳ ԱՑՕՈՒ

Է՛յ պարոններ, մին ուլ ունի գեառոտ էր.
Մին պոուկն քօռ էր, մինն կաթ չունէր.
Ջանն էր քաչալ, հէնց գիտէի գառոտ էր.
Ոտն խօ չօլախ էր, ձեռն էլ քեաթ չունէր։

Մարդս երթէր կթելու, պէտկ էր մտածէր,
Թէ էտուր կաթն նա ո՞րտեղ կածէր.
Համ քացի կըգցէր, համ էլ կըխածէր.
Սօյից շատ նաչիմ էր, ափսո՞ս գաթ չունէր։

Շատ փողաոր պէտ էր ուլիս գին դնէր,
Նա մէգ գազկի չածէր, աշխարք կըգնէր,
Տարուն տաս, քսան չուխտ ուլ կըծնէր,
Սաղ անպոզ, անպոչ ին, մէգն գեաղ չունէր։

Ուլս լաւ կօկլիկ էր, շատ բրթօտել էր,
Հայ միշտ խոտ կը արծէր, դարմանօտել էր.
Եվ ամրթեցի միսն այբ չունէր, հոտել էր,
Մին թիքայ չըկերվեց, իսկի վատ չունէր։

Ուլս շատ երկար էր, կունդուլ գդի պէս.
Գոզերն կըծաղկեր գարնան բդի պէս.
Է՛յ պարոններ, Ցարթուն օղլուս սդի պէս՝
Ադամց մինչ այսօր, ոնչօվ եաղ չունէր։

2. ԽԱՂ ՀԱԿԱԴԱՐՁ

Շատ քեամալի տէր եմ, ոչինչ չեմ խաբար,
Ամէն քէսմ էլ ունեմ, ձեռնէս չի գայ բան.
Գովլաթը էլել ա հազարէն հազար,
Հասրաթ եմ, որ ուտեմ շամէնէ աղցան։

Զրի նման չարբ եմ, ուղի պէս անժուռ,
Ցորենս կալկալ է, չունեմ մին կէս բուռ.
Ոնչըչուր մուհթաջ չեմ, կընդնեմ դռնէդուռ,
Շատ դումաշի տէր եմ, չունեմ պատմուճան։

Բամպակի պէս ծանր եմ, ոսկու պէս թեթև.
Թանաքի պէս սիպտակ եմ, մածոնի պէս սև.
Գժի պէս խելօք եմ, խոնհարի պէս խև,
Զունայ որ խելք չունեմ, կասեն ահլքեան։

Վարդապետ չեմ, որ դամ նախիրդ տանեմ.
Ես չօբան եմ, շատ լաւ պատարագ կանեմ.
Թամբալի պէս գիշեր ցերեկ կըբանեմ.
Ամարաթի տէր եմ, չունեմ մին մասկեան։

Զանս էնպէս դինջ է, դոր կոտրած կուռն,
Հէնց փըթած եմ, մոնցօր պողպէջ դուռն.
Ուղտի պէս շիդագ եմ, մամի պէս ծուռն,
Էդպէս բիայբ, մաթթահ չկայ խսկի տան։

Շրի պէս վախ ունեմ, հաւի պէս ջուրիեաթ
Խոզի պէս պոզ ունեմ, ճնճղի պէս կաթ.
Անգեռի խելք ունեմ, աղքատի դովլաթ.
Էնդուր ինձի կասեն ծանրը բազրգան։

Սառուցի պէս տաք եմ, քողզի պէս սառն,
Գուլուլի պէս երկար եմ, կունդուլ ինչ ծառն.

Լեղու նման քաղցր եմ, մեղրի պէս գառն.
Զունայ ուտելու չեմ, կըգցեն բերան։

Սիրուն եմ, բաղուսաթ, անկերպ եմ բարթին.
Խելքով գիտեմ, փուշն լաւ է, կանց վարթին.
Ջոռի պէս կըտեսնեմ, հեռանց մարթին.
Զունայ լաւ դիդ ունեմ, կասեն ջքալվան։

Հայլու պէս բրթոտ եմ, իծու պէս անմազ.
Շաղբրի պէս անծակ, կորկի պէս գազ գազ.
Ուղտի պէս դաբ կածեմ, գորտի նման սազ.
Էյժան հարսնիք կանեմ, մինն տաս թուման։

Ցըլի պէս պստիկ եմ, մոծկի պէս եքայ.
Հացս է խալվար խալվար չունեմ մին թիքայ.
Ցարթուն օղի ինչ մէկն ասիր հէրիք ա.
Մին քիչ էլ ծուռն ասա, ըլնես խալսան։

3. ՆԱԽԱՏԱԿԱՆ ԽՐԱՏ ԱՌ ԱԼԼԱՀՎԷՐԴԻ ԱՇԱԿԵՐՏՆ ԻՒՐ

Զարմացել ամ էս աշխարէն,
Թէ ինչպէս աշխար ա էլել.
Քուլուղն չէ վախտան քարէն,
Խառ մօհրէն գովհար ա էլել։

Դառ էլ գովհարին հոլան չի
Ցինքն խակի տեղ երէվան չի.
Ա՛յ պարոններ, էդ մին բան չի,
Խրոան մօհթաբար ա էլել։

Խրոսի բանն դառ էլ սանլ ա,
Ման կըտան մանլայ բըմանլայ.

Դաղիմ քեանանաս, քօհնայ, ֆահրայ,
Ծանրը սօվդրդար ա էլել

Զարմանք չի քեանանասի բանն,
Ֆիտակ է քան թէ հայվանն.
Գարշելի պիղծ չար դազանն,
Ինչ խելօք ոչխար ա էլել

Եկէք ասեմ քանց էդ լաւն,
Զաղալին ուտում է հաւն.
Գող գաղ ու սև ակռաւն,
Թօղրին բարաբար ա էլել

Էդ թողէք, ասեմ յիրուշն,
Վարթին չէ հօվանում փուշն.
Անեբևոյթ բայիղուշն,
Բլբուլին համքար ա էլել

Ցարթուն օղլիս մաթ մնացի,
Դաս էդպէս բան չի յիմացի.
Շրերն եատ են մնացի,
Աղուէսն սարդար ա էլել*։)

---

*) Երգի մակատին գրած է. «Էն մարդի համար հօրից, մօրից աշինչ տեսած չը լինի և յինքն մին փոքր իր մեծ տեսանի, անկարող լինի և անքաղաքավար և յինքնհաւան»։

Է.
ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ—ԱԼԼԷԳՕՐԻԱԿԱՆ

1. ՀՈԳԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ

Հոգին և մարմինն եկին բաս արին.
Մարմինն ասաց, աշխարը գալն լաւ կլնի,
Տասներկու ամիս է ողջ բոլոր տարին,
Անեմ խնդումն ու խաղալն լաւ կլնի։

Հոգին մարմնուն ասաց, թէ ինձ կնաես,
Մեր Աստուծուն մեղայ տալն լաւ կլնի.
Բոլոր տարին ծոմ ու պասդ կըպահես,
Ինձ էլ կանես դու, խօշհալն լաւ կլնի։

Մարմինն ասաց, տես որ դու բիքեամալ ես,
Ես ինձի չեմ զրկի, թէ դու խօշհալ ես.
Ուզում ես ըռուզզուս դուռն դու կալես,
Քեզի չըգնած մահալն լաւ կլնի։

Հոգին մարմնուն ասաց, վայ անդէտ յիմար,
Թաղուել աս մեղքի մէջ, դեռ դու չես խաբար,
Թէ իմանաս լաւ եմ խօսում քեզ համար,
Զկորցնես քո քեամալն լաւ կլնի։

Մարմինն ասաց, դու ուզում ես իմ վատն,
Ես իմ քեամալն ունեմ, մի տալ խրատն,
Ունենամ բիւրեցբիւր դավլաթ ու զադն՝
Ժողովեմ աշխարիս մալն լաւ կլնի։

Հոգին ասաց, թէ դու ասում ես զորդն,
Մոքիցդ մի գցի էն սուրբ Երրորդն,
Տուր աղքատաց զադիդ քո տասանորդն,
Կենացէն փայ ունենալն լաւ կլնի։

Մարմինն ասաց, ինչ եմ տալիս օտարին՝
Կոտամ ուտէ մօտիս ընկեր համքարին,
Զառ կըկարեմ կըհագցնեմ իմ եարին.
Շինեմ գեղեցիկ գեօղալն լաւ կընի։

Հոգին ասաց, քեզ ինչ կանէ գեօղալն,
Եկեղեցում գոչիր դու մեղայ տալն,
Քրիստոսէն ունեցիր դու ակնկալն,
Որ տեսնենք լոյս ջամալն լաւ կընի։

Մարմինն ասաց, ինչ ես քաշում էդ ջաֆէն,
Կանեմ էս աշխարհիս զօղալ ու սաֆէն,
Ոտէս գլուխ հաքնեմ զառ ու զառբաֆէն՝
Մէջկս կապեմ թիրմա շալն լաւ կընի։

Հոգին մարմնուն ասաց, կանց լեղի դառն՝
Ուզում աս ինչ անես զառբաֆն ու զառն,
Խնդրիր որ հաքանես լոյսեղէն փառն,
Եդեմական դրախտն երթալն լաւ կընի։

Մարմինն ասաց, ինչ լաւ խօսացիր բարի,
Գնամ աղօթք անեմ մին բարձր սարի,
Աղօթով մեղքս լամ մին քանի տարի՝
Մինչի որ զա իմ աջալն լաւ կընի։

Հոգին ասաց, թէ դու տեսնես էդ բանն,
Պարզերես կըգնաս Քրիստոսայ ատեանն,
Մեր Տէրն որ նստեց ուր դատաստանն,
Ինտեղ համ իմ, համ քո հալն լաւ կընի։

Ցարթուն օղի, գիշեր ցերէկ զգուշ կաց,
Գնա եկեղեցին դու քո մեղքն լաց.
Հոգին մարմնից մին օր պէտկ ա բաժանուած՝
Արգար հոգով հանգուցեալն լաւ կընի։

3. ԵՐԿԻՆՔ ԵՒ ԳԵՏԻՆՔ

Երկինքն ու գետինքն եկին բաս արին.
Երկինքն ասաց, տես ես որքան բակ ունեմ,
Յարևել, Յարևմուտ, Հարաֆուց՝ Հուսիս,
Բոլոր ողջ աշխարքս ոտնատակ ունեմ։

Գետինքն ասաց, թէ չես տեսի՝ հիմի տես,
Ես ինչպէս սահմանաց օրինակ ունեմ.
Յարևել, Յարևմուտ, Հարաֆուց՝ Հուսիս,
Զոք կողմն աշխարիս բօվանդակ ունեմ։

Երկինքն ասաց, կանց քեզ շատ զօրագոյն եմ,
Առանց հիմ, առանց պատ, առանց սութուն եմ.
Հաւասար մէ գումբէթ, միայն մէ տուն եմ,
Նստած ես ատոխունքօվ Արուսեակ ունեմ։

Գետինքն ասաց, իմ սունն ուստից եմ բերի,
Հանդարդ յօթի վերայ զարար ամ կերի,
Կամենաս թայ բերեմ ես քո ատոխերի,
Բիւրեցբիւր ծաղկունքներ, մանուշակ ունեմ։

Երկինքն ասաց, դառ դու ինձ չես ճանաչի,
Ես կարող իմ հետ գաս, հաբաս մի տանջի.
Անձրև չըտամ ծաղիկդ ուստ կըկանաչի,
Ամպըս որոպալէն, թունդ կեծակ ունեմ։

Գետինքն ասաց, դու շատ միլնի ժաղրուրն,
Ունեմ ծովեր, գետեր, սառ սառ աղբիւրն.
Մագանըն ինձնից, քո հետի ջուրն,
Եփրատ, Փիսոն[1]), Տիկրիս, Գեհոն[2]) ակ ունեմ։

Երկինքն ասաց, ունես ծով, գետ, աղբիւրներ,
Տես ես դոր զօրեղ եմ, որ քաշել ամ վեր.

1-2) Փիսոնը Հայաստանի Ճորոխ գետն է, իսկ Գեհոնը՝ Երասխը։

Ձուն և կարկուտ չըտամ, դու չես պտղաբեր,
Թէ իմանաս՝ վերէդ ես ամակ ունեմ։

Գետինքն ասաց, խօսկդ ասում աս ղրջունք,
Ինձնէ կերակրին անասունք, թռչունք,
Մարդ և սողունք, բոլոր ջրային դեռունք,
Բովանդակի համար ես կամակ ունեմ։

Երկինքն ասաց, յիմար դու ինչ ես շահի,
Մագեմր իմպէս տէր ես անգին մաթահի.
Տասներկու բուռջ ինձնում անսուն եմ պահի,
Ղէյրի էտոնց եօթն մոլորակ ունեմ։

Գետինքն ասաց, առանց մաթահ ընդէր եմ,
Կանց քեզ լաւ ակնեղէն մաթահի տէր եմ.
Տասներկու առաքեալը բոլիդ թայ բերեմ,
Եօթն խորհուրդ ժամի սուրբ պսակ ունեմ։

Երկինքն ասաց, երբէք մի ջանալ հարամ,
Ձունիս կարողութիւն ինձ պատասխան տաս.
Բիւրեցբիւր զօրաւոր հրեղէն ինն դաս,
Գաբրիէլ, Միքաէլ հրեշտակ ունեմ։

Գետինքն ասաց, խաբար չունես դու գուման,
Բիւրեցբիւր աղգ ունեմ աշխարքս յամենայն,
Քսանէչորս հազար սրբոց գերեզման,
Աղօթող առ Աստուած յիշատակ ունեմ։

Երկինքն ասաց, միազոյն եմ լի պարգև,
Մաքուր եմ շատ խստակ, յախտից եմ թեթև.
Ինձնում կա զօրագոյն լուսին երկու ձև,
Ցերէկն յարև, գիշեր լոյանիակ ունեմ։

Գետինքն ասաց, քեզ ինչ լոյս յարեգակն,
Իմ գլխին է փայլած քո սինի տակն.
Թէ ճշմարիտն ասես ես եմ խստակն,
Սուրբ աւադան, հին և նոր կտակ ունեմ։

Երկինքն ասաց, քեզ ինչ կտակարանն,
Էլի իմոցէն է էդ հրամանն.
Անպատում աթոռն լոյս եօթն արբեանն,
Անեղ և բատեղծող սուրբ Երրակ ունեմ։

Գետինքն ասաց, դու ասացիր անեղ է,
Ուրեմն իմացիր փաս ամէն տեղ է.
Աստուածային ձեռօք տնկած լոյսեղէն,
Արդարոց օթևան եղեմակ ունեմ։

Երկինքն ասաց, ունեմ կենարար խաչն,
Որ կըփայլի մեր Աստուծոյ յառաջն.
Ունեմ համբառնալով քո ազգի աջն,
Որ տեսանեն, ինչպէս փայլման ակ ունեմ։

Գետինքն ասաց, կենարար խաչ փայլմանն,
Նախ ինձնում է ընկի իրա սահմանն.
Սրտիս է Քրիստոսայ լոյս գերեզմանն,
Տաճարկու տեղ աթոռ նշանակ ունեմ։

Երկինքն ասաց, ես շատ ունեմ յիմաստն,
Քո ազգն է անգէտ, իրուր հետ դաստն.
Աստուծոյ հարսնարան, լոյս առագաստն,
Վերինն Երուսաղէմ տեղ իստակ ունեմ։

Գետինքն ասաց, հողածին է իմ ցեղն,
Թէ ունեն խռովութիւն, ես ունեմ դեղն.
Հարիւր հազար վանք յանապատ սուրբ տեղն,
Ամէն որ հաշտարար պատարագ ունեմ։

Երկինքն ասաց, ինձնէ եկաւ էդ բանն,
Դրօքն փակեալ իջաւ 'ի վերնատանն.
Մաքրեց մեռասանիդ բոլոր մանկանն,
Էդ նման յախտակէդ հուր կրակ ունեմ։

Գետինքն ասաց, տես որ արժանաւոր ի,
Որ տիրացայ տէրունական շնորհի.
Մարմինն և արիւնն Տէր Թադաւորի,
Կենդանատու պարգև ես բաժակ ունեմ։

Երկինքն ասաց, ես էլ ունեմ շնորհն,
Սերօբէ, Քերօբէ վեց թեաւորն.
Զարխ ու ֆալաքն ունեմ, պտտեմ դորն,
Ում որ ես կամենամ աջողակ ունեմ։

Գետինքն ասաց, մին օր չաբխդ յետ կըդառնայ,
Գոչման փողն քեզի տեղէդ կըբառնայ.
Ցամենայն ննջեցեալք հողիցս համբառնայ,
Էդպէս երանելի ժամանակ ունեմ։

Երկինքն ասաց, ինչ որ խօսացի հարաս,
Մտածում եմ վերջն էս չըկամ դու կաս.
Երանի՜ քեզ որ էնչադն կըխնդաս,
Դու լեզուս կապեցիր, ամբրած փակ ունեմ։

Գետինքն ասաց, յոյսով եմ, որ կամ արժան,
Մեր Տէրն գալոց է ինձնում դատաստան.
Երանաւէտ ձայնովն բարբառի բերան,
Արդարոցն անթառամ սուրբ պսակ ունեմ։

Երկինք ասաց, էլ բան չունիմ ասելու,
Մնամ քեզի խոնարհ միշտ սպասելու.
Թէ գնանք դատաստան ուղիղ խօսալու,
Քոնն է ճշմարիտ, ես սխալ ունեմ։

Ցարթուն օղլիս ասաց, ժակով եմ սխալ,
Խորհուրդով և գործով բանիս մոռացեալ.
Տէր, Քո գթութենէն միամ ակնկալ,
Երանաւէտ ձայնիդ ես փափակ ունեմ։

3. ՀԱՄԱՄ ՈՒ ՉԱՂԱՑ

Ցիրուր հետ բաս արին Չաղացն ու համամն.
Համամն ասաց՝ ես լաւ տաշած սալ ունեմ,
Գլխիս ա բան տված շուշէքն ու Չամն.
Արևն գլխիս վերէն սըլսըլալ ունեմ։

Չաղացն ասաց՝ դառ չես տեսի հունարս,
Գիշեր ցերէկ ինչպէս բժըժալ ունեմ.
Ջուրս տայ չարխերիս, ման կըգայ քարս,
Դու ալիլ վայր ընկած, ես ման գալ ունեմ։

Համամն ասաց՝ ինձ մի ասի ալիլ ես,
Բիայբաններուն դէն ընկած վիլ ես.
Դախմ բժուժ կուգաս, հաբաս դու շիլ ես,
Ես մին խելօք, հանդարթ բարի հալ ունեմ։

Չաղացն ասաց՝ տես որ դու բիքեամալ ես,
Ընդուր դու քեզ խելօք դալամ ես տալիս.
Բոլոր աշխարք թամամ հաւնել են հալիս,
Ինչ որ ածեն բուկս, ես աղալ ունեմ։

Համամն ասաց՝ չէս խաբար, ինչ եմ արի,
Պատերս նաղաշ է թամամ գեաչ քարի.
Տախտերս ֆառղ արած, օր, ամիս, տարի,
Դու մին տարաբախտ ես, ես աղբալ ունեմ։

Չաղացն ասաց՝ ինչ աղբալ է դու ունես,
Գարշ ու հարամ, հոտած կեղտերի բուն ես.
Ոչինչ չես հասկանում, դու շատ նադուն ես,
Ինչ գիտես ես ինչպէս հալալ մալ ունեմ։

Համամն ասաց՝ նադուն դու ես թէ ես եմ,
Մագեար քեզի նման զադից չրտես եմ.
Թէ հարն հարցնես, հարիւր քո պէս եմ,
Մեծամեծ իշխաններ գալ գնալ ունեմ։

Զաղացն ասաց՝ դէ տես, որ դու նադուն ես,
Ուզում ես թարիֆդ կանց ինձ շատ անես.
Երթողի գալողի կեղտի մաղան ես,
Հալալ ջուրս անոշ, պարզ, զուլալ ունեմ։

Համամն ասաց՝ մի՞թէ որ ես ջուր չունեմ,
Վախտ կլնի դու չոր ես, ես խօ հոր ունեմ.
Դու ողջ գեարթ ու մուր ես, ես մին տաք տուն եմ,
Ջան հօվացնեմ, ճարմակ լուանալ ունեմ։

Զաղացն ասաց՝ հա միշտ հօտած է ջուրդ,
Ախպ ու փէին է թամամ փռաց կտուրդ.
Թունդ վառվի, կանց ինձ, բազում է մուրդ,
Ինչ ասես, պատասխան խօսկիդ տալ ունեմ։

Համամն ասաց՝ ես կանց քեզ եմ ըռանգին,
Ջաներն հօվացնեմ հազար և հնգին.
Ջամերն որ կպնի հօվզիս պրնգին,
Հարս ու աղջիկ միջումս զրընգալ ունեմ։

Զաղացն ասաց՝ քո սիրտն խոշ են արի,
Կեխատտ են, միջումդ կանեն գաչ քարի.
Ինձ համար կրբերեն Աստուծոյ բարի,
Աղամ խաղլէն ձայնով զրըմբալ ունեմ։

Համամն ասաց՝ թէ քո ձէնն խրոսի է,
Իմն թէ հու քաշեմ, գինու կարսի է.

Էդ էլ քի թող, աղջիկ, տղա, հարսի է,
Ենդալով, խաղալով դալմուղալ ունեմ։

Ջաղացն ասաց՝ բխման դեռ ագթուր ունեմ,
Թէ լօղնալ լուանալն ասես, ջուր ունեմ.
Ինչ խունս ինձանէ, իմ խատուր ունեմ,
Ջաքշաքիս խաղալէն տիտխկալ ունեմ։

Համամն ասաց՝ էլ քան չունեմ ասելու,
Մնամ քեզի խոնար միշտ ըսպասելու.
Թէ գնան դատաստան ուղիղ խօսելու,
Դու աս ճշմարիտն, ես սիալ ունեմ։

Ջաղացն ասաց՝ դորն երթաս, քո խատուր եմ,
Կալնեմ քեզ, կըկարեմ, դօդամի թուր եմ.
Ողջ հաւատացելոց մուրադատու եմ,
Ալուրս նշխար է, սուրբ հալալ ունեմ։

Համամն ու ջաղացն իրուր միասին,
Իրանք իրանց համբաւ իրուր հետ ասին.
Ճարթուն օղլի, դու աղաչէ սուրբ մասին,
Ասա, թէ քո ճամբին ակնկալ ունեմ։

Ը.
ՄԻԱՍ ԵՐԳԵՐԸ

1. ՏԱՂ 'Ի ՎԵՐԱՑ ՍԵՂԱՆՈՑ*)

Ա՜յ պարոններ եկէք խնդանք
Քաղցրաբառբառ բանի վերայ.
Սիրով նստենք ըզմիմեանս,
Զարդարաց սեղանի վերայ։

Զարդարաց սուփրա սեղանն,
Կարմիր ձու, կանաչ ոչխանն.
Դանակ չանկալ աղամանն,
Շարած դաստրխանի վերայ։

Դաստրխանի ղրաղներն
Շարուած չինի սաղներն,
Շիմշատ գդալ ագլղներն,
Ցամէնն ուր արքանի վերայ։

Ցամենայն բարին էլ գօլած,
Քրքիտայ, տօլմայ կամ խորօված,
Հաւն անոշ եղօվ բօված,
Բօթլերն մէյխանի վերայ։

Բլօլ բօթլ ու շուշէն շարաց,
Անոշ գինին լաւ սաֆ արաց,
Ոսկէթուփ թասեր զարդարաց
Խմէք անոշ ջանի վերայ։

Խմէք գինին, կանչէք տաղն
Արէք խնդու

Ջ. ԵՐԳ ՄԱՏԱՆՈՑ

Աղջիկ, եկ դու քո Աստուածն միտդ բեր,
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին.
Ափսոս ես, մի ընի սատանին ընկեր.
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին.
Քվերդ դուրս արիր, տուիր լացացրիր,
Կռնիցս բռնեցիր, ձեռս բանձրացրիր.
Իերանիդ ջրովը մատս թացացրիր,
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին.
Ուզում աս նշանն ասեմ, տեսնես հընց էն ա,
Դրիր մատդ, տեսիր մատիցդ լէն ա.
Ասիր՝ կզգակցնեմ, հալա թող կէնա,
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին.
Եթէ կամենում էս դու ամուսնանաս,
Վատ մի անել, որ իմ բերանն բանաս.
Ուզում էս որ կարմիր քօղրով հարսնանաս՝
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին.
Մի առնել աշխ անէծքը, վատ ա,
Թէ քեզ նշանեն, մատանին շատ ա.
Թէ մէրդ իմացել ա, քեզ կ՚կորատա,
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին.
Եթէ քո ծծածը լէվ հալալ կաթ ա,
Մի անել այդ բանը, քեզ դարահաթ ա.
Ակն ֆիրուզ ա, օղն արծաթ ա,
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին.
Ես Ցարթուն օղլին ամ. չասես յուրիշ ամ,
Թամամ աշխարհ ման ամ գալիս, գարվիշ ամ.
Ինչ մէջլիսում որ նստեմ անունդ կ՚յիշեմ,
Նալլաթ տուր սատանին, բեր իմ մատանին*).

---

*) Մի անգամ Ցարթուն օղլին հարսանիք է հրաւիրւում Փէրիա գաւառի Հապարջրիք գիւղում նուագելու համար: Նա հրկար նուագելուց և «գամ» տալուց Հապարջրիք գիւղում նստելու համար: Նա հրկար նուագելուց և «գամ» տալուց Հայեսոյ, գիշերն առանձնանում է մի սենեակում քնելու. Կէս ժամ անց մի աղջիկ կա-

3. ԳԱՐՆԱՆԱԲԵՐ ԾԱՂԿՈՒՆՔՆԵՐՍ

Գարնանաբեր ծաղկունքներս ողջ թառամեցաւ,
Փոքր փոքր մինչև աշունք վերջացաւ, գնաց.
Կանաչ տերև արմաւենիս ողջ թօթափեցաւ,
Որպէս Յովհանու դրմենին չորացաւ, գնաց։
Ծունկ իմ տկարացաւ պտիրց, թուլացաւ սունս,
Գիշերն մարմնով ամ տուժում, չի տանում քունս.
Գնացել ա, չի մնացել կարողութիւնս,
Գարնան նման սառուցի պէս հալեցաւ, գնաց։
Երակ երակ ձեռք ու ոտքս իմ ողջ թուլացել ա,
Ջանն իմ գործել չունեմ, հրամանս գնացել ա.
Ճերմակ, փափուկ, կայտառ մարմինս հնացել ա,
Վերջն այս դառն աշխարհէս յուժեցաւ, գնաց։
Վաստակել ամ, չեմ կարում գնալ ճանապարհս,
Եօթն էակ գոհարանքով, մարմնով ամ տկար,
Որ բժշկի մօտ գնացի, չելաւ ցաւիս ճար,
Ասին ծերութիւնդ անցաւ, գոչեց ու գնաց։
Ցարթուն օղլիս աղաչելով առ Աստուած չոքիս,
Լալով խնդրեմ միւս անգամ երկրորդ նոր հոգիս.
Այժմ խնդրեմ որ աւանդես այս դառն հոգիս,
Արժան լինեմ, ասեմ Տէրն գոչեց ու գնաց*)։

մաց դուռը բանալով՝ ներս է մտնում. թէև Ցարթուն օղլին զարթուն է լինում, բայց իրեն քնած է ձեւացնում, որպէսզի հասկանայ աղջկայ մտադրութիւնը. գեղջկուհին նրա մատից ֆիրուզ մատանին, որը Սուլէյման խանն է նուիրած լինում, հանելով՝ դուրս է գնում։ Աշուղը ոչինչ չի խօսում։ Հետեւեալ օրը, կերուխումի ժամանակ, երբ հանդիսականները խնդրում են երգչից մի բան երգել, նա ձեռք առնելով չօնգուրը, յանպատրաստից երգում է յիշեալ ոտանաւորը։

*) Մի անգամ Շահվալոդ Ցարութիւնեանը (Ցարթուն օղլու եղբայրը) Նորջուղայից մի նամակով հարցնում է երգչին, թէ ինչպէս է առողջութիւնդ. նա էլ ըստ ընդունուած աշուղների սովորութեան պատասխանում է եղրօր նամակին վերոյիշեալ ոտանաւոր-նամակով։

ԾԱՄԵՐԴ ԱՐՇԻՆՈՒՄ

I Var.

Գրի առաւ Ն. Գալանդէրեան









II Var.





Մի նմոյշ Ցարթուն օղլու եղանակած երգերից,
որը գրի է առել հանգուցեալ երաժշտագէտ Ն. Գալանդէրեանը։

Թ.
ԹՐՔԵՐԻՆ ԵՐԳԵՐԸ

1. ՂՈՒՇ ՕԼԱՑԴՈՒՄ

Քեռակա ման բիր ղուշ օլայդում,
Ղանաթ ալում ուլալամ ման,
Նաղլու 1) եարա թուշ 2) օլայդում,
Ինչա 3) բէլի 4) ղուլալամ ման։

Աղլամագդան, եաշ թեօքմագդան,
Ղադ 5) ու բէլումի բիւքմայդգան 6),
Թէյլայ ախ ու վայ չայքմայդգան,
Ալլահ բիլուր, նիլիօլամ 7) ման։

Այդսիգ օլմազ ահ ու զարում,
Քեսըմիշ սաբռ 8) ու ղրարում.
Թաքի 9) բիրդայ գեօրսամ եարում,
Ղոռխարամ քի ղոլալամ 10) ման։

Յարթիւն օղլում բաշի եուխեայ,
Եար բաշինան բիր եասատուխայ.
Բիր օփըշա եդդի օխայ 11),
Բալքի բիր դամ դինջալամ ման։

---

1) Մէրելի, գոլական, 2) մօտ, 3) բարակ, 4) մէջք, 5) հաստակ, 6) կոտրուել, 7) ինչ կը լինեմ, 8) համբերութիւն, 9) երանի, 10) ծերանալ, 11) երդ։

2. ԵՐԿՐՈՐԴ ԳԵՈՉԱԼԼԱՄԱ ՎԱՍՆ ԱՉՔԵՐԻ ԳՈՎԱՑՄԱՆՈՒԹԻՒՆ

Գեոչալ, մանի ալ էյլադի 1), բաշ բալալու 2) գեոզլարին,
Ջանումդան բիհալ էյլադի, դաշ 3) բալալու գեոզլարին
Էշլին սալուբսան 4) ջանումայ, գէջայ գիւնդուզ եանդրրուբ,
Մալուլ 5) գեանգլում 6) գեաթրուբ տուր ջուշ բալալու գեոզլարին։

Գեոզլարին շամս ու դամար դուբ, երլաշուբ տուբ եիւզուայ 7),
Բիլմամ նիջայ գեոզալլուբ դուբ, հախ վէրուբ տուբ օզուայ 8).
Գեաբաբ թաքի եաղ իչընդայ զովրբլանդում 9) քեսզուայ 10),
Դաղլադի 11) ման թայք մրսիքինին, դոշ բալալու գեոզլարին։

Էշլին սալուբսան 12) ջանումայ, դարդում եանայ-եանայ,
Ման աւդալ օլդում գեոզլարուայ, դուշտում բու ջընանայ 13).
Ման Մաջնուն օլդում, սան Լէյլիեայ, օմիդամ դիվանայ,
Ման բաշումդայ զոյմէեիւբ դալայ հուշ, բալալու գեոզլարին։

Ցարթիւն օղի Աւանուս ամ, էշիա գբրբֆդար 14) ման ամ,
Ղուլաղում դալդի սոզուայ, դէյսան դարդայ դարման ամ.
Ման բիլուբ ամ 15) սան բիմաս ան դարդում, էյ գեոզալ սանամ,
Բաշումայ զոյմէիւբ դալայ 16), հուշ բալալու գեոզլարին։

3. ԴՈՒՇՄԻՇՏՈՒՄ ԽԱՍՏԱՑ

Դուշմիշտում խաստայ, բի խաբար, դէդիլար քի եար գեալէիր,
Դէրուբ 1) բաղչասընդան նոբար ալդայ 2) բիր ջութ նար 3) գեալէիր.
Ման քի բու սոզի դանանդում 4), աբան երդայ գիւնայ 5) եանդում,
Եար գեալդրդի էլա սանդում, Սովզու Քուհդան 6) դառ գեալէիր։

---

1) Ջարթեցնել, 2) փայլուն, 3) գծաւոր, 4) զցել, 5) հանդարտ 6) սիրտ, 7) երես, 8) ինձ, 9) բոլոր, 10) կրակով, 11) այրել, 12) զցել, 13) աշխարհ, 14) գերի, 15) գիտեմ, 16) մնայ։

1) Քաղել, 2) ձեռքում, 3) նուռ, 4) չհաւատալ, 5) արև, 6) սար է։

Դարդում իդի խարման-խարման 1), սալմիշտի 2) մանդան բիֆարման,
Դէդիլար հար դարա 3) դարման, դուքանը աթթար գեալէիր.
Նիշա քի եար եարա բուլայ, այգլաշայ, դանըշա դիւլայ,
Մանում թաք հասրաթ բըլբուլայ, բաղչայի գուլզար 4) գեալէիր։

Ղըհար 5), ղրշ 6) ալընայ 7) բաղլու, դուշմիշիդում սինա դաղլու,
Դէդիլար քի Ցարթիւն օղլի, դախ 8), սանա բըհար գեալէիր։

4. ՎԱՍՆ ՈՒՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՕՎԱՆՔ

Ենգի 1) գօղմիշ այեայ 2) բայգար 3) դարա դաշլար 4) դաշլարին,
Բախանդայ ջիդեարում փարայ-փարայ դաշլար դաշլարին։
Ղուդրաթատան չայքմիշ դալամի, սանուր սան մէհրար 5) քիմի,
Հար գեօրանայ սանջար նիշայ մարայ 6) դաշլար դաշլարին։

Այգլաշուբլար 7) թախտի ուստայ, բիրի սուլթան, բիրի խան,
Թախտիրքարամ 8) գեալդում դադայ 9) էյլասուն ադրլ 10) դիվան.
Թաղի դուդրաթդան 11) վուրուլմիշ, եափուսի դուր 12) եարադան,
Բիր քուշկը 13) բիփաեայ 14) բայդդար 15) սարա դաշլար դաշլարին։

Հուրիլար սարվարայ քիմի այգլաշմիշ դըլման օլուբ,
Զօխ ջիվանլար բախայ-բախայ քօղուլլարի դան օլուբ.
Հէփ գեօզլարըն բաշընայ չայքմիշ, սաեավան օլուբ,
Եօլ գեասալուբ դաղ ու դաշլար, դարայ 16) դաշլար դաշլարին։

Ցարթիւն օղլի հանդան 17) բուլդին բէյլայ 18) հօանրն գեօզալի,
Քեօղուլ 19) սէվդիգիլ օխշադամի 20) եարն աբռ 21) ու հիլալի.
Ղաշի դարայ, ռանգի հիլալ 22), լալ ու գօռ 23) թայք գուլալի,
Շահլադան ջանսաթում եանար նարայ դաշլար դաշլարին.

---

1) Շատ, 2) գցել, 3) ձոր, 4) ծաղկաւէտ, 5) սառն, 6) ձմեռ, 7) ձեռքը, 8) վեր կաց։

1) Նոր, 2) լուսնի, 3) նման, 4) ունքեր, 5) յաւերժանարս, 6) այրող, 7) նստել, 8) յանցաւոր, 9) զանգատ, 10) ճշմարիտ, ուղիղ, 11) ստեղծող, 12) է. 13) հովանի, 14) անհիմն, 15) նմանի, 16) ձոր, 17) որտեղից, 18) այսպէս, 19) շատ, 20) սիրեցիր, 21) ունքեր, 22) մաքուր, 23) անգին քար։

5. ՆԱՂԱՇԼՈՒ ԹԱՌԼԱՆՈՒՄ

Նաղաշլու 1) թառլանում 2), թուքի դիլլում սան 3),
Դանըշ չիրին-չիրին սոզ, սանա զուրբան.
Թաւուզ 4) թայք 5) ջըղալում 6) բաշի թէլլում 7) սան,
Նէչայ 8) սոնայ 9) օրդայդ, զազ, սանա զուրբան։

Մայիլ ամ 10) հօսնիեայ 11) գիւլ ջամալիեայ 12),
Լալայ գեօզլարիեայ, զաշ 13) հիլալիեայ 14).
Սօվնլուզ 15) զալամի ալգիլ ալիեայ 17),
Եանրէն 18) գեօնգլում 19) իշուն եազ, սանա զուրբան։

Ղուլլուղդայ դուրմիշամ մարդ ու մարդանայ,
Լաբին 20) զէյմաղ 21) քիմի, դիշին գօռ 22) դանայ.
Ըռուսքաթ վէր, զոլում սալում գեարդանայ,
Վարալուզ 23) բաղլարայ, գեազ, սանա զուրբան։

Աղ սինայն աչըլդի, նարլար 24) գեօրընդի,
Ուզաղրրամ, գեալ 25) ալումայ, վէր ինդի 26).
Եարում, բիր ռահմ էյլայ, ջանում առընդի,
Զօխ սաթմայ 27) ուստումայ նազ, սանայ զուրբան։

Յարթիւն օղլի բաղբանչի դուր բաղիեայ 28),
Բիր գիւն թայքլիք 29) էյլայ աղ օթաղիեայ.
Փաթզ 30) գեչասքնայ ալ ղուչաղիեայ,
Ղըլախ նաշմ ու նավայ հազ, սանա զուրբան։

---

1) Վրձինուած, 2) թոչուն, 3) ես, 4) թուքակ. 5) նման, 6) կատար, 7) փունջ, 8) ինչպէս, 9) նորահաս, 10) կարօտ եմ, 11) դէմքիդ, 12) դիմագիծ, 13) արեգակ, 14) մաքուր, 15) սահուն, 16) առ, 17) ձեռքդ, 18) այրուած, 19) սրտիս, 20) շրթեր, 21) սեր, 22) թանկագին քար, 23) վնանք, 24) նուներ, 25) եկ. 26) հիմա, 27) ծախել, 28) այգուդ, 29) հրաւիրել, 30) աշնան:

6. ԳԵՈՉԱԼԼԱՄԷՐ ՈՒԹ ՎԱՆԳԻ ՈՐ Է ԳԵԱՐԱՌԼՈՒ

Սառլանուր սան 1) իւզ 2) նազինան,
Գեալան երիշրն զուրբանի.
Դինարսան 3) շիրին սոզինան,
Դիլ, զօդաղ, դիշրն զուրբանի։

Դուր, օղում սանա եթուրիմ 4),
Զաքիմ խալֆաթայ 5) օթուրի.
Խալլու զընաղդան գեօթրրիմ,
Նարին օփրշն զուրբանի։

Հախ 6) սանայ վէրմասուն զաղայ 7),
Դուզադէիմ 8) մէյ ու բաղայ 9).
Մանգղիլ սալիմ 10) աղ սինաղայ,
Եմուշաղ զօշրն զուրբանի։

Խումար գեօզլու եարի մանում,
Գեալ թազալթ 11) ջիգեարի մանում.
Ղօյնընդայքի նարի մանում,
Թուռլու եմիշրն 12) զուրբանի։

Ման Յարթիւնրն բրնրասի 13),
Մէջլիսլարն հաւասի 14) եամ.
Գեօզլարն սաղաղասի 15) եամ,
Հիլալլու զաշրն զուրբանի։

---

1) Հանդարտ քայլել, 2) հարիւր, 3) ասել, 4) հասնեմ, 5) գաղտնի, 6) Ասուած, 7) փորձանք, 8) պատրաստել, 9) խմիչք, 10) բռնել, 11) ուրախացնել, նոյզգել, 12) պտուղ, 13) որդի, 14) ուրախութիւն, 15) մատաղ:

7. ՎԱՍՆ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԵՐՆ ՈՒ ԳՈՎԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

Փարլանուր 1) փարվանայ 2) քիմի 3), եամր, դիլ ու դոդաղլարին,
Թութիր մէյմանայ 4) քիմի, եամր, դիլ ու դոդաղլարին.
Աղալաթինան դանըշուր, սոզի շիրին դանդրբուր 5),
Բիր շահրը 6) օրֆանայ 7) քիմի, եամր, դիլ ու դոդաղլարին։

Նա շիրին ջայ 8) ղահղայ 9) չալուր, հար սրնարդան օ բաշայ,
Զաղբրուր եանլինջայ 10) գալսուն քեօղուլ 11) սէվան 12) եօլդաշայ.
Զահ-չահ վուրուր սասի, դուշար դաղդան-դարադան դաշայ,
Քագլիգ 13) դաղբսանայ քիմի, եամր, դիլ ու դոդաղլարին։

Նա շիրինջայ 14) շարբաթ 15) սբզար 16) լաբլարնդան 17) ախանդայ 18),
Նաֆասին եիւզումայ դայդի, ուէնան բուի 19) զօխանդայ.
Հար սրնարին 20) բաղչալարդայ գիւլլար ուստայ օխանդա,
Բլբուլը գիւլչանայ 21) քիմի, եամր, դիլ ու դոդաղլարին։

Ցարթիւն օղում օխշաթիշամ 22), գեալ շիրին դիլլու դուշում,
Ցասին դուշի զուլազումայ, աչբլդի իքի գիւշում 23).
Դանըշանդայ 24) աղլում 25) գէդի, ափարդին 26) ֆահմ հուշում,
Ղումբրի ու թօրղանայ 27) քիմի, եամր, դիլ ու դոդաղլարին։

---

1) Թափահարել, 2) թիթեռ, 3) նման, պէս, 4) հիւր, 5) համոզեցնել, 6) քաղաքապետ, 7) կրօնապետ, 8) տեղ, 9) ձայն հանել, 10) մօտ, 11) սրտով, 12) սիրած, 13) կաքաւ, 14) քաղցր, հաճելի տեղ 15) օշարակ, 16) թափել, 17) պըռընչկներ, 18) բուրդ, 19) հոտ, 20 լուսադէմ, 21) քաղցրախօս, 22) երդել եմ, 23) ականջ, 24) խօսել, 25) խելքս, 26) խլել 27) թռչուն։

8. ՄԱՐԴՈՒՍ ԼԱՒՆ ԿԱՄ ՎԱՏՆ

Է՛յ աղալար, ադամ վար դուր դունեադայ 1)
Գէջայ-գիւնդուզ արգան 2) եօլայ դօլանուր. 3)
Ադամ վար քի բիլմազ բիր զօղրու ջադայ, 4)
Հայվան քիմի չօլդան 5) չօլայ դօլանուր։

Ադամ վար հար եախշի 6) եամանի 7) սէչար 8),
Ադամ վար գիւլ երի 9) թիքանի 10) բիչար 11).
Ադամ վար սազիւշդան 12), սավաշդան 13) դաշար 14),
Ադամ վար քի զօվդայ 15) դալայ 16) դօլանուր։

Ադամ վար սուֆրադա դօլու նանմաթ 17) դուր,
Ադամ վար բիր լօղմայ 18) նանայ 1) հասրաթ դուր.
Ադամ վար դեյդերի 20) զառ ինան 21) փաթ 22) դուր,
Ադամ վար բիր փառչայ շալայ դօլանուր։

Ադամ վար խոշլուդդան 23) եասի 24) թոյե 25) դուզար,
Ադամ վար բէզաթմիշ 26) մաջլիսի փոզար.
Ադամ վար զառ ուստայ այդլաշուր, գեազար,
Ադամ վար թօրփադայ 28), քիւլայ 29) դօլանուր։

Ադամ վար քի օխար 30) թօվրաթ 31), ինջիլի 32),
Ադամ վար բիր քեալամ աչըլմազ դիլի.
Ադամ վար ջահա 33) էյլար, բուլայ 34) սադ 35) եօլի,
Յարթիւն օղլի հարդամ սօլայ 36) դօլանուր։

---

1) Աշխարհում, 2) ուղիղ, 3) կը շրջի, 4) ճանապարհ, 5) ամայի, 6) լաւ, 7) վատ, 8) ընտրել, 9) փոխարէն, 10) փուշ, 11) քաղել, 12) ասուլիս, 13) կոիւ, 14) կը փախչի, 15) կռիւ, 16) աղմուկ, 17) բարիք, առատութիւն, 18) պատառ, 19) հաց, 20) հագուստը, 21) նման, 22) մեռաքս, 23) ուրախութիւն, 24) լաւ, 25) հարսանիք, 26) շինած, 27) քանդէ, 28) հոգ, 29) մոխիր, 30) կը կարդայ, 31) Սաղմոս, 32) Աւետարան, Աստուածաշունչ, 33) մտածել, 34) գտնել, 35) աչ 36) ձախ։

9. ՎԱՅՆ ԿՌՆԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐ ԴԱՎԻԼՈՒՑ ՂԱՍԻՏ ՈՒՂԱՐԿԵՑԻ

Լաչին զոլ զանաթլու, բայազ սինալու,
Զաքելուբ սրզ երդրն բալա, դուռնալար.
Ծանուրսան սարանին չաքեուբ զաթարա,
Դուզրլուբ սրզ դալլտան դալա, դուռնալար։

Մըհամառատան, Հաւէզատան գեալուբ սրզ,
Հար զարիբ զուրբատան խաբար ալուբ սրզ.
Ման հա բիլամ հառ մանգզիլդա զալուբ սրզ,
Ղոյ բիր մանգզիլ Դասֆիլ օլա, դուռնալար։

Բիր արզում վար, զուլախ վերին գիլումա,
Եթուզ օլին բու փարիշան հալումա.
Բիր նամահ եազմիշամ ուլուս իլումա,
Բիրիսընա գեօնդարին ալա, դուռնալար։

Դասֆիլտան գէչար սրզ, եօլար տուր չատին,
Շալա գեօրիմ աղրմասն դանաթին.
Թօրմաբատտան գէչար, եօլար տուր չատին,
Ծաբա օնտա դուշին եօլա, դուռնալար։

Թօրմաբադտան բիր եօլ այրըլուբ սաղայ,
Գէչար, վուրուբ Գրդան Քրրթ Զաֆրլաղայ.
Բիր բաղում վար, օնա գէղին զոնաղայ,
Օդա գեալուբ սրզա բուլայ, դուռնալար։

Արզումն իչընդայ եազդում բէշ քեալամ,
Ուրայգ եանան բաղում, սանա չօխ սալամ.
Դէյինզ դրա էդսուն, բալքի ման գեալամ,
Ղուրբան սրզին չիրին գիլայ, դուռնալար։

Ջափբլաղան գիտար սաղ օլա Ցարի,
Գէչար Փաչալաղդան, գէդար Բուբարի.
Բիր նըհար էյլար սրզ չէշմա Ցօրվարի,
Օնդա չուվա դուշին գիւլա, դուռնալար։

Բուրբուրուդան Ցրէյդան երբշին,
Դօստում չօխ գուր, վառի Սընա գեօրբշին.
Ցալամաթլուղ վարի, սօնտան սորբշին,
Գեաթբրիմ եաղդան եաղա բիլա, դուռնալար։

Ըլթրմազ ուդրնա սախլէիմ. բիլա,
Շուրիշկանդա վէրին ղրզրլ ինջիլա.
Դէյինզ՝ նիջաթ վէրսուն Քեամթարի ղուլա,
Գեալսա գիարաթին ղրլա, դուռնալար։

Ցրէյդանդան ուչ եօլ այրբլուր եանայ,
Բիրի գէդար Խօմսար, բիրի Լաթանայ.
Օնդա գէչին Զարմբհալա, դուռնալար։

Զարմբհալդան Քիւրդ քեանդրնդան երուրսրզ,
Ահմադաբադ ղալաչանի գեօրուրսրզ.
Դիլ նամահում նազլու եարա վէրուրսրզ,
Զօխ չաքմասուն ախ ու նալայ, դուռնալար։

Օղլանլարում*) սրզա բարաբար գեալուր,
Խարջլուղ վէրմամիշամ, մանայ առ գեալուր,
Ագեար եար սոյլադի, հաչայն եար գեալուր,
Դէյինզ՝ ղադի բրհար գեալայ, դուռնալար։

---

*) Ցարթիւն օղլին ունեցել է երկու որդի՝ Կարապետ և Ցարութիւն, որոնք Ահմադաբադ գիւղում զբաղւել են հողագործութեամբ։ Կարապետը վախճանւել է Վերին-Քոնարքում, Ցարութիւնը՝ Մամուքայում։ Ա. Ե.

Ղալայ դուր քեանդումզ, բէշ գիւն դուրարսրզ,
Ղոյում դարդաշ դաբիլամի դեօրարսրզ.
Դիլ նամահում նազլու եարա վէրուրսրզ,
Զօխ չաքմասուն ախ ու նալա, դուռնալար։

Արզ էյլարամ խանա, բիր եուս սալուրամ,
Սբնամը դովլադան ռուսխաթ ալուրամ.
Դարուիշ օլամ, բիաբանդան գեալուրամ,
Ադեար դէինմիշամ շալա, դուռնալար։

Գէյնուրամ շալա, գօնգում դարուիշա,
Գէչա գիւնտուզ գեօնգլում դուշուի թաշուիլայ.
Մանդան սալամ ափար աղիմ քէշիշայ,
Ելթըմազ եադինջայ, դալա, դուռնալար։

Սօլդաքի գէդարսրզ Զէշմա Ռուբադ դըր,
Ռօխդան աշաղ թամամ Լէնջան արադ տուր.
Գեօրընուր Սֆահանդա դանդ ու նաբադ տուր,
Բաթուբ դուր դովլաթ ու մալա, դուռնալար։

Զօլֆա դուր մանլամըզ, օլէին բալադ,
Զուռաջայ աղ սաղկեալ, ադի Շահվալադ.
Ազիզ դարդաշում դուր, ալ օնդան խալաթ,
Վէր նամահում, դիեայ գիւլայ, դուռնալար։

Ղարդալ, բաջում էլ ուլուսում եղսունլար,
Քէթաբաթում գիւլա-գիւլա օխսունլար.
Բիր չա նշան բոյինի ինչա թախսունլար,
Նաբադաքի սալին չօլա, դուռնալար։

Զօլֆադա գէչաբսրզ, մանգզիլ դուր ախէր,
Օնդա եադ սալին, մանթաքի ֆախէր.
Սալամաթլուզ իչին չիրին դըրմըզի չախէր,
Ալին իչին բիր փիալա, դուռնալար։

Ինչանդան բիլուրամ նիչա ջոշարսըզ,
Ղէյղիրսըզ Լընչան լարդան գէչարսըզ.
Բիր գէչադա Գեանդումանդա դուշարսըզ,
Ծոշ գէչերին օյ մանզիլա, դուռնալար։

Էլում չօխ դուր, եարիսի օրդա դուր ալար,
Նամահում վէրարսըզ վարի գեօրալար.
Սալամաթլուղ ջոդարընի վէրուրլար,
Ալէին բարգ բաշլին ղոլա, դուռնալար։

Սըզ քէ գեադան օլդին էլդան էլարա,
Ղուրբան օլամ սըզին շիրին դէլարա.
Մանդան սալամ վէրին քեալանթարլարա,
Եթուգ օլին վասմ ու հալա, դուռնալար։

Լիւսադանդան հախ սախլասըն սոյլէմ,
Սօվդուքուհ դաղըն բաշի բայլէմ.
Բիր մանզէլդա դինարանդայ էյլէին,
Մէհման օլին եաշու բալա, դուռնալար։

Դինարանդան բաշ գեօթրրին բիր նազար,
Գեօզլէին Դաֆֆէլի գեալին բիազար.
Ցարթիւն օղլի եօլինդա ընթըզար,
Գեաթրրուբ բիր խոշ ահվալ, դուռնալար։

Այժմ, յիշեալ երգերից յեռոյ, տանք օտարազգի և անհասկանալի բառերի մի փոքր բառարան։

Ա. Ե.

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Աբրէշում — մետաքս.
Ադաբ — համեստութիւն, ամօթ.
Ադամորդի — մարդ.
Ազիզ — անգին, սիրելի, թանկագին, հազուագիւտ, նազելի, գուրեկան.
Աթարիք — համեմունք, մանրավաճառ.
Աթիլ — փոխարէն.
Ալեմ — աշխարհ.
Ալմազ — ադամանդ, չառնող.
Ալուանդ — մի նշանաւոր սար է Համադանի մօտ.
Ախպ ու փէին — վառելիք.
Ախր կամ ախիր — վերջապէս, վերջում, չէ որ.
Ահլի — ծերունի, խելահաս.
Աղբալ — բաղդ.
Աղլղ — թաշկինակ.
Ամարաթ — պալատ, ամրոց, ապարանք.
Ամաք — երախտիք.
Ամբրած — ամրած, կողպած.
Այբ — ամօթ, արատ, պակասութիւն.
Այնա — հայելի, պարզ.
Անդամ — ազդր.
Անկոճ — ականջ.
Անոշ — անոյշ.
Անչարայ — անճար.
Անք — ենք.
Աշուղ — երգիչ, թափառաշրջիկ-բանաստեղծ երգիչ, գուսան.
Աջալ — ճակատագիր, վճիռ, օրհաս.
Ասլրզաթ — հարազատ.
Աստխունք — աստղեր.
Աբ — արա.
Արզ — խնդիրք, իղձ, գանգատ, յայտնել, տեղեկացնել.
Աւատում — հաւատում.

Բ

Բաբ — հաւասար, համեմատ, ընկեր.
Բաղ — վատ.
Բազար — շուկայ, վաճառափողոց, առևտրանոց.
Բազրգեան — առևտրական, վաճառական.
Բալգ — տերև, ոստ.
Բալէհ տալ — խօսք տալ.
Բալքի — գուցէ, թերևս, իցէ թէ.
Բաղ — այգի.
Բաղաթ — այգիներ.
Բաղչայ — պարտէզ.
Բայղուշ — բու.
Բանդի — արարածի, մարդու.
Բանձր — բարձր.
Բաս — գրող, դաշն, զրոյց, մրցել, վէճ, հարկէ.
Բասկի — այնքան.
Բար — առաջին երախայրիք, պտուղ.
Բարաբար — հաւասար՝ սրտով և մտքով, համեմատ, համահաւասար, զուգընթաց, միասին, դէմ առ դէմ.
Բարթ — ձև, տեսակ, տարազ.
Բդի — ուռենու.
Բէզարել — ձանձրանալ յոգնել.

Բժուժ գալ—ոլոր մոլոր գալ, ոլորուել.
Բիաբան—անապատ.
Բիայբ—անարատ.
Բիգուման—անգիտակ, անտեղեակ, անկարծիք.
Բիդամաղ—վշտացած, վիրաւորուած, անբաւական, դժգոհ.
Բիզարար—անվնաս.
Բիխաբար—անտեղեակ.
Բիյուշ—ուշաթափ, ուշակորոյս.
Բիչարայ—խեղճ, անճար.
Բիքամալ—անկատար, անքաղաքավար.
Բլբուլ—սոխակ.
Բլօլ—բիւրեղ.
Բուկ—պարանոց.
Բուղլամա—կերակուր.
Բունք—կազմուածք, էութիւն, նիւթ.
Բուռղ—աշտարակ, ամրոց, դղեակ.
Բօթլ—շիշ.
Բօխաղ—պարանոցի առաջին կողմը.
Բօյ—հասակ, բարձրութիւն.

Գ

Գեաուռտ—խոցոտ՝ գլուխը կամ մարմինը.
Գեարդան—պարանոց.
Գեարթ—փոշի.
Գեօզալ—գեղեցիկ, գեղեցկուհի, սիրուն, նազելի, չքնաղագեղ.
Գիր—գայիր.
Գլոր—կլոր.
Գոմ—գամ.
Գովք—գովանք, գովասանք.
Գուդարին ճանապարհի վրայ.
Գուլ—բութ, բթամիտ.
Գուման—կարծիք, տարակոյս, կասկած, ենթադրութիւն, միտք.
Գուշա—անկիւն.
Գօֆտար—խօսք, զրոյց, ասուութիւն.

Դ

Դաբ—դէպի.
Դալմ—միշտ, շարունակ.
Դաղ—խարան, խոց.
Դաղ անել—այրել, խարանել, խոցել.
Դաճած—ապած, դրոշմած.
Դամ—քէֆ, հրճւանք, ցնծութիւն, բոպէ, անգամ, երբեմն, ժամանակ, տեղ, դիրք.
Դամով—քէֆով, քիթ քթի.
Դառ—դեռ.
Դառնիկ—որոմն.
Դաստա—փունջ, շարք, խումբ, կարգ.
Դաստխան—սփռոց, փռուածք.
Դար բարձրաւանդակ, հողաբլուր, նեղութիւն, դարակ, որպիսութիւն, վիճակ, հնար.
Դարբէդար—թափառական, գոնէդուռ, թափթփած.
Դարգեահ—արքունի դուռ, ողորմութեան դուռ.
Դարդ—վիշտ, ցաւ, հոգս, կսկիծ, տրտմութիւն.
Դեղ—ճար.
Դէրվիշ—մահմեդական կուսակրօն հոգևորական, որոնք ապրում են աղքատ.
Դիդ—շեշտակի նայուածք, խոր հայեացք.

Դիլբար — սիրական, գեղեցիկ, սրտագը.
Դիւան — դատաստան, դատարան. [բաւ.
Դիվ — բոլորը, ամենքը, ամբողջ.
Դովրան — վայելչութիւն, լաւ ժամա-
Դոր — ինչպէս. [նակ, շրջան, դար.
Դոր իր — էնչպէս էիր.
Դորն — դէպի ուր.
Դուգունդաղ — խոց.
Դուխսաղ — կալանաւոր, բանտարկեալ,
Դունեա — աշխարհ, ամէն մարդ. [գերի.
Դուշման — թշնամի.
Դուքան — խանութ, կրպակ.
Դրօք — դռներով.
Դոգամի — երկայրի.
Դոսթ — բարեկամ, ընկեր, սիրելի, սի-
բեկան.
Դօվլաթ — հարստութիւն, ճոխութիւն,
փարթամութիւն.

Ե

Եադ — միտք, յիշողութիւն, օտար, ան-
Եադ արա — յիշիր. [ծանօթ.
Եադութ — յակինթ.
Եանդաղ — այտ.
Եասաման — յասմիկ.
Եար — սիրեկան, սիրուհի, սիրած, նա-
զելի, օգնական, ընկերակից.
Եարա — վէրք.
Եարաշուր — վայել, ճաշակաւոր.
Եմիշ — թաց միրգ, ձմերուկ, սեխ և ու-
Երում — այրուս. [րիշ պտուղներ.
Եվ — երբ.
Եքայ — մեծ.

Զ

Զադ — առարկայ, բան, ապրանք.
Զաթ — ցեղ, առարկայ, իր.
Զանմաթ — նեղութիւն, տանջանք, չար-
Զաղ — կաչաղակ, [չարանք.
Զաման — ժամանակ.
Զառ — ոսկեթել, ոսկեղէն, ոսկեփոշի.
Զառբաք — դիպակ, ոսկեթել գործուածք.
Զառբաֆէն — ոսկեհիւս.
Զառնըգան — ոսկեզօծ.
Զարնլի — անքնութիւն, անքուն.
Զմուրթ — թանկագին կանաչ քար.
Զնաղ — ծնօտ.
Զուլալ — վճիտ, յստակ, պարզ, ջինջ, մա-
Զօվղ — ուրախութիւն, խնճոյք. [քուր.

Է

Էղրար — խոստովանութիւն.
Էն դամին — այն ժամին.
Էնդուր — այդ պատճառով.
Էնչաղը — էն ժամանակ.
Էնս ու ջինս — շնչաւոր արարած, մարդ.
Էնսան — մարդ, արարած.
Էշխ — սէր, տենչ, փափագ, աշխոյժ, ե-
Էս — այս. [ռանդ, ուժն.
Էվօլլայ — մաշալլայ, կեցցէ.

Ը

Ըլդայ — այժմ.
Ըլթաս կամ ելթիմաղ — ազաչանք, ա-
դերսանք, հայցուած, միջնորդութիւն.
Ընթզար — սպասել, կարօտանք, ակնկալ.
Ընկար — անկար.
Ըռախդ — չոր, զգեստ.

Ռանդ—գոյն, երանգ.
Ռուզղի—օրական պարէն.
Ռուշան—լոյս, լուսաւոր.
Ռուսամ—գեղեցիկ սենեակ.

Թ

Թազայ—թարմ, նոր, թաժա.
Թախտ—արքայական գահ, գահաւորակ, հարսանքատան նորապսակ հարս ու փեսայի կանգնելու տեղը, բազմոց, աթոռ.
Թալանար—ուշաթափ. [
Թանայ—սասա, անարգանք, բարկանալ.
Թաղ—կամարակապ, թումբ բանջարանոցի.
Թաղաթ—ոյժ, կարողութիւն, կենսունակութիւն.
Թաղալան—ջանացողութիւն.
Թաղիթ—կորով, նմանութիւն.
Թազատէվան—պատգարակ.
Թամաշա—տեսարան, հանդէս.
Թամաշա անել—մտիկ տալ, դիտել, նայել, հանդիսատես լինել, հրճուել.
Թամամ—լրիւ, բովանդակ, կատարեալ.
Թամամուած—լրացած.
Թամբալ—ծոյլ.
Թայ—հատ, հաւասար, ընկեր, հասակակից, նման, զոյգ.
Թայեար—կերպ.
Թաշքիշ—ժառանգութիւն.
Թաչիր—վաճառական, առևտրական.
Թաչ ու թամար—արքայական թագ.
Թաս—բաժակ, գաւաթ, ջրման.
Թարգել—լքել, բաց թողնել, հրաժարուել, ձեռք վերցնել մի բանից.
Թարիֆ—գովասանք, նեբբող, պատմութիւն.
Թափ—թայ, կենտ. [
Թէղ—շուտափոյթ, շտապ, արագ, խիստ.
Թիքայ—պատառ, կտոր. [
Թուխթի—թուխթակ.
Թուն—բաղնիքի այն մասը, ուր վառում են՝ ջուրը տաքացնելու համար.
Թունդ—սաստիկ.
Թրմաշալ—նրբագործ շալ, ցփոփ.
Թոհմաթ—արտունչ.
Թոզրու—երգեցիկ թռչուն.
Թոմար—ականակուռ.

Ժ

Ժուռ—ազոխ, տոհաս, խակ.

Ի

Իլլահ կամ իլլահեմ—նամանաւանդ, առաւելապէս.
Իխթիար—իրաւունք, իշխանութիւն, մեծութիւն, ազատութիւն.
Իղբար—խոստումն, դաշն, պայման, հաստատութիւն.
Ինսան—մարդ.
Իրուշ—ուրիշ, օտարական.
Իրուր—իրար.

Լ

Լալ—ակն, կարմրագոյն, վարդագոյն թանկագին քար, սուտակ, համբ.
Լալազար—ծաղկազարդ.
Լալայ—կակաչ.
Լայեղ—արժանի, վայելուչ, յարմար, պատշաճ.
Լաշ—դիակ, մարմին, գէշ.
Լեղու—թոյն.

Լէն—լայն.
Լէվ—լաւ.

Խ

Խաբար—լուր, տեղեկութիւն, համբաւ.
Խաթա—փորձանք.
Խաթմ—վերջ, վերջաւորութիւն, կատարեալ, լրիւ.
Խաթիրջամ—ապահով, վստահ, միամիտ, անվրդով, հանգիստ, անդորր.
Խալ—պոյտ, սև կէտի նման նիշ երեսի կամ մարմնի վրայ (պէնկ).
Խալաթ—պարգև, ընծայ, գեղեցազգեստ.
Խալի—գորգ, հալի.
Խալիս—զուտ, ընտիր, անխառն.
Խալիֆաթ—առանձին, լայն, արձակ, դատարկ տեղ.
Խամով—համով.
Խան—տիտղոս՝ բարձր պաշտօնեաների, իշխան.
Խաջալաթ—ամօթանք.
Խառ—աւանակ, յարմար.
Խասիաթ—ընաւորութիւն, յատկութիւն.
Խարցանել—հարցնել.
Խէրս—արջ.
Խէրիք—բաւական.
Խիմաթ—ծառայութիւն.
Խիալ—կասկած, կարծիք, վատ միտք.
Խնկանոց—հնդանոց.
Խուզա—վերարկու.
Խտիա—գիրկ.
Խուր—իրար հետ, միասին.
Խօշ—ուրախ, անոյշ հաճոյալի, զուարճալի, լաւ, բարի, քաղցր.
Խօշհալ—ուրախ.

Ծ

Ծամ—մազ, հիւս, վարս.
Ծնգսել—ծնել.

Կ

Կանց—քան թէ.
Կարս—գինու կարաս.
Կենարար—կեանք տուող, Աստուած.
Կեռքներ—ատամներ.
Կուգիր—կը գայիր.
Կուլ—վիզ.
Կուշտաման—կշտանում.
Կուռ—քազուկ.

Հ

Հաբաս—անօգուտ, իզուր, ունայն, ուրեմն.
Հալ—դրութիւն, վիճակ, որպիսութիւն, տրամադրութիւն.
Հալա—դեռ, տակաւին.
Հալալ—բարի, առաքինի, անմեղ, արդար, սուրբ, հարազատ, անկեղծ.
Հալբաթ—հաւանականաբար, անշուշտ, ի հարկէ, գուցէ, երևի.
Հախ—վարձ, արժանիք, արդարութիւն, ճշմարտութիւն, իրաւունք.
Հախիրը—վերջը.
Համ—թէ, ևս, նոյնպէս.
Համդամ—ընկերակից.
Համքեաբ—արհեստակից, գործակից, նման, գաղափարակից, դասակարգակից.
Հայ—միշտ.
Հայիլ—զմայլած, սքանչացած, շլացած.
Հաշա անել—ուրանալ.

Հառ—իւրաքանչիւր, ամեն.
Հասրաթ—կարօտ, փափագ, զուրկ.
Հարամ—անմաքուր, անսուրբ, պիղծ, ապօրինի.
Հարգիզ—բնաւ, երբէք, ամենևին.
Հարդամ—միշտ.
Հարսնանաս—հարս դառնաս.
Հաւաս—աշխոյժ, փափագ, ցանկութիւն, տենչ.
Հէյրաթ—մատաղ, հիացած.
Հէյրան—հիացմունք, զարմանք, սքանչացում.
Հէնց ամ—այնպէս եմ.
Հէչ—բնաւ, ամենևին, ոչինչ, իսկի.
Հէր—հայր.
Հէքիմ—բժիշկ, դատաւոր, նահանգապետ.
Հընց—հէնց.
Հիլ—համեմի մի տեսակ.
Հիլալ—հարազատ, ականակիտ, մաքուր, վճիտ, լուսնի մահիկը, կամար.
Հիմմաթ—ջանք, ճիգ.
Հիմունք—հիմք.
Հովզ—աւազան.
Հունար—շնորհք, ձիրք, հանճար, տաղանդ, հնարիմացութիւն.
Հուշ անել—զրգռել, զոռգոռալով ծաղրել.
Հուրի փարի—յաւերժահարս, գեղեցկուհի.
Հուրի ղլման—յաւերժահարս.
Հուքմ—հրաման, իշխանութիւն.
Հուքումաթ—կառավարութիւն, հրաման.
Հօսն—գեղեցկութիւն, փայլունութիւն.

Ղ

Ղաբուլ անել—ընդունել, համաձայնել.
Ղաբահաթ—ամօթ.
Ղադիմ—հին, վաղեմի.
Ղադր—երախտիք, յարգ, արժէք, նշանակութիւն, կշիռ, լաւութիւն.
Ղազկի—մանր դրամ.
Ղաթար—շարք, կարաւան.
Ղաթարսան—շարքով կանգնած մալ.
Ղալամ—վրձին, գրիչ.
Ղալմուղալ—աղմուկ.
Ղահար—հոգս, մտատանջութիւն.
Ղամ—ցաւ, հոգս, վիշտ,
Ղամար—լուսին, կամար.
Ղամդայ—աչքի ծայրով սիրատարփ հայեացք.
Ղամդայ—վիշտ ու հոգս.
Ղայիլ—յօժար.
Ղայում—ընտանի, ազգական.
Ղասաւաթ—մտածմունք, վիշտ.
Ղաստ—թշնամի, կեղծեաց, առիթ, աշխատանք, դիտաւորութիւն, մտադրութիւն.
Ղարաւաշ—աղախին, նաժիշտ.
Ղարար—անդորրութիւն, հանգիստ, ուրոշում.
Ղարիբ—օտարական, պանդուխտ.
Ղարղաշել—բամբասել.
Ղաֆաս—վանդակ.
Ղէյրի—բացի, օտար.
Ղլման—նման.
Ղորդ—ճիշտ, ուղիղ, ճշմարիտ

Ղուբար—կափարիչ.
Ղուղբաթ—կարողութիւն, զօրութիւն.
Ղութի—արկղ, սնդուկ, տուփ.
Ղուլ—ստրուկ, գերի, ծառայ.
Ղուլլուղ—սպասաւորութիւն, ծառայութիւն.
Ղուի—բարակ փեռուր, բմբուլ.
Ղուճաշ—նուրբ կերպաս.
Ղուշ—թռչուն՝ արծիւ.
Ղուսա—վիշտ, ցաւ, թախիծ, տրտմութիւն.
Ղուվաթ—ոյժ, զօրութիւն.
Ղուրբաթ—օտարութիւն.
Ղուրբան—մատաղ, զոհ.
Ղպաղ—ափ, կողմ.
Ղօնաղ—հիւր.
Ղօնչայ—կոկոն.
Ղօշ—թևի բերան,

Ճ

Ճառ—ջահ.

Մ

Մագեար, մգամ կամ մգար—մթթէ.
Մադան—հանք.
Մազէ—չարազ, աղանդ.
Մաթ—շլարած, զարմացած, ապշած, հիացած.
Մաթահ—հազագիւտ.
Մաթլաբ—նպատակ, պահանջ.
Մալ—ապրանք, ինչք, գոյք, ստացուածք.
Մալաք—հրեշտակ.
Մախշուշ—խառնաշփոթ.
Մահալ—տեղ, վայր, գաւառ, փողոց.
Մահլայ—թաղ, քաղաքամաս.
Մաղբուր—հպարտ, անքարտաւան.
Մամնուն—գոհ.
Մայիլ—հիացած, զմայլած.
Մալլիս—խնճոյք, հանդէս, ժողով.
Մասկեան—բնակարան, տեղ.
Մատաղ—զուրբան, զոհ.
Մարթ—մարդ.
Մարիֆաթ—շնորհք, ձիրք, ճարտարութիւն.
Մարջան—կարմիր բուստ (ծովային մի բոյս է).
Մէ կամ մէգ—մի.
Մէհմար—ճարտարապետ.
Մէհնաթ—նեղութիւն, տանջանք.
Մէյխանէ—գինետուն.
Մլհամ—սպեղանի.
Մինաքարած—յախճապակած, ոսկեվրայ զոյնզգոյն նախշած.
Մին դամ—մերթ, երբեմն, նւագ.
Մին թա—մի հատ.
Մինչիւսօր—մինչև այսօր.
Մինխեռ—միանգամից.
Մննաթ կամ միննէթ—երախտիք, մէկից պարտաւորուելը.
Մոնչով—ոչ ոք.
Մոնցով—ինչպէս որ.
Մուդա—հակառակորդ.
Մուլք—կալուածք.
Մուխտասարի—հաստատ.
Մուհրաչ—կարիքաւոր, կարօտ.
Մուղամ կամ մղամ—եղանակ.
Մուշտաղ կամ մուշթաղ—կարօտակէզ փափագող.
Մուշտարի—յաճախորդ, գնող.
Մուսամբա—մի տեսակ թռչուն է, որը

համեղ միս ունի.
Մուրազ—անկանք, իղձ, փափագ.
Մուրթաջան—մի տեսակ կերակուր, թարգման.
Մուրվաթ—խիղճ, գթութիւն.
Մոհթաբար—հաւատարիմ, հաստատուն.
Մոհր—կնիք.
Մոտիւ—եղանակ.
Մորդ—հաւ.

Ց

Ցալդայ—այժմ.
Ցեաղ—միտք, յիշողութիւն.
Ցեառ—կամ.
Ցէշխ—սէր.
Ցիսկի—երբէք.
Ցիրուշ—ուրիշ.
Ցօթ—օդ.

Ն

Նաբաթ—բիւրեղացրած շաքար, շաքարապաղակ.
Նադուն—յիմար, անշնորհք, անգէտ, տիմար.
Նազ ու զամզայ—նազ ու տուզ, նազանք.
Նազուք—նուրբ, փափուկ.
Նազելի—սիրելի.
Նալլաթ—անէծք, նզովք.
Նանբաթ—բարութիւն.
Նանմադ—շնորհք, ողորմութիւն.
Նաղաշ—նկարիչ, զարդանկարիչ.
Նաղատ—անյարմար.
Նաղուս—զանգ, կոչնակ.
Նամ—խոնաւ, թաց, շաղ.
Նամարդ—տմարդ, ապաշնորհ.
Նայմուդ—անանպատակ.
Նաշայ—վայելչութիւն, քէֆ տանել.
Նաչար—անճար, խեղճ, անօգնական.
Նասաղ—պատիժ, տկար.
Նաս—անյայտող, հակառակ.
Նասիհաթ—խրատ, կտակ, աւանդ.
Նաֆաս—շունչ.
Նէջիբ—ազնիւ, բարոյական.
Նիգեահ—դիտել, նկատել, նայել.
Նհանգ—կոկորդիլոս.
Նշանակ—նպատակ.
Նուբար—նոր և հազուագիւտ պտուղ, ենախայրիք.
Նօվ—նոր.
Նօվչայ—մատաղատունկ, նորաբոյս.
Նօքար—ծառայ, սպասաւոր.

Շ

Շադրար—մեծ մեծ ծակերով մաղ.
Շալ—ցփսի.
Շալլայ—Աստուծով.
Շահ—պարսից թագաւոր.
Շանմար—նեա օձ.
Շարթ—դրաղ, պայման.
Շառ—զրպարտութիւն, փորձանք, չարիք.
Շեմս—արև, արեգակ.
Շիլ—խենթ.
Շիր—առիւծ.
Շիրին—քաղցր, սիրուն, անուշ.
Շմշատ—տոսախ, մի տեսակ ծառ, որի փայտից գդալներ են շինում.
Շնաս—ճանաչող.
Շուշէ—ապակի.

Շքարվան—որսորդ.
Շօրօշ—պաթողչէք, շասրաշ, կեցցէ, ուրախութեան բացականչութիւն.
Շոչլայ—ճառագայթ, բոց.

Ո

Ուլոր-մուլոր—ոլոր մոլոր.
Ումուդ—յոյս, ապաւէն.
Ումը կամ ումբը—կեանք, արև.
Ուռուսի—պարսկական ապակեզարդ [դոներով սենեակ.
Ուստ—որտեղից.
Ուր—իր.

Ջ

Ջախ—ժամանակ.
Ջամ ու դամ—փաղաքշանք.
Ջայիր—չիման, սիզաւէտ տեղ, ժարգագետին.
Ջանդալ—պատառաքաղ, կեռ, ճանկ.
Ջարայ—ճար, միջոց.
Ջարխ—անիւ, ճախարակ, բախտ.
Ջեգի—չը դրի.
Ջես խաբար—չգիտես.
Ջըմ—չեմ.
Ջինի—ճենապակի.
Ջոք—չորս.
Ջրաղ—ճրագ, աշակերտ խանութի.
Ջուվար—ինչու համար.
Ջունայ—ինչու որ.
Ջուվքի—որովհետև, ինչու որ.
Ջուր—մինչև.
Ջոլախ—կաղ, հաշմանդամ.

Պ

Պաք—պաս.
Պողդէր—եղջիւրեր.
Պուրնչկ—շրթունք.

Ջ

Ջաղ—պարարտ, գէր, մեծ.
Ջամ—պղնձից շինուած աման, ջուր ածելու համար.
Ջամալ—դէմք, կերպարանք, դիմանըկար, գեղեցկութիւն.
Ջան—ժարմին, հոգեակ.
Ջաննաթ—դրախտ, երանութիւն.
Ջառ—մունետիկ, համբաւ, շնորհք, վիրաբոյժ.
Ջառահ—վիրաբոյժ.
Ջաֆէ—նեղութիւն.
Ջիգար—թոք, լեարդ.
Ջնաթ—կոզմ, առիթ, պատճառ.
Ջղայ—թանկագին ակներով զարդարուած զարդ գլխի.
Ջուխտ—զոյգ.
Ջուզաբ—պատասխան, խօսք.
Ջուշ—եռուն.
Ջուռիաթ—ոյժ.
Ջօվհաիր—գոհար.

Ռ

Ռախատ—զգեստ.
Ռահմ—գութ, խիղճ, ողորմութիւն.
Ռահմաթ—գթութիւն, ողորմի.
Ռույեաթ—դէմք, երես.
Ռուսխաթ—արձակուրդ, արտօնութիւն.

Ս

Սաբր—համբերութիւն.
Սաղաղ—մատաղ, ի սէր, ի շնորհս.
Սազ գալ—յարմարիլ, պատշաճիլ.

Ոաթ—քեռերիբարի սև տեսակը.
Ոաթամ—պատճառ.
Ոալահ—մինչև անդամ, նպատակայար-
Ոալբի—նոճի. [մար.
Ոալբովան—նոճու նման բարձր, ուղ-
Ոահլ—ուղիղ. [ղաձիգ,
Ոահմաթ—ողորմած.
Ոաղ—ողջ, առողջ, կենդանի.
Ոաղան—աման.
Ոաղիքան—կենդանի.
Ոան—ինքդ.
Ոանամ—դեղեցկուհի.
Ոանդուղ—արկղ.
Ոառաֆ—սեղանաւոր.
Ոարփուշ—գլխի ծածկոց.
Ոարդար—փոխարքայ, մեծ իշխան, գըլ-
խաւոր, զօրապետ.
Ոաֆ արած—յղկած, հարթած, պարզած.
Ոինէ—կուրծք, լանջ.
Ոուլթուն—սիւն.
Ոուլթան—մահմեդական միապետների
տիտղոսն է, մասնաւորապէս Թուր-
Ոումբուլ—նունուֆար ծաղիկ. [քիոյ.
Ոուսամբար—անուշահոտ բոյս, դաղձնի
տեսակից.
Ոուրաթ—պատկեր, դէմք, կերպարանք.
Ոուրայի—նաշխած, ուղիղ.
Ոուֆրա—սփռոց.
Ոօհրաթ—քաղցր զրոյց.
Ոօվդրգար—վաճառական, առևտրական.

Վ

Վադա—ժամադրութիւն, միջոց.
Վադր—վարդի պէս.
Վաթան—հայրենիք, ծննդավայր.
Վախտ—ժամանակ, միջոց.
Վասմ—կտակ, բաժին, գովասանք.
Վիթել—հոսել, թափել.
Վիլ—մենակ, բաց թողած.

Տ

Տիր—ինչպէս, անդամ, խիստ.
Տուգուն—խանութ.

Ր

Ռիշխանդ անել—հեգնել, ծաղրել.

Փ

Փայ—բաժին, մաս.
Փայանտազ—թանկագին դիպակ, պատ-
ուոյ համար մեծի ոտքերի տակ
ձգուելիք պաստառ.
Փաշայ—գլխաւոր, պետ, տաճկական
Փառ—ճիւղ, փայլ. [իշխան.
Փարգայ—վարագոյր.
Փիշքեաշ—ընծայ, պարգև, նուէր.
Փիս—վատթար, գէշ.
Փոշիմանել—զղջալ.

Ք

Քաւարան—ապաշխարատեղի.
Քեաբաբ—խորոված.
Քալանթար—գիւղի առաջաւոր.
Քաննաս—աղբակեր.
Քանչ էդ—քան թէ այդ.
Քաչալ—ճաղատ, տազ.
Քառակերպ—խաչաձև.
Քասիբ—չքաւոր, աղքատ, չունևոր.
Քարինջ—քարից տաշած.

Քեաթ—կենդանու առջևի ոտքի վերևի մասը.
Քեալամ—խօսք, բառ, բազուկը.
Քեամալ—կատարելութիւն, հասկացողութիւն, խելք.
Քէշդ անել—մեն գալ. շրջել.
Քէսմ—յատկութիւն, արհեստ.
Քէրդար—գործող.
Քուլուգ—հողի գունդ կտոր.
Քօլլ—բոլոր, հոմայն, ամբողջ.
Քօհնայ—հին.
Քողը—քող.
Քօմակ—օգնական, օգնութիւն.
Քօռ—կոյր.
Քօվանց—կողքից.

Օ

Օդա—սենեակ.
Օխտը—եօթը.
Օղվաթ—կարողութիւն, տրամադրութիւն.
Օնչօվ—ոչ ոք.
Օչաղ—ընտանիք, վառարան.

Ֆ

Ֆալաք—բաղդ, վիճակ.
Ֆանլայ—բանալը, մշակ.
Ֆանմ—հասկացողութիւն.
Ֆաղիր—աղքատ, խեղճ.
Ֆանուս—լապտեր.
Ֆառանգ—եւրոպացի.
Ֆառշ—սալայատակ, յատակի սփռոց.
Ֆթաթ—ժաքուր, զուտ.
Ֆիրուզ—թանկագին կապոյտ քար.
Ֆրսաթ—առիթ, պատեհութիւն, յարմար բոպէ.

ՀՇՏՈՒՄՆԵՐ

Ո՞ՐՆ Է ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Հայաստանի Արուեստի Գործերի Վարչութիւնը և Ռ. Մելիքեանի անուան երաժշտական գիտա-հետազօտական կաբինետը 1944 թուին Երևանում հրատարակել է արուեստի վաստակաւոր գործիչ՝ Գարեգին Վանեանի «ԱՇՈՒՂՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՐՒԵՍՏԸ» խորագրով գիրքը, որի 34-րդ էջում, «Աշուղական դպրոցներ» գլխում, կարդում ենք հետևեալը.

—«Հայ աշուղները հիմնաւորապէս հանդէս են գալիս 17-րդ դարում»։

Այս շտապ և վճռական եզրակացութիւնը ոչ միայն թիւրիմացութիւն է, այլ և պատմական անճշտութիւն, որովհետև փաստն այն է, որ 17-րդ դարից առաջ, դեռ 16-րդ դարում, Հայաստանում հրապարակ են գալիս աշուղներ, որոնք հնչեցնում են աշուղական չօնգուրն ու երգերը։

Ահա այդ աշուղներից մէկն է Հազարան երգչի հայրը, որ դեռ 16-րդ դարում իր ձեռքում բարձր է պահում հայ աշուղական արուեստի դրօշը։ Արուեստագէտ հօր գծած ուղիով քայլում է անվկանդ նաև որդին՝ Հազարանը, ինչպէս այդ ցոյց են տալիս ձեռագիր Աւետարանի յիշատակարանում աշուղի կենսագրութեան հետևեալ սեղմ տողերը.

—«...Որպէս հայրն իւր, նոյնպէս և սա (Հազարան աշուղը. Ա. Ե.) էր Երևելի աշուղ»։

Երևանի հայ ժողովրդի զաւակն է Հազարան աշուղը։ Այդ հանգամանքն ընդգծում են թէ ձեռագիր յիշատակարանը և թէ նրա յօրինած պատմական տաղի հետևեալ տողը.

—«Շաբաթ էր լուս կիրակի, որ կրակ տվին մեր Հարևան»։

Ձեռագրի տեսակներից երևում է և այն, որ Հազարան գյուղն ապրել է 16-րդ դարի վերջին քառորդում և 17-րդի առաջին շրջանում։ Այդ ժամանակաշրջանում նա յօրինում է բազմաթիւ բարոյական-խրատական և պատմական տաղեր, որոնցից մէկի բովանդակութիւնը տանում է մեզ 1604 թուականը։ Դա Շահ-Աբբաս առաջինի թագաւորութեան պատմաշրջանն է, երբ ֆէօդալական-կալուածատիրական ինքնիշխան խաներն ու փաշաներն իրենց սանձարձակ բռնութիւններով անխնայ հարստահարում են և կեղեքում ժողովրդի ստեղծագործող դասերին։ Դա այն ժամանակաշրջանն է, երբ հայ գրականութեան մէջ իշխող գրաբարը և սխոլաստիկ ուղղութիւնը հնարաւորութիւն չէին տալիս ժողովրդին առաջադիմելու, երբ դեռ չկային քիչ թէ շատ կանոնաւոր դպրոցներ, երբ հայ ժողովուրդը գաղափար անգամ չունէր մամուլի, թատրոնի, գրագրաընթերցարանի մասին, երբ հոգևորականութիւնն էր իշխում իր յետադիմական քարոզներով։

Ահա այդ դարաշրջանում պարսկա-օսմանեան արշաւանքներն աւերում են Հայաստանի շէն քաղաքներն ու գիւղերը և քայքայում ժողովրդի տնտեսութիւնը։

Ժամանակաշրջանի քաղաքական այդ մռայլ անցքերի և յատկապէս հայ ժողովրդի տնտեսական ծանր վիճակի յուզիչ պատկերը տեսնում ենք հնագոյն ձեռագիր յիշատակարաններում։ Այդ տեսակէտից յատուկ յիշատակութեան արժանի է նաև Հազարան գյուղի յօրինած պատմական տաղը, որի բովանդակութիւնն այսօր առանձին նշանակութիւն է ստանում նրանով, որ նկարագրում է Շահ-Աբբաս առաջինի Երևանի գրաւման և նրա հրամանով ժողովրդի գաղթի ու տառապանքների յուզիչ պատմութիւնը։ Ցակայն, ժամանակի քաղաքական մռայլ դէպքերի մասին աւելի ցայտուն գաղափար տալու համար այստեղ նախ առաջ բերենք հին ձեռագիր Աւետարանի յիշատակարանից հետևեալ փաստաթուղթը.

— ՀԻ դառն և Ի վշտաշատ ժամանակիս, որ ոչ գրով կարեմք բաւել և կամ ծանուցանել զեղեալ չարիսն... ևս առաւել տառապեալ ազգիս մեր հայոց, որ էր պատճառն այս զի Ի թուականիս

ՌԼԲ (1032+551=1583) ամին եկաւ Ծարհատ փաշայն 'ի Ստամպոլու հրամանաւ սուլթան Մուրատին իջաւ 'ի քաղաքն Երևան, և փախոյց տէր երկրին զՄահմադխանն պարսից թագաւորութեան Խուդաբանդ Շահին. ապա 'ի թուականիս ՌԾԲ (1052+551=1603) եկաւ Ազատշանն՝ որդի Խուդաբանդ Շահին վրէժխնդիր իւր հայրենական աշխարհին, յաւուրս աշնանային յանկարծ իջաւ 'ի Թավրէզ, և զաւուրս տասն և հինգ կոտորեաց զազգս Օմարին, և էառ զբերդն Անտի իջաւ 'ի Նախչուան, զայն ևս էառ օր մի, և ապա եկեալ 'ի վերայ Երևանայ բերդին. եօթն ամիս պատերազմեցաւ ընդ նոսա և ապա կոտորեաց զամենեսեան և էառ զբերդն։ Յետ այնորիկ գնաց մինչև 'ի սահմանս Կարսայ բերդին, եկին զօրքն պարսից աւերեցին զբազում երկիրս՝ և գերեցին բազում քրիստոնեայս յաւելի քան զերկու բիւրս։ Յայնժամ եկաւ Զղալի որդին Ստամպոլու՝ անհուն և անհամար հեծելովք 'ի վերայ Շահաբասին։ Յորժամ զբազմութիւն նոցա ետես՝ հնարս իմացաւ և ապարար հրաման աւերելոյ աշխարհիս հայոց։ Եկաւ Ամիրդուխանն բազում զօրօք և եհան զամենեսեան 'ի տանէ, և 'ի հայրենեաց, հայք՝ տաճիկք՝ Շիրակվանայ մինչև 'ի գաւառս Գողթան։ Վայ մեզ թէ յայնմ աւուր նեղութիւնն ով կարէ պատմել, թէ որպէս անողորմաբար տանէին զազգս հայոց. ոչ թողուին որդիս բարձցէ զծերացեալ ծնողն, կամ տոցն մարք զանկուսս իւրեանց։ Այնչափ շտապաւ վարէին, որ ոչ հայր՝ զորդին գտանէր, և ոչ եղբայր՝ զեղբարս. և ոչ այր զկին իւր, և ոչ մայր զդուստրն իւր. բազում ծերք և տկարք կոխան եղեալ մեռանէին. և լինէին գէշ գազանաց։ Յորժամ հասան 'ի մեծ գետն Երասխ, եկեալ խապարս, թէ անա հասին զօրք Օմարին, որ ոչ գոյ հնար զերծանելոյ։ Յայնժամ ան մեծ անկաւ ամենեքեան թափեցան 'ի ջուրն և անցին 'ի միասին, թագաւորն և զօրք իւր և ռամիկքն, և ոչ ոք վնասեցաւ խնամովն Աստուծոյ։ Աւերեցին զգիւղաքաղաքն Զուղայ որ էր գեղեցկաշէն և հիանալի քաղաք։

Այս յիշատակարանն ուշագրաւ է կլինակի տեսակէտից, որովհետև պարզում է պատմական հետևեալ կէտերը.

1) Որ Շահ-Աբբաս առաջին Երևանի բերդը գրաւում է 1603 թուականին։

2) Որ Շահը Կարսի բերդի սահմանն անցնելուց յետոյ, երբ տեսնում է օսմանեան զորքի բազմութիւնը, նրանց պաշարից զրկելու և յաղթելու համար միտք է յղանում աւերել Հայաստանի քաղաքներն ու գիւղերը։ Այդ ժամանակ էլ ահա ծրագրում է՝ Հայաստանից գաղթեցնել հայ ժողովրդին։

3) Շահ-Աբբասի այդ ծրագիրն իրագործում է Ամիրդուխանը. 1604 թիւն քշում են տներից ոչ միայն հայերին, այլ և տաճիկներին, սկսած Շիրակվանից մինչև Գողթան գաւառը։

4) Հակառակ Առաքել Դաւրիժեցու վկայութեան, ժողովուրդը Երասխ գետից անցնում է անվնաս. —«Եւ ոչ ոք վնասեցաւ խնամովն Աստուծոյ»։

Երևանի հայ ժողովրդի գաղթի յուզիչ պատմութիւնը կարդում ենք նաև Առաքել Դաւրիժեցու պատմութեան 451 էջում (1896 թ. Գ. տպ.) հետեւեալ պարզ տողերով.

—«...Նման սոցին հրամայեաց նոյն մեծ Շահաբասն, որ գերեանայ քաղաքի բնական տեղացի հայս հանին յԵրեանայ և վարեալ տարան յԱսպահան քաղաք և ընակեցուցին՝ի մէջ քաղաքին խառնիխուռն ընդ մահմեդականաց, ՝ի թաղսն, զոր Թաղթիղարաջայ, և Բաղաթ կոչեն»։

Դաւրիժեցու վկայութիւնն արժէքաւորում է նրանով, որ էլ աւելի ընդարձակ կերպով ընդգծում է Երևանից Սպահան հասած գաղթական հայութեան բնակած թաղամասերը, որոնք են Թաղթիղարաջայ և Բաղաթ։

Սակայն, չպէտք է մոռանալ, որ Դաւրիժեցին իր պատմութիւնը գրել է ժողովրդի գաղթից կէս դար, 55 երկար տարիներ յետոյ, որով նա չի կարող համարել ժամանակակից-ականատես պատմաբան։ Նա գրի է առել իր լսածները։

Այդ տեսակէտից էլ արժէքաւոր է Հաղարան աշուղը, որ թէ գաղթի ժամանակակից է և թէ ականատես—«Հաղարան աշուղ խաղս ասաց, քանզի այրով տեսած կայր»։ Ահա թէ ինչու նրա գրած

ոաղն աւելի վաւերական և հարազատ փաստաթուղթ է։ Արդարև, եթէ ցանկանում ենք իմանալ, թէ ժամանակի քաղաքական դրութիւնն ինչ պատկեր էր ներկայացնում և 1604 թուին ինչպիսի հանգամանքներում տեղի ունեցաւ Երևանի տարաբախտ հայ ժողովրդի գաղթը, աւելի ցայտուն ու պերճախօս աղբիւր չունենք, քան աշուղի տաղը։ Այդտեղ էլ կայանում է նրա յօրինած երգի պատմական նշանակութիւնը, որ հնագոյն ձեռագրից այստեղ առաջ ենք բերում ամբողջութեամբ։

«Եկայք Ադամայ որդիք*) ժողովեալ, 'ի մի նստենք թախտին 1),
Ես ձեզ պատմեմ լալագին զողբ և զկոծն հայոց ազգին.
'Ի հայոց հազար թուին և առ 2) 53 յաւելին (1053 + 551 = 1604),
Ելք աւելեաց պատկերին՝ մուտ յամսեանն Նաւասարդին 3)։

Խաւար տիրեաց մեր ազգին, բարկացաւ մեր Տէրն երկնային,
Որպէս կարկուտ 'ի յամպէն, նոյնպէս զօրքն 'ի պարսից իջին.
Գլուխ զօրաց էր նոցին՝ Շահաբաս Խուդաբանդ որդին,
Հազարապետ ընդ նոսա՝ Ցէբեան մեր քաղաքն իջին։

Զորս կողմն վրան դրին և 5) զաւադ բերդն պաշարեցին,
Եօթն ամիս սեպտեմբ 6) տուին՝ և եօթն օր վէր անցուցին.
Ցորժամ տարին բոլորեցաւ, բօթատուն էրեկ 7) կանգնեցաւ,
Թէ զ'Զղալօղլի կասեն, որ 8) վերայ քեզ կոիւ շարժեցաւ։

Շահաբասն ուրախացաւ, իւր զօրաց թիւն չիմացաւ,
Սլեհ ու զրահ հագաւ և փողոստէգիմն զգեցաւ.

---

*) Այս տաղը 1880 թուին աղաւաղած և պակասաւոր լոյս է տեսել Յարութիւն Տէր-Յովհաննէսեանցի «Պատմութիւն Նոր-Զուղայու» գրքի (Ա. հատոր) 27-28 էջերում։ Մեր ձեռագրի և այդ գրքի մէջ կան մի շարք հիմնական տարբերութիւններ, որոնց նշանակում ենք այստեղ — 1 և 2 պակասում են Յովհաննէսեանցի գրքում, 3) Զուղայի պատմագիրն իր գրքի էջ 27-ում գրում է. «Յամի 1602 յամսեանն Օգոստոսի»։ Սխալ է, պիտի լինի 1604։ 4 և 5 պակասում են, 6) Նեղութիւն, 7) եկաւ, 8) պակասում է։ Ա. Ն.

Թեն հմայիլ 9) կապեաց, համ 10) խաներուն խալաթ 11) ուղարկեաց,
Վաթսուն հազար ձիաւոր՝ առ իւրեան զօրքն ժողովեաց։

Ժողովեաց սուլթան ու խան, որք եկան նստան առ Շահ 12) արքայն,
Երեք օր և 13) երեք գիշեր՝ տրտմութեամբ նստան 'ի դիվան.
Մին սուտ գրաբան 14) գտան, ասաց՝ 15) նշանն է աւերման,
Այնպիսւոյ աչքն կուրանայ, ինքն անկանի 'ի խոր գնտան 16)։

Կրկին յետ հարցմունք ելան, նա էարբ զարիւնն ամենայն,
Ասաց՝ աւերեցէք զերկիրն, ու տարէք զմարդն Ասպահան.
Այնժամ շուն 17) արքայն՝ իւր զօրացն եհան ահեղ 18) հրաման,
'Ի Անւոյ քաղաքէն հետ՝ աւերեցէք մինչև Նախչուան։

Յորժամ առին հրաման արքային 19) ազգն մահմեդական,
Շաբաթ էր լուս կիրակի, որ կրակ տվին մեր 20) Հարեան.
Սարէրն ամէն սուգ մտան, ծով և գետ 'ի լաց ղարժեցան,
Շատ հարսն և աղջիկ տարան՝ 'ի Քաշան և 'ի Սպահան։

Շատ նազելի ճոթ պատկեր՝ սեվադէմ պարսից ձեռքն անկան,
Շատ զօրաւորք կորիչ նետողաց ազգէն սպանան.
Շատ գեղեցիկ 21) պատկեր 22) մանկունք յոտնատակ թաւալմամբ մեռան,
Շատոնք Արատան 23) ընկան, ջրախեխ 24) առ Առտուած փոխեցան։

Աստ ըստվորս է բիբաֆայ 25), ձեզ վկայ բերեմ ես 26) զՋուղայ,
Փոխան Սաղմոսաց երգոց՝ ոհ 27), բու աւերակի ձայն կուգայ.
Զգեղեցիկ ճոթ պատկերք 28), որ խնամով դու զնոսա սնար,
Տարան Սպահան քաղաքն, խառնեցին՝ 'ի պիղծ թաթն որ կայր,
Հազարան աղուղ տարս ասաց, քանզի աչքով տեսած կայր 29)։

---

9) Շահ-Աբբասն Թեին հմայիլ է կապում, որպէսզի նրա զօրութեամբ յաղթանակէ։ Դա այն դարաշրջանն էր, երբ պարսիկ զօրքը հաւատում էր հմայութեան։ 10) պակասում է, 11) նէր, թանկագին արքայ, 12 և 13 պակասում են, 14) զրրաց, 15) նայեցուց. 16) բանտ, 17, 18, 19 եւ 20 պակասում են, 21) գեղեցիկ ճոթ, 22) կապիկ, 23) Արաղն, 24) Ջրասոյղ, 25) անկայուն, 26 և 27 պակասում են, 28) պատկերներն, 29 պակասում է։ Ա. Ե.

Ինչպես է կայանում այս տաղի նշանակութիւնը — նրանում, որ նախ՝ գծում է Երևանի ժողովրդի գաղթի հարազատ պատկերը, ապա՝ լուսաբանում է աշուղական գրականութեան հետ սերտ կապ ունեցող մի կարևոր խնդիր։ Աշուղն իր տաղը գրել է 1604 թ-ին, իսկ նրանից առաջ, 1580—1600 թ-ականը, ինչպես ցոյց են տալիս նրա կենսագրութեան սեղմ տողերը, յօրինել է բազմաթիւ բարոյական-խրատական երգեր։ Դա նշանակում է, որ նա ստեղծագործել է գլխաւորապես 16 րդ դարի վերջերում։ Պատմական այդ տեսակն էլ անվիճելի է դարձնում հայ աշուղական գրականութեան գոյութիւնը 16-րդ դարի վերջում և միանգամայն հերքում է Գարեգին Լևոնեանի այն կարուկ և սխալ տեսակէտը, թէ հայ աշուղները հիմնատրապես հանդէս են գալիս 17-րդ դարում։

Բայց դրանով չեն սահմանափակւում Գ. Լևոնեանի գրքում արձանագրուած սխալ տեղեկութիւնները։ Առաջին հայ աշուղական դպրոցի հիմնադրութեան կարևոր հարցը պարզելիս նա ընդգծել է այսպիսի վճռական տեսակէտ.

—«Առաջին հայ աշուղական դպրոցը հիմնել է Նոր-Ջուղայում 17-րդ դարի առաջին քառեակում (պարսկա-հայկական ղրպրոց)։ Հիմնադիրները հանդիսացել են անուանի աշուղներ Ղուլ Իգաղը և Մկրտիչը» (էջ 36)։

Այս տողերի ճշտութիւնը միանգամայն հերքում են աշուղ Հազարանի կենսագրութեան հետևեալ տողերը.

—«Բազմաշխատ երգիչ Հազարան օղլի, է աշուղ Երևանցի, ծնաւ 'ի Ցերևան յ3 Ապրիլի յամի 1550. որպէս հայրն իւր նոյնպէս և սա էր Երևելի աշուղ։ ունի սա զբաղում տաղս բարոյական խրատուց... յերգ ողբերգութեան առնէ այն ժամանակի զաղէտս Երևանու Ցիշեսջիք 'ի մաքրափայլ աղօթս ձեր» (Զեռագիր Աւետարանի յիշատակարանից, էջ 326)։

Այս յիշատակարանը վերջնականապէս լուսաբանում է հայ աշուղական գրականութեան պատմութեան համար կարևոր նշանակութիւն ունեցող երկու հիմնական կէտեր.

1) Այն, որ առաջին հայ աշուղական դպրոցը չի հիմնել Նոր-

Ջուղայում 17-րդ դարի առաջին քառորդում, ինչպես Գ. Լևոնեանը վճռականապես արձանագրել է իր գրքի 36-րդ էջում։

2) Աշուղական առաջին դպրոցն անվիճելիորեն սկիզբ է առել Հայաստանում, որտեղից ապա, 17-րդ դարում, աշուղական արուեստն անցել է Նոր-Ջուղա և ժամանակի ընթացքում ձևակերպուել է և ստացել ուրոյն կերպարանք։

Գ. Լևոնեանի գրքում աչքի ընկնող սխալների շարքում ուրոյն տեղ են գրաւում նաև իրար հակասող թուական տուեալները և ժամանակագրական անճիշտ տեղեկութիւնները։ Այդ ցայտուն էջերից մէկն է հետեւեալը.

— «Նոր-Ջուղայի դպրոցը իր գոյութիւնը պահեց,—գրում է Լևոնեանը,—մինչև 18-րդ դարի 80-ական թուականները, տալով մի շարք վարպետ աշուղներ... Այդ անուններից յայտնի են Պետրոս Ջուղայեցի, Ղազար Յովհաննէս, Աբդին օղլի Հայրապետ, Մինաս օղլի, Միսկին Ստեփան... Ալլահվէրդի...»։

Փաստ է, որ Գ. Լևոնեանի յիշատակած իրանահայ աշուղներից Ալլահվէրդին ծնուել է 1820 թ-ին Սպահանի Զարմահալ գաւառի Լիւսեան գիւղում*), ուրեմն նրա աշուղական գործունէութեան շրջանն ընկնում է 19 դ դարում, իսկ Միսկին Ստեփանը ծնուել է 1868 թ-ին Փէրիա գաւառի Ղառղուն գիւղում, և աշուղական սազը հնչեցրել է 19-րդ դարի վերջին շրջանում, 20-րդ դարի առաջին քառորդում։ Դեռ 1920 թ-ին էր, որ աշուղի բերանից գրի առինք իր յօրինած միակ երգը։

Ահա 19-րդ և 20-րդ դարաշրջաններում ապրող այս աշուղներին Գ. Լևոնեանն իր գրքում բազմեցրել է 18-րդ դարում։ Աւելի տարօրինակն այն է, որ նրանց գերեզման է իջեցրել 18-րդ դարի 80-ական թուականներին, երբ նրանք դեռ ծնուած էլ չէին։ Սրանք այնպիսի աչքառու սխալներ են, որոնք աղաւաղում են իրանահայ աշուղական գրականութեան պատմութեան էջերը և նսեմացնում Գ. Լևոնեանի գրքի բովանդակութիւնը։ Սակայն, էականն այդ չէ,

*) Տե՛ս մեր հրատարակած «Պարսկահայ նորագոյն աշուղները» 1925 թ. Վիեննա։

այլ այն, որ Նոր-Ջուղայի աշուղական դպրոցն իր գոյութիւնը չի պահել մինչև 18-րդ դարի 80-ական թուականները։ Դա Գ. Լևոնեանի գրչով արձանագրուած պատմական սխալ է։ Իրականութիւնն այն է, որ մինչև 20-րդ դարը Նոր-Ջուղայում տեսնում ենք մի շարք աշուղներ, որոնցից Միսկին Մատթէոսը վախճանուեց դեռ 1945 թուին։ Այսօր էլ, երբ գրում ենք այս տողերը, Սպահանի Զարմահալ և Փէրիա գաւառների հայաբնակ գիւղերից Նոր-Ջուղա եկող աշուղները, շրջելով տնից տուն, իրենց չօնգուրների և սազերի վրայ հընչեցնում են աշուղական երգերը։

Այստեղ էլ վերջակէտ կը դնէինք, եթէ Գ. Լևոնեանն իր գրքի 36-րդ էջում Միսկին Ստեփանին ՎԱՐՊԵՏ աշուղների շարքում չդասէր։ Դա մի կոյր աշուղ էր և իր սազի լարերի վրայ հնչեցրել է գլխաւորապէս իրանահայ յայտնի աշուղների՝ Ցարթուն օղլու, Տէր-Կարապետի, Ամիր օղլու երգերը, իսկ իր աշուղական գործունէութեան ընթացքում, ինչպէս գրել ենք մեր հրատարակած «Պարսկահայ նորագոյն աշուղներ» (Վիեննա, 1925 թ.) գրքում, յօրինել է մի հատիկ երգ, որը, սակայն, գեղարուեստական մի առանձին արժէք չի ներկայացնում։ Չնայած այդ հանգամանքին, Միսկին Ստեփանը վարպետ աշուղ է հռչակուել Գ. Լևոնեանի գրքում, բայց թէ ինչումն է կայանում նրա վարպետութիւնը, դա մնում է հանելուկ. և որի պատասխանը պիտի վերագրել Լևոնեանի վառ երևակայութեան։ Սակայն, կայ ամենաէականը, որ աշուղական գրականութեան պատմութիւնը պահանջում է լուրջ և բարեխիղճ ուսումնասիրութիւն։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թեհրան

«ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅԻ ՏԱՂԵՐԸ»

ՊՐՈՖ. ԴՐ. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

ԹԵՀՐԱՆ, 1943 Թ.

Թեհրանի «Մոդերն» տպարանից լույս տեսաւ պրոֆ. դր. Ռ. Աբրահամեանի «ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅԻ ՏԱՂԵՐԸ» խորագրով 195 էջից բաղկացած գիրքը։ Դա տաղանդաւոր աշուղի մասին մինչև օրս հրատարակւած հատորներից տարբերւում է նրանով, որ բառագիտական տեսակէտից աշխատում է տալ որոշ ճշտումներ։ Այդ նկատառումով էլ կազմւած է գրքի բառարանը։ Սակայն, չնայած այդ հանգամանքին, գրքի բանասիրական-կենսագրական բաժինը ոչ միայն նորութիւններ չի բերում և բանասիրական գրականութեան կողմից արդէն քննւած, լուսաբանւած հարցերի կրկնութիւն է, նոտագրւած գլխաւորապէս Սամերդեանի, Գ. Ասատուրի, պրոֆ. Լեւոն Մելիքսեթբեգեանի և ուրիշ հմուտ բանասէրների բարեխիղճ ու բազմակողմանի ուսումնասիրութիւններից։ այլ և աշուղի վերաբերեալ շատ էական կէտեր, որոնք արդէն լուսաբանւած են հայ գրականութեան էջերում, գրքում կամ պակասում են, կամ թերի են պարզաբանւած։ Մօտ ապագային թողնելով այդ կարևոր հարցերի քննութիւնը, այժմ անցնենք գրքի «Սայեաթ-Նովայի վերագրւած աՀհարազատ տաղեր» խորագրով էջերի լուսաբանութեանը։

Պ. Աբրահամեանը հարցի էութեան Սայեաթ-Նովայի երգերի յանգաւորման և տաղաչափական աբեստի կողմից մօտենալով գտել է, որ Կեանք եւ Արեւաս»-ում (1938 թ. Դեկտ.) մեր հրատարակած վեց երգերից հինգը վաւերական չեն, և իր տեսակէտները հիմնել է հետևեալ կէտերի վրայ։

1) Իմիտասիոն կատարողները շատ լաւ են հասկանում, որ

ամէն երգի վերջում պէտք է յիշատակել հեղինակի անունը, 2) Թիֆլիսի բարբառով միայն Սայեաթ-Նովան չի, որ գրել է, 3) գերիշխողը յամենայն դէպս Սայեաթ-Նովայի աշուղական արուեստը չէ։

Պ. Աբրահամեանի սոյն կարծիքները զուրկ լինելով գիտական մօտեցումից, մնում են սոսկ ենթադրութիւններ։ Ահա թէ ինչու.

1) Ամէն մի գրականագէտ, բանաստեղծ և պօէտ շատ լաւ գիտէ, որ բանաստեղծական ձիրքով օժտուած անհատները կարիք չունեն իմիտասիոն (նմանողութիւն) կատարելու և իրենց յօրինած երգերի վերջում այլ անուններ յիշատակելու։ Դրան ապացոյց՝ հայ մայմուլում Սայեաթ-Նովայի նման հիւսուած բազմաթիւ երգերի տարպագրութիւնը։ Բացի այդ, իմիտասիոն կատարելու համար անհրաժեշտ է լայն ծանօթութիւն Թիֆլիսի բարբառին, որը մասնագիտական լուրջ աշխատանք է և պահանջում է լեզուաբանական պատրաստութիւն։

2) Թիֆլիսի բարբառով միայն Սայեաթ Նովան չգրելու հանգամանքը պ Ռ. Աբրահամեանն իր գրքում ընդգծելիս մոռացել է ամենաէականը, որ տաղանդաւոր աշուղի թէ լեզուական և թէ ոճական արուեստն այնքան ինքնատիպ է, այնքան առանձնայատուկ, որ այդ տիպիքական յատկանիշները Սայեաթ-Նովային միանգամայն տարբերում են Թիֆլիսի բարբառով գրող միւս աշուղներից, տաղասացներից և պօէտներից։ Դրանով էլ պիտի բացատրել, որ ամէն անգամ տաղանդաւոր աշուղի մի որևէ երգը լսելիս՝ դեռ աշուղի անուան չհասած, միայն ոտանաւորի լեզուից և ոճից հետևցնելով, ասում ենք՝ «Սայեաթ-Նովա»։

Ահա թէ ինչու պ. Աբրահամեանը որքան էլ Սայեաթ-Նովայի տաղաչափական և ռիթմական արուեստը հիմք ունենալով՝ ճգնի ժխտել յայտնագործուած հինգ երգերի հարազատութիւնը, դարձեալ փաստերը գալիս են հաստատելու միայն մի հանգամանք, որ նրա մօտեցումը թէ միակողմանի է և թէ սխալ, որովհետև որևէ բանաստեղծի երգերի հարազատութեան խնդիրը գիտական հիմունքներով պարզելիս՝ ամէն մի բարեխիղճ բանասէր նկատի չի առնում զլխաւորապէս յանգ, վանկ և ռիթմ, ինչպէս այդ արել է պ. Աբրա-

համեանը, այլ և քննում է երգերի արուեստի հիմնական բոլոր յատկանիշները՝ գեղագիտական կողմի, պատկերաւոր նմանութիւնների և կառուցուածքի հետ բառապատկերները, երանգաւորումները, քնարական առանձնայատկութիւնները՝ զգացմունքի անկեղծութիւնը, մաքրութիւնը, խորութիւնը և մանաւանդ լեզուն և ոճը, որոնք որոշում են իւրաքանչիւր գրուածքի բնաւորութիւնը և յատուկ են ամէն մի գրողի։ Դրա համար էլ ասում ենք «Խաչատրեանի, Տէրեանի, Սայեաթ-Նովայի ոճ կամ լեզու»։

Կայ մի այլ հանգամանք։ Նշուած տաղերը բերնից բերան անցնելով և տաղարանից տաղարան արտագրելով՝ շատ բան կորցրել են իրենց նախնական կառուցուածքից։ Սակայն, չնայած այդ հանգամանքին, հինգ երգերի հարազատութիւնը հաստատում են հետեւեալ էական կէտերը.

1) Երգերի ոճը, երգը, որոնց մէջ գերիշխողը բացարձակապէս Սայեաթ Նովայի առանձնայատուկ և ինքնատիպ ոճն է։

2) Երգերի լեզուն, որ գերազանցօրէն դրսեւորում է Սայեաթ-Նովայի լեզուական նրբութիւններն ու երանգաւորումները։

3) Երգերի բառակազմութիւնը և պատկերաւոր նմանութիւններն ու համեմատութիւնները, որոնք միանգամայն շեշտում են Սայեաթ-Նովայի երգերի բառերի ու պատկերների յատկանիշները։

4) Երգերում իշխում են Սայեաթ-Նովայի՝ իր եարի գովքանական ձեւերը։

5) Երգերում հանդէս եկող աշուղական արուեստի որոշ տարրերը։ Եթէ ըստ պ. Աբրահամեանի պակասում են ինքնատիպ, հարուստ յանգեր, ապա իշխում են Սայեաթ-Նովայական արուեստի, օրինակ, նոյնայանգ վերջաւորութիւններ։

6) Վերջապէս՝ պ. Աբրահամեանի բնորոշումները հերքում են աշուղի դավթարից մեր հրատարակած 6-րդ երգով, որ իր էական կառուցուածքով նոյնպէս չունի Սայեաթ-Նովայի յանգաւորման կատարեալ օրինաչափութիւնը և ոչ էլ նրա աշուղական արուեստի նրբութիւնները։

Այս էական կէտերն էլ գալիս են ընդգծելու, որ պ. Աբրահամեանի գրքում տրուած բացատրութիւնները ոչ միայն միակողմանի են, այլ և արդիւնք շտապ եզրակացութեան։

***

Անժխտելի է, որ Սայեաթ-Նովային նուիրուած ամէն մի նոր գրքի բառարանը գրական տեսակէտից արժէքաւորւում է միայն այն ժամանակ, երբ ճիշտ լուսաբանւում են աշուղի բառերի նշանակութիւնները, որոնք նրա երգերի իմաստը հասկանալու տեսակէտից խոշոր դեր են կատարում։

Պ. Աբրահամեանի խմբագրած գրքի բառարանում, դժբախտաբար, կան բառեր, որոնց իմաստը նա սխալ է մեկնաբանել, իսկ ոմանց դէպքերում չհասկանալով, չի կարողացել բացատրել այնպիսի բառեր, որոնց ծագումն ու իմաստը վաղուց լուսաբանուած են։ Այս մասին աւելի ցայտուն գաղափար տալու համար այստեղ առաջ բերենք առայժմ մի քանի նմուշներ։

Իր գրքի 154-րդ էջում պ. Աբրահամեանը, «Դիտողութիւններ» խորագրով բաժնում, գրում է.

— Բրօյի բրօյի ինչ բառ է և ինչ լեզուից վերցուած, ինձ յայտնի չէ։

Անկասկած, եթէ պ. Աբրահամեանը հմուտ լինէր հայ ժողովրդական գրականութեան, ոչ այդ գաւառաբարբառը կը շփոթէր և ոչ էլ իրեն թոյլ կը տար օտարազգի բառ համարելու։ Նկատենք և այն, որ Սայեաթ-Նովան բրօյի բառը գործ է ածել իր յօրինած ոտանաւորներից «Թէգուզ ֆու քաշրն մարրիտ տան» խորագրով երգում և այն էլ կրկնել է չորս անգամ։ Ահա այդ երգից մի նմուշ.

«Թէգուզ քու քաշրն մարքրիտ տան բրօյի բրօյի,
Թէգուզ քու քաշրն ալմաս տան բրօյի բրօյի,
Եար, չիմ տա, չիմ հրատցնի քիզ քու եարէմէն, բարէբարէմէն»։

Բնորոշ է, որ Թիֆլիսի բարբառով լոյս տեսած գրականութեան մէջ — ինչպէս՝ տաղանդաւոր գրաժատուրգ Դաւրիել Սունդուկեանի թատերգութիւններում, Գ. Տէր-Աղէքսանդրեանի «Թիվ-

չիսեցոց մսաւոր կեանքի» խորագրով գրքում և ոչ էլ Սայեաթ-Նովայի յօրինած միւս երգերում բրօյի բառին այլևս չեմ հանդիպում:

Ապա ինչ ծագում ունի և ինչ է նշանակում Սայեաթ-Նովայի գէջով առաջին անգամ Թիֆլիսի բարբառում գործածւած բրօյի բառը: Ովքեր որ լաւ ուսումնասիրել են հայ ժողովրդական երգերը, միայն նրանք մեզ հետ կը հաստատեն, որ այդ բառը ոչ թէ օտար լեզուից է վերցւած, ինչպէս կարծում է պ. Աբրահամեանը, այլ պատկանում է Խարբերդի բարբառին: Ահա այդ մասին նմուշ Սայեաթ-Նովայագէտ Նիկոլ Աղբալեանի լուսաբանութիւնը.

—Գ. Հախվերդեանն իր ծանօթութեան մէջ գրում է (էջ 51). «Բրօյի բրօյի—անչափ և անհամար»: Այս բացատրութիւնը մի կոտրում է աւելի, քան այդ կրկնաւոր ասութեան բուն նշանակութիւնը: Այս բառն իր բուն նշանակութեամբ գործ են ածում Խարբերդի բարբառում: Այսպէս ասում են. ճակտին բրօյ բրօյ մարգրիտ ունի, ճակտին բրօյ բրօյ զարդիներ (հին ոսկէ դրամի տեսակն է) ունի, և այլն. և նշանակում է «շարան-շարան», «շարէշար»: Այսպիսով «անթիւ, անհամար» բացատրութիւնը պէտք է անճիշտ նկատել («Գործ», 1917, Բագու):

Սակայն, պ. Աբրահամեանը 26 տարի առաջ հայ բանասիրական գրականութեան մէջ արդէն լուսաբանւած բրօյի բառի իմաստն իր գրքում ոչ միայն չի կարողացել բացատրել, ոչ միայն Խարբերդի սիրուն բարբառը օտար լեզուի բառ է համարել, այլև իրաներէն ու արաբերէն որոշ բառերի նշանակութիւնը ևս սխալ է մեկնաբանել. ահա մի նմուշ.

Սայեաթ-Նովան իր յօրինած «Առանց քիզ ինչ կօթիմ» երգի մէջ (էջ 81) ասում է.

«Իրած խօրված ման իմ գալի, մէ տիղ չէ կայ մար ունէնամ,
Լիզվով չիմ կանացի ասի, թէգուզ խօսկս փարդ ունէնամ»:

Պ. Աբրահամեանն իր գրքի բառարանում (էջ 190) փարդ բառի դիմաց գրել է՝ միաւոր, մի հատիկ, միսկ: Սակայն, Սայեաթ-Նովայի բառի բուն նշանակութիւնն այդ իմաստը չունի: Ահա այդ մասին պ. Ն. Աղբալեանի բացատրութիւնը.

—...«Փարդ բառը, որ պարսկերէն հնչում է ֆարդ, նշանակում է բանաստեղծութեան մի տող։ Ու մեզ թւում է, որ Սայեաթ-Նովան այս իմաստով է գործածում «փարդ» բառը. նա ուզում է ասել— «Լեզուով չեմ կարողանում ասել, իմ հոգեկան վիճակն արտայայտել, թէկուզ և խօսքս բանաստեղծութեան մի տող լինի»։

Ուրեմն, պ. Աբրահամեանի բառաքննական բացատրութիւնը չի պարզում Սայեաթ-Նովայի գործածած փարդ բառի բուն իմաստը։

Բայց ահա պ. Աբրահամեանի մի այլ սխալ մեկնաբանութիւնը։ «Առանց քիզ ինչ կօնիմ» երգում (էջ 64) Սայեաթ-Նովան գրում է.

«Առանց քիզ ի՞նչ կօնիմ աշխարիս մալը.
Չիմանայ խաղագրն, չիմանայ դաշրն»։

Ընդգծած բառերի նշանակութիւնն Ավետիսեանն իր բառարանում չի տալ, որովհետև շատ պարզ են և հասկանալի, իսկ պ. Աբրահամեանն իր գրքում մեկնաբանել է այսպէս. խաղագ—փորձաճ, գիտացաւաճ. դաշ—խօսակցութիւն, խօսք, բացատրութիւններ, որոնք միանգամայն աղաւաղում են աշուղի ամբողջ տողի իսկական իմաստը։ Քալագ նշանակում է քաղաք, իսկ դալ՝ բերդ, ամրոց։

Էլ կանգ չենք առնում պ. Աբրահամեանի գրքի որոշ բառերի վրայ, որոնց բացատրութիւնները ևս չեն արդարանում և կասկածելի են։

***

Նոյնպէս պ. Աբրահամեանն իր գրքի ընթերցողների համար անորոշ և շփոթ դրութիւն է ստեղծել՝ Սայեաթ-Նովայի ծնընդավայրի մասին հաղորդելով այսպիսի հակասական տեղեկութիւններ.

—«...Ծնւում է փոքրիկ Արութինը, ապագայ Սայեաթ-Նովան, Թիֆլիսում, իսկ ըստ Լիոնիձէի, որ հիշեւում է Թէյմուրազ արքայազնի խօսքերի վրայ—Սանահնում»։

Այս հակադիր տողերը միանգամայն մթագնում են տաղանդաւոր աշուղի ծննդեան տեղի խնդիրը, որով ընթերցողների համար որոշապէս չի պարզւում մի կարևոր հարց — Սայեաթ-Նովան Թիֆլիսո՞ւմ է ծնւել, թէ Սանահնո՞ւմ։

Բացի այդ, նկատենք, որ Թէյմուրազ արքայազնի գրաւոր տեղեկութիւնը, որի վրայ հիմնւել է Լիոնիձէն և պ. Աբրահամեանը յիշատակել է իր գրքում, չի կառուցած ստոյգ տեղեկութիւնների վրայ, մի գրութիւն, որի կեղծ լինելը հաստատում է հէնց ինքը՝ Սայեաթ-Նովան իր թուրքերէն ոտանաւորի հետևեալ տողերով.

«Վաթանըմ Թիֆլիզ դուր, սամթի Գուրջիստան,
Անամ հալաբարլու, աթամ հալաբլու»։
(Հայրենիքս է Թիֆլիս, երկիրը Վրաստան,
Մայրս Հալաբարցի, հայրս Հալէբցի)։

Այս փաստն էլ միանգամայն հերքում է պ. Աբրահամեանի գրքում արձանագրւած Լիոնիձէի այն անհիմն տեղեկութիւնը, թէ Սայեաթ-Նովան ծնւել է Սանահնում։

Բայց պ. Ռ. Աբրահամեանը նման մի անհեթեթ տեսակէտ իր գրքում յիշատակելիս գոնէ նկատի պիտի ունենար մի շատ տարրական ճշմարտութիւն, որ Սայեաթ-Նովան աւելի լաւ գիտէր իր ծննդավայրը, քան թէ մի Լիոնիձէ, որ հիմնւելով Թէյմուրազ արքայազնի անհիմն խօսքերի վրայ, ազաւաղել է իսկական իրողութիւնը։

Վերջապէս, հրապարակում կայ մի ուրիշ փաստ, որ բոլորովին հերքում է թէ Թէյմուրազի, թէ Լիոնիձէի անհեթեթ կարծիքները։ Դա պրոֆ. Հր. Աճառեանի յայտնաբերած ձեռագրի յիշատակարանն է, գրւած 1766 թւին Սայեաթ-Նովայի ձեռքով և ուր աշուղն իրեն անւանում է Թլփիսցի (Թիֆլիսցի)։ Ահա փաստը.

«Ստեփաննոս քահ. գրիչ Թլփիսցի, որդի Կարապետի,
մականուն Սայեաթ-Նովայ»։

Այս տողերն էլ վերջնականապէս հերքում են պ. Աբրահամեանի գրքում նշւած Լիոնիձէի այն հեքիաթը, թէ Սայեաթ-Նովան ծնւել է Սանահնում, և միաժամանակ հաստատում, որ աշուղի ծննդավայրն է Թիֆլիսը։

***

Գ. Աբրահամեանի գրքում լրիւ չի լուսաբանուած նաև Սայեաթ-Նովայի եպիսկոպոսութեան հարցը։ Այս մասին նրա գրքում կարդում ենք միայն այսքան.

—«Ինչ վերաբերում է Սայեաթ-Նովայի եպիսկոպոսութեան հարցին, որ հրապարակ գրեց Յ. Թումանեանը, ըստ որի նա ձեռնադրուել է եպիսկոպոս Դաւիթ անունով և Իրակլիի հովանաւորութիւնն է վայելել, թէպէտ և ցոփ կեանք է ուներ, այդ հարցը հիմնովին ջրւում է հետագայ ուսումնասիրութիւններով»։

Թէ Թումանեանն ինչպիսի փաստեր է հրապարակ գրել և ինչ աղբիւրներով «ջրւել» նրա «տեսութիւնը», այս կարևոր կէտերի լուսաբանութիւնն ընթերցողները չեն գտնում պ. Աբրահամեանի գրքում։

Այստեղ նախ նշենք, որ բանասիրական գրականութեան մէջ վերջնականապէս ընդգծուած է, որ Սայեաթ-Նովան ձեռնադրուում է նախ քահանայ, ապա վարդապետ։ Միայն բանաստեղծ Ցովհ. Թումանեանն է, որ 1913 թ-ին հայ գրողների ընկերութեան կազմակերպած մի երեկոյթում «զեկուցեց» Էջմիածնի դիւաններում կատարած իր հետազօտութիւնների մասին, որ իբր թէ Իրակլի թագաւորի եւ Սիմէօն, Ղուկաս կաթողիկոսների միջեւ փոխանակուած գրագրութիւնից պարզուում է, որ կնոջ մահից յետոյ, 1768 թ-ին, Իրակլ թագաւորն իր սիրած սազանդար Սայեաթ-Նովային եպիսկոպոս ձեռնադրել տալով, նշանակում է թեմական-առաջնորդ Հախպատում։ Այդ շրջանումն էլ պարզը, ըստ Թումանեանի, հակառակ իր ունեցած բարձր կոչման, ցոփ կեանք է վարում, բայց ժամանակի հոգևոր իշխանութեան պատժից զերծ մնում, որովհետև նա վայելում է թէ վրաց Իրակլի թագաւորի, թէ թագաժառանգ Գէորգի և թէ Վրաստանի արքունի ազնուականութեան ջերմ պաշտպանութիւնը։ Նկատենք նոյնպէս, որ Թումանեանի այս անհիմն «տեսութիւնները» կրկնեցին նաև 1916 թ. ռուս բանաստեղծ Վալերի Բրիւսովը, 1918 թ. Գրիշաշվիլին և 1926 թ. Լէօն։ Սակայն բանասիրական լուրջ գրականութիւնը միանգամայն հերքեց Թումանեանի

«գիւաը», ապացուցելով՝

1) Որ Թումանեանի նշած էջմիածնի գիւան կոչուածն իրապէս Գիւտ քննյ. Ազանեանի «Դիւան հայոց պատմութեան» 3.6-ը դ հատորներն են։

2) Որ Ղուկաս կաթողիկոսի Իրակլի թագաւորի հետ փոխանակուած գրագրութեան մէջ յիշատակուող հոգևորականը ոչ թէ Սայեաթ-Նովան է, այլ Դաւիթ եպիսկոպոս Ղարդաանեանը։

3) Որ Սայեաթ-Նովան ինքն իր վրացերէն երգերում իրեն անուանում է միշտ վարդապետ և ոչ երբէք եպիսկոպոս։

4) «Լուսաբար» կոչումը, որ աշուղը յիշատակում է իր մի երգում և Թումանեանը հիմք ընդունում, վանական կեանքում համեստ մի պաշտօն է։

Էլ կանդ չենք առնում Սայեաթ-Նովայի կենսագրական տուեալների, ծննդեան թուականի, դեպանութեան, աշուղ չլինելու և այլ էական կէտերի վրայ, որոնք պ. Աբրահամեանի գրքում կամ թերի են լուսաբանուած, կամ պակասում են և կամ աղաւաղուած են, երևոյթներ, որոնք նսեմացնում են նրա գրքի բանասիրական և գիտական արժէքը։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թեհրան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
1—Աշուղը	3
2—Մի՛ջավայրը	5
3—Կեանքը	7
4—Արտաքինը և բնաւորութեան գծերը	13
5—Մահը	13
6—Ազդեցութիւններ	14
7—Աշուղի «Դավթարը»	16
8—Երգերի յօրինուածքը	17
9—Երգերը	19
Ա) Սիրոյ երգեր	20
Բ) Ղարիբի երգեր	23
Գ) Կրօնական երգեր	24
Դ) Ծրատական երգեր	26
Ե) Հարսանեկան երգեր	28
Զ) Երգիծական	28
Է) Միւս երգերը՝ 1. Այլաբանական, 2. Մատանու երգը	30
Ը) Թրքերէն երգերը	31
10—Դասակարգերը	34
11—Իրբև խաների աշուղ	35
12—Լեզուն և ոճը	35
13—Տաղաչափական արուեստը	36
14—Աշուղի յօրինած եղանակները	38
15—Աշուղի կուլտուրական դերը	39
16—Աշուղ Ցարթուն օղլու երգերը	43—111
17—Բառարան	113

ՀՇՏՈՒՄՆԵՐ

18—Ո՞րն է առաջին հայ աշուղական դպրոցը	124
19—«Սայեաթ-Նովայի տաղերը»	133

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1 – ՍՊԱՀԱՆԻ ՓԷՐԻԱ ԳԱՒԱՌԸ, աղգագրութիւն, պրոֆ. Հրաչ. Աճառեանի առաջաբանով. Նոր-Զուղա, 1919 թ.

2 – ԻԴԷԱԼԻՍՏԸ, պանտոմիմա, Նոր-Զուղա, 1919 թ.

3 – ԱՇՈՒՂ ՅԱՐԹՈՒՆ ՕՂԼԻ, Ա.—Նոր-Զուղա, 1920 թ.

4 – ՊԱՐՍԿԱՀԱՑ ԱՇՈՒՂՆԵՐ, Բ.—Ամիր օղլի, Ղուլ Էգազ և Արդին օղլի. Նոր-Զուղա, 1920 թ.

5 – ՊԱՐՍԿԱՀԱՑ ԱՇՈՒՂՆԵՐ, Գ.—Բաղէր օղլի, Ղուլ Արզունի, Ղուլ Սարգիս Շրիշկանցի և Միսկին Ստեփան, Նոր-Զուղա, 1921 թ.

6 – ՋԱՐՄԱՀԱԼԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԸ, Հ. Ներսէս Ակինեանի առաջաբանով, Վիեննա, 1923 թ.

7 – ՊԱՐՍԿԱՀԱՑ ՆՈՐԱԳՈՅՆ ԱՇՈՒՂՆԵՐ, – Միսկին Մատթէոս, աշուղ Ալլահվէրդի, Մարտիրոս Մանուկեան, Միսկին Ստեփան, Վիեննա, 1925 թ.

8 – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱԼՄԱՆԱԽԸ, Արտաշէս Կարինեանի առաջաբանով, 1926 թ., Պարիզ.

9 – ՍԵՒԱՆ, «Հայ Նորագոյն կոմպոզիտորներ», 1927 թ., Մ. Ղազար-Վենետիկ.

10 – «ԱՐԻԵՍՏ», Նկարչական և երաժշտական պատկերազարդ երկամսեայ թերթ, 1927 թ., Երևան.

11 – ՆԿԱՐԻՉ ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆԵԱՆ, 1927 թ., Երևան.

12 – ԱՇՈՒՂ ՂՈՒԼ ՅՈՎՀԱՆՆԷՍ, 1929 թ., Վենետիկ.

13 – ՊԱՐՍԿԱՀԱՑ ԱՇՈՒՂՆԵՐ, – Աշուղ Ամիր օղլի, Վենետիկ – Մ. Ղազար, 1930.

14 – ՊԱՐՍԿԱՀԱՑ ԱՇՈՒՂՆԵՐ, – «Վերածնունդ» ի մատենաշար, 1930, Թեհրան.

15 – ՓՇՐԱՆՔՆԵՐ ՋՈՒՂԱՀԱՑ ԵՒ ՀՆԴԿԱՀԱՑ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆՔ, Վիեննա, 1931 թ.

16 – ՌՈՒՍԱՀԱՑ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, սկզբից մինչև 70-ական թուականը (Թիֆլիսի պետական հայ թատրոնի արտիստների առաջաբանով), Վենետիկ – Մ. Ղազար, 1933 թ.

17 – ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԹԷՕՆՆԵՐՈՒՄ, հրատ. «Հանդէս Ամսօրեայ»-ի, 1941 թ., Վիեննա.

18 – «ԵԱԼԱԼԻ», – Նոր-Զուղայի ժողովրդական պարերգը, Վիեննա, 1941 թ.

19 – ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ 17-ՐԴ ԴԱՐԻ ՈՐՄԱՆԿԱՐՁԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ, Գերշ. Տ. Գարեգին Արքեպ. Յովսէփեանի առաջաբանով, Նիւ-Եորկ, 1944 թ.

20 – ԷՋԵՐ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՈՐՄԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆԻՑ, Արշակ Զօպանեանի առաջաբանով, 1945 թ., Պարիզ.

21 – ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՊՕԼՍԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ, 1946 թ., Նոր-Զուղա.

II
27405

ԳԻՆՆ Է 40 ՌԻԱԼ

Ստանալու համար դիմել Հրատարակչին, հետևեալ հասցէով.—

Caro Ashoughian, c/o A. I. O. C. Ltd.

Central Stores, Bawarda

ABADAN

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
22002740 5

ЦЕНА
405